



Ժամանակակից

ԵՎՐԱՍԻԱ



IV(1)  
2015

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# **CONTEMPORARY EURASIA**

**TURKEY-IRAN  
INTERNAL AND FOREIGN POLICY:  
CHALLENGES AND PROSPECTS**

EDITED BY RUBEN SAFRASTYAN

**VOLUME IV (1)**

YEREVAN 2015

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

ТУРЦИЯ-ИРАН  
ВНУТРЕННЯЯ И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА:  
ВЫЗОВЫ И ПЕРСПЕКТИВЫ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

ТОМ IV (1)

ЕРЕВАН 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԹՈՒՐՔԻԱ-ԻՐԱՆ  
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.  
ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐՆԵՐ ԵՎ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՏՈՐ IV (1)

ԵՐԵՎԱՆ 2015

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԱԲԳԻՐ**

**Ռուբեն Սաֆրաստյան**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

**ԽՄԱԲԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Լիլիթ Հարությունյան**, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ  
գիտաշխատող

**Գոհար Իսկանդարյան**, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ  
գիտաշխատող

**Վահրամ Տեր-Մաթևոսյան**, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ  
գիտաշխատող

**Լևոն Հովսեփյան**, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող

**Նազելի Նավասարդյան**, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ գիտաշխատող  
(հատորի պատասխանատու)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի այս հատորն ընդգրկում է Թուրքիայի և Իրանի ներքաղաքական և արտաքին քաղաքականության հիմնախնդիրներին և գործընթացներին նվիրված վերլուծական ուսումնասիրություններ: Հեղինակների ուշադրության կենտրոնում են Թուրքիայի 2014 թ. ՏԻՄ ընտրությունները, թուրքական բանակի մարտունակության և իշխող ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության կազմակերպման հիմնախնդիրները: Ներառված են նաև Չինաստան-Թուրքիա, ՌԴ-ԻԻՀ հարաբերությունների դինամիկային, ինչպես նաև ԻԻՀ-ՀՀ մշակութային առնչություններին նվիրված հոդվածներ:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

**EDITOR IN CHIEF**

Ruben Safrastyan, Academician of NAS RA

**EDITORIAL BOARD:**

Lilit Harutyunyan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA

Gohar Iskandaryan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA

Vahram Ter-Matevosyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA

Levon Hovsepyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA

Nazeli Navasardyan, PhD, Research Fellow IOS NAS RA, Responsible for the Volume

The current volume of the "Contemporary Eurasia" includes analysis of the key issues and the ongoing political processes of Turkey and Iran internal and foreign policies. The articles deal with Turkey's 2014 local elections, Army, as well as, the foreign policy programs of the ruling party issues.

The volume contains articles on the dynamics of Sino-Turkish, Russian-Iranian and Armenian-Iranian relations.

The volume may be of interest for scholars, experts of politology and students.



**ГЛАВНЫЙ РЕДАКТОР**

**Рубен Сафрастян**, академик НАН РА

**РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Лилит Арутюнян**, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА

**Гоар Искандарян**, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА

**Ваграм Тер-Матевосян**, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА

**Левон Овсепян**, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА

**Назели Навасардян**, к. и. н., научный сотрудник ИВ НАН РА,  
(ответственная за выпуск)

Том IV (I) периодического сборника "Современная Евразия" посвящен анализу внутриполитических и внешнеполитических проблем Турции и Ирана. В статьях рассматриваются вопросы выборов местного самоуправления 2014 г. в Турции, боеспособности турецкой армии и особенности внешнеполитических программ ПСР. В центре внимания авторов статей вопросы динамики развития китайско-турецких, российско-иранских и армяно-иранских отношений.

Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся Ближневосточным регионом.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2014 թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ. ԸՆՏՐԱՐՇԱԿԻ ԵՎ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....10

**ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**ԱՐՇՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԹՈՒՐԻՔԻԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ.  
ՄԱՐՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԿԵՐԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....29

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՉԻՆ-ԹՈՒՐԻՔԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՎՁՄԱԿԱՐԱ-  
ԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒ-  
ԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....49

**ԱՆԴՐԱՆԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**

ՆԵՌՈՍՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԾՐԱԳԵՐՐՈՒՄ .....67

**ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

ՈՂ-ԻԻՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .78

**ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(1991-2013 թթ.) .....96

## CONTENTS

<b>VAHRAM TER-MATEVOSYAN</b> TURKEY'S 2014 LOCAL ELECTIONS: FEATURES OF THE ELECTION CAMPAIGN AND RESULTS .....	10
<b>LEVON HOVSEPYAN</b> <b>ARTSRUN HOYHANNISYAN</b> THE ISSUE OF TURKISH ARMY'S COMBAT READINESS: ANALYSIS OF COMBAT EXPERIENCE .....	29
<b>AGHAVNI HARUTYUNYAN</b> THE FEATURES OF SINO-TURKISH STRATEGIC, POLITICAL AND ECONOMIC COOPERATION .....	49
<b>ANDRANIK ISRAELYAN</b> THE NEO-OTTOMANISM IN THE FOREIGN POLICY PROGRAMS OF THE JUSTICE AND DEVELOPMENT PARTY .....	67
<b>NAZELI NAVASARDYAN</b> RUSSIAN-IRANIAN RELATIONS IN THE CONTEXT PROCESS OF THE IRAN'S NUCLEAR PROGRAM NEGOTIATION .....	78
<b>GOHAR ISKANDARYAN</b> ARMENIA-IRAN RELATIONS IN THE CULTURAL SPHERE (1991-2013) .....	96

## СОДЕРЖАНИЕ

<b>ВАГРАМ ТЕР-МАТЕВОСЯН</b> МЕСТНЫЕ ВЫБОРЫ В ТУРЦИИ 2014 Г.: ОСОБЕННОСТИ ПРЕДВЫБОРНОЙ КАМПАНИИ И РЕЗУЛЬТАТОВ .....	10
<b>ЛЕВОН ОВСЕПЯН , АРЦРУН ОГАНЕСЯН</b> ПРОБЛЕМА БОЕСПОСОБНОСТИ ТУРЕЦКОЙ АРМИИ: АНАЛИЗ БОЕВОГО ОПЫТА .....	29
<b>АГАВНИ АРУТЮНЯН</b> ОСОБЕННОСТИ КИТАЙСКО-ТУРЕЦКОГО СТРАТЕГИЧЕСКОГО, ПОЛИТИЧЕСКОГО И ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА	49
<b>АНДРАНИК ИСРАЕЛЯН</b> НЕООСМАНИЗМ ВО ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ ПРОГРАММАХ ПАРТИИ СПРАВЕДЛИВОСТИ И РАЗВИТИЯ .....	67
<b>НАЗЕЛИ НАВАСАРДЯН</b> РОССИЙСКО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ ПЕРЕГОВОРНОГО ПРОЦЕССА ПО ИРАНСКОЙ ЯДЕРНОЙ ПРОГРАММЕ .....	78
<b>ГОАР ИСКАНДАРЯН</b> АРМЕНИЯ-ИРАН: ОТНОШЕНИЯ В СФЕРЕ КУЛЬТУРЫ (1991- 2013) .....	96

## ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱԼ

**2014 Թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ:  
ԸՆՏՐԱՐՇԱՎԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2014-2015 թթ. ընթացքում Թուրքիայում տեղի ունեցան չորս համապետական ընտրություններ, որն աննախադեպ էր Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում: Ընտրությունների շարքը սկսվեց 2014 թ. մարտի 30-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններով, որին հաջորդեցին օգոստոսի 10-ին տեղի ունեցած նախագահական, իսկ 2015 թ. անցկացված երկու խորհրդարանական ընտրությունները, առաջինը՝ հունիսի 7-ին, և երկրորդը՝ արտահերթը՝ նոյեմբերի 1-ին: Հետևաբար, վերջին երեք ընտրություններում արձանագրված արդյունքների հիմնական պատճառները հասկանալու համար այս հոդվածում կանոնադառնանք ՏԻՄ ընտրություններին, այդ ընտրաբաշխի առանձնահատկություններին և արդյունքներին:

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ  
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Թուրքիայի սահմանադրության 127-րդ հոդվածը կարգավորում է տեղական ինքնակառավարման համակարգի կառուցվածքը և գործունեությունը: Կենտրոնական իշխանությունը Թուրքիայում բավական մեծ լծակներ ունի տեղական ինքնակառավարման համակարգի նկատմամբ: Տեղական իշխանությունների լիազորությունների ընդլայնման ուղղությամբ վերջին 10 տարիների ընթացքում կատարվել են սահմանադրական և օրենսդրական մի շարք բարեփոխումներ և փոփոխություններ, սակայն քաղաքական և քյուրուկրատական առումներով Թուր-

քիան շարունակում է մնալ Եվրախորհրդի ամենակենտրոնացված կառավարում ունեցող երկրներից մեկը:

Նույն հոդվածով է նաև սահմանվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների պարբերականությունը՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ: 2014 թ. մարտի 30-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները տասնութերորդն էին 1923 թ. ի վեր: 1982 թ. նոյեմբերին գործող սահմանադրության ընդունումից հետո առաջին ՏԻՄ ընտրություններն անցկացվեցին 1984 թ., և մինչև այժմ անցկացվել են 7 նման ընտրություններ (1984, 1989, 1994, 1999, 2004, 2009 և 2014 թթ.): Ի դեպ, եթե բացառությամբ 1983 և 2011 թթ., բոլոր խորհրդարանական ընտրությունները եղել են արտահերթ, ապա ՏԻՄ բոլոր ընտրություններն անցկացվել են հերթական կարգով և մարտ ամսին:

2014 թ. մարտի 30-ին Թուրքիայի 81 նահանգներում և ավելի քան 967 շրջաններում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: ՏԻՄ ընտրական համակարգն ունի որոշակի կառուցվածքային առանձնահատկություններ՝ կախված նահանգի, քաղաքի, շրջանի, գյուղի և թաղամասի կարգավիճակից: Այս գործոններով է պայմանավորված, թե ընտրող քանի քվեաթերթիկ է ստանում՝ 3, 5, թե՛ 6: Օրինակ, 81 նահանգներից 30-ը, որոնք ունեն 750.000-ից ավելի բնակչություն, ղեկավարվում են նահանգային քաղաքապետարանների կողմից (binyükşehir belediye): Այդ 30-ի մեջ մտնող Ստամբուլի նահանգային քաղաքապետարանին պատկանող Շիշլիի շրջանի Դուաթեփե թաղամասի բնակիչը քվեարկության օրը ստանում է վեց հատ քվեաթերթիկ՝ ընտրելու համար՝ ա/ Ստամբուլի քաղաքապետին, բ/ Շիշլիի շրջանային ղեկավարին, գ/ Դուաթեփեի թաղապետին, դ/ Ստամբուլի քաղաքային խորհրդի անդամին, ե/ Շիշլիի շրջանային խորհրդի անդամին և զ/ Դուաթեփեի ավագանու անդամին: Իսկ, օրինակ, Թունջեյի նահանգի Նազիմիե շրջանի Բույուքյուլթ գյուղի բնակիչը քվեարկության օրը ստանում է երեք քվեաթերթիկ՝ ընտրելու համար՝ ա/ Թունջեյի նահանգային խորհրդի անդամին, բ/ Բույուքյուլթի գյուղապետին և գ/ Բույուքյուլթի ավագանու անդամին: Իսկ Նազիմիե շրջանի բնակիչը քվեարկության օրը ստանում է 5 քվեաթերթիկ՝ ընտրելու համար՝ ա/ Թունջեյի նահանգային խորհրդի անդամին, բ/ Նազիմիեի շրջանային ղեկավարին, գ/ Նազիմիեի քաղաքային խորհրդի անդամին, դ/ սլավ բնակչի բնակության վայ-



րի թուրքալեռին և ն/՝ ավազանու անդամին: Այսպիսով, հիմնական ընտրությունը կատարվում է 30-ի նահանգային թուրքալեռների (նահանգալեռների), շրջանային ղեկավարների թուրքալեռների և խորհուրդների համար: Այս հանգանակներով են պայմանավորված ընտրարշավի առանձնահատկությունները<sup>1</sup>: Օրինակ, մարտի 30-ի ընտրություններում ԱՁԿ-ի ստացադրած թեկնածուներին հաջողվեց հաղթել 30 նահանգային քաղաքապետարաններից 18-ում, 32 քաղաքներում և 555 շրջաններում<sup>2</sup>: Այսպիսով, ըմբռնելու համար, թե այս կամ այն կուսակցությունը ինչ հաջողություն է արձանագրել ՏԻՄ ընտրություններում, հարկ է համադրել երեք մակարդակներում ստացած քվեների արդյունքները:

ՏԻՄ ընտրություններում թվային և խորհրդանշական առումներով մշտապես սուր պայքար է ընթացել մեծ քաղաքներում՝ Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում, Ադանայում, Անթալիայում, Դիարբեքիրում և Վանում: ՏԻՄ ընտրությունների համար հատկապես երեք մեծ քաղաքներում՝ Ստամբուլում, Անկարայում և Իզմիրում, գրանցված էին 14 մլն ընտրողներ: Այս երեք քաղաքներն ունեն առանցքային նշանակություն քաղաքական համակարգում ուժերի տեղաբաշխման առումներով, քանի որ այս երեք քաղաքներում են ապրում Թուրքիայի ամբողջ բնակչության 30 տոկոսից ավելին: Հատկապես մեծ ազդեցություն ունի Ստամբուլի քաղաքապետը, որն իր ունեցած քաղաքական կշիռով և ազդեցության լծակներով ունակ է նախաձեռնելու խորքային քաղաքական գործընթացներ և հավակնելու քաղաքական լուրջ դերակատարության: Թուրքիայի գործող վարչապետ Էրդողանի քաղաքական բեմերը սկսվեց 1994 թ. մարտին, երբ նա ընտրվեց Ստամբուլի քաղաքապետ և այն ղեկավարեց մինչև իր ազատազրկումը 1999 թ.: Ընդդիմադիր ՀԺԿ-ի ղեկավար Քեմալ Քըլըչդարոլուն ևս հանրությանը հայտնի դարձավ 2009 թ. ՏԻՄ ընտրություններում, երբ ՀԺԿ-ն իր թեկնածուներն էր առաջադրել Ստամբուլի քաղաքապետի պաշտոնում: Այդ ընտրություններում նա ստացավ քավակյան տպավորիչ 36,9 տոկոս քվե, որը 8 տոկոսով էր նվազ Ստամբուլի երկարամյա քաղաքապետ Քադիր Թուրքաշի

օգտին տրված քվեներից: Դա արդեն լուրջ հավակնություն էր և դրա շնորհիվ էր, որ 2010 թ. մայիսյան սկանդալային տեսաերկզի թողարկումից հետո ՀԺԿ առաջնորդ Դենիզ Բայքալը հրաժարական տվեց, իսկ Քըլըչդարոլուն դարձավ կուսակցության ղեկավար: Անցած ընտրություններում Ք. Թուրքաշը երրորդ անգամ վերընտրվեց Ստամբուլի քաղաքապետի պաշտոնում:

ԱՁԿ-ի երկարակյաց ու հաջողակ քաղաքապետներից մեկը՝ Մելիհ Գյոքչեքը, որն արդեն 20 տարի ղեկավարում է Անկարան, անցած ընտրություններում ևս մեկ անգամ հաղթեց՝ արդեն հինգերորդ անգամ վերընտրվելով Անկարայի քաղաքապետի պաշտոնում: Այդուհանդերձ, Իզմիրը երբեք չի եղել իսլամամետ ուժերի հսկողության ներքո, թեև ԱՁԿ-ն մշտապես ձգտել է հաստատվել Իզմիրում: 1994 թ. ի վեր Անկարան և Ստամբուլը ղեկավարել են իսլամամետ քաղաքական ուժերի ներկայացուցիչները, որոնք եղել են նախ՝ «Բարօրություն», ապա՝ «Առաքինություն», այնուհետ՝ «Արդարություն և զարգացում» կուսակցությունների անդամներ:

Այսպիսով, խոսելով Ստամբուլում և Թուրքիայի մի շարք քաղաքներում ԱՁԿ-ի ընտրական հաջողությունների մասին, պետք է փաստենք, որ իրականում ԱՁԿ-ի անդամ քաղաքապետների գործունեության սկիզբ պետք է համարել ոչ թե 2002 թ., երբ ԱՁԿ-ն եկավ իշխանության, այլ առնվազն 1994 թ., երբ մի շարք քաղաքապետարաններ և համայնքապետարաններ անցան իսլամամետ կուսակցությունների հսկողության տակ<sup>3</sup>:

Ուշագրավ է, որ ՏԻՄ ընտրությունների օրը քվեարկության համար գործում էին տարբեր ժամանակային հատվածներ՝ կախված համայնքի աշխարհագրական դիրքից: Թուրքիայի արևելյան նահանգներում քվեարկությունը սկսվեց առավոտյան 7-ին և ավարտվեց 16.00-ին, իսկ արևմտյան նահանգներում սկսվեց և առավոտյան 8-ին և ավարտվեց 17:00-ին:

**ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարտի 30-ի ընտրություններին զրանցված էին 52,6 մլն ընտրողներ, որը նախկին՝ 2009 թ. ընտրողներից ավելի էր 2

<sup>1</sup> New ballot-counting method to be used in polls, <http://www.hurriyetdailynews.com/new-ballot-counting-method-to-be-used-in-polls.aspx?pageID=238&nID=64277&NewsCatID=338>  
<sup>2</sup> 2014 yerel seçim sonuçları, <http://secim.haberler.com/2014/>

<sup>3</sup> Վ. Տեր-Մաթևոսյան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, եր., «Իմուշ», 2008, էջ 126-128:

մյն-ով, իսկ մասնակցությունը կազմեց 88 տոկոս: ՏԻՄ ընտրություններին մասնակցում էր 26 կուսակցություն<sup>4</sup>:

1. DEMOKRATİK SOL PARTİ - Ձախ ժողովրդավարական կուսակցություն
2. DOĞRU YOL PARTİSİ - Ճշմարիտ ուղի կուսակցություն
3. TOPLUMSAL UZLAŞMA REFORM VE KALKINMA PARTİSİ - Հասարակության հաշտեցման, բարեփոխումների և զարգացման կուսակցություն
4. HALKIN KURTULUŞ PARTİSİ - Ժողովրդի ազատագրության կուսակցություն
5. BÜYÜK BİRLİK PARTİSİ - Մեծ միասնության կուսակցություն
6. ADALET VE KALKINMA PARTİSİ - Արդարություն և զարգացում կուսակցություն (ԱԶԿ)
7. YURT PARTİSİ - Հայրենիք կուսակցություն
8. DEMOKRAT PARTİ - Ժողովրդավար կուսակցություն
9. MİLLET PARTİSİ - Ազգ կուսակցություն
10. SAADET PARTİSİ - Երջանկություն կուսակցություն
11. HAK VE ÖZGÜRLÜKLER PARTİSİ - Իրավունքների և ազատությունների կուսակցություն
12. LIBERAL DEMOKRAT PARTİ - Լիբերալ ժողովրդավար կուսակցություն
13. BAĞIMSIZ TÜRKİYE PARTİSİ - Ինքնիշխան Թուրքիա կուսակցություն
14. HALKLARIN DEMOKRATİK PARTİSİ - Ժողովուրդների դեմոկրատական կուսակցություն (ԺԴԿ)
15. CUMHURİYET HALK PARTİSİ - Հանրապետական ժողովրդավարական կուսակցություն (ՀԺԿ)
16. HAK VE EŞİTLİK PARTİSİ - Իրավունքների և հավասարության կուսակցություն
17. MİLLİYETÇİ HAREKET PARTİSİ - Ազգայնական շարժում կուսակցություն (ԱՇԿ)
18. İŞÇİ PARTİSİ - Աշխատանքային կուսակցություն
19. HÜR DAVA PARTİSİ - Արդար դատի կուսակցություն
20. BARIŞ VE DEMOKRASİ PARTİSİ - Խաղաղության և ժողովրդավարության կուսակցություն (ԽԺԿ)

21. TÜRKİYE KOMÜNİST PARTİSİ - Թուրքիայի կոմունիստական կուսակցություն
22. ALTERNATİF PARTİ - Ալլընտրանքի կուսակցություն
23. TÜRK PARTİ - Թուրքի կուսակցություն
24. GENÇ PARTİ - Երիտասարդ կուսակցություն
25. MUHAFAZAKAR YÜKSELİŞ PARTİSİ - Պահպանողականության վերելքի կուսակցություն
26. EMEK PARTİSİ - Աշխատանքի կուսակցություն

Ինչպես և ակնկալվում էր, հիմնական պայքարն ընթացավ խորհրդարանում ներկայացված կուսակցությունների միջև՝ ԱԶԿ, ՀԺԿ, ԱՇԿ, ԺԿԿ և ԽԺԿ: Մինչ այդ ԱԶԿ-ի կառավարման 11,5 տարիների ընթացքում տեղի էին ունեցել 3 խորհրդարանական և 2 տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, ինչպես նաև 2 սահմանադրական հանրաքվեներ, և այդ բոլոր 7 համապետական քվեարկությունների ընթացքում էլ Էրդողանի կուսակցությունը հաղթանակ էր տոնել: Այդուհանդերձ, եթե խորհրդարանական ընտրությունից ընտրություն ստացած քվեներն ավելացել են, ապա վերջին 2 ՏԻՄ ընտրությունների ժամանակ ստացած քվեների բացասական հաշվեկշիռը նվազել էր ավելի քան 3 տոկոսով: Մինչդեռ, վերջին՝ մարտի 30-ին տեղի ունեցած ընտրություններում ԱԶԿ-ն արձանագրեց նախորդ երկու ՏԻՄ ընտրությունների արդյունքները գերազանցող ցուցանիշներ:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ԱԶԿ-ի կառավարման տարիներին տեղի ունեցած երեք ՏԻՄ ընտրությունների (2004, 2009, 2014) արդյունքները:

<sup>4</sup> Nearly 53 million vote at Turkey's 194,000 polling stations, [http://www.todayszaman.com/national\\_nearly-53-million-vote-at-turkeys-194000-polling-stations\\_343348.html](http://www.todayszaman.com/national_nearly-53-million-vote-at-turkeys-194000-polling-stations_343348.html)



**Աղյուսակ 1**

Կուսակ- ցություն	Քվեներ մին			Քվեներ տոկոսներով			Հաղթանակած քաղաքապետա- րանների և շրջանների թիվը			Հաղթանակած Նահանգային քաղաքապետա- րանների թիվը		
	2004	2009	2014	2004	2009	2014	2004	2009	2014	2004	2009	2014
ԱԶԿ	13.4	15.2	20.1	41.6	38.3	45	1753	1404		12	10	18
ՀԺԿ	5.9	9.2	12.3	18.2	23.0	27.9	469	499		2	3	6
ԱԸԿ	3.4	6.4	6.7	10.4	16.0	15.2	247	475		0	1	3
ԽԺԿ	Ա/Հ	2.3	2.7	Ա/Հ	5.70	6.3	Ա/Հ	96		Ա/Հ	1	3
ԱՅԼՔ	10.5	7.8		-	-		732	382		2	1	

Ուշագրավ է, որ ՏԻՄ ընտրություններում գրանցված ար-  
դյունքներն ամենևին էլ չեն նշանակում, որ դրանց հաջորդող  
խորհրդարանական ընտրություններում կուսակցությունների  
ստացած քվեները պետք է արտացոլեին արձանագրված տար-  
բերությունների դինամիկան: Այլ կերպ, եթե ԱԶԿ-ն 2009 թ.  
ՏԻՄ ընտրություններում 2004 թ. համեմատ ստացել էր նվազ  
քվեներ, ամենևին էլ չէր նշանակում, որ հաջորդ՝ 27 ամիս անց  
տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում պետք է  
ստանար նույնչափ կամ դրանից քիչ տարբերվող քվեներ:

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2009 թվականի ՏԻՄ և  
2011 թվականի խորհրդարանական ընտրությունների ար-  
դյունքները՝ թե՛ ստացած քվեների, թե՛ հաղթանակած քաղա-  
քապետարանների առումներով:

**Աղյուսակ 2**

Կուսակ- ցություն	Քվեներ մին		Քվեներ տոկոսներով		Հաղթանակած քաղաքապետա- րանների թիվը 2009		Հաղթանակած քաղաքապետարան- ների թիվը 2011	
	2009	2011	2009	2011	Թիվը	Տոկոս- ային	Թիվը	տոկոսային
ԱԶԿ	15.2	21.4	38.39	49.83	1404	49.2	327	59.5
ՀԺԿ	9.2	11.1	23.08	25.98	499	17.5	135	24.5
ԱԸԿ	6.4	5.6	16.01	13.01	475	16.5	53	9.3
ԽԺԿ	2.3	2.8	5.73	6.57	96	3.4	35	6.7
ԱՅԼՔ	7.8	2.0	16.76	4.61	382	13.4	0	0

Աղյուսակ 2-ում բերված տվյալների ուսումնասիրությունը  
ցույց է տալիս, որ երկու տարի անց ԱԶԿ-ին հաջողվեց քվե-  
ների թիվն ավելացնել մեկ երրորդով, որը բավական աննա-  
խադեպ երևույթ էր Թուրքիայի քաղաքական համակարգում:

Աղյուսակ 3-ում ներկայացված են մարտի 30-ի արդյունք-  
ները՝ ըստ վարչատարածքային միավորի:

**Աղյուսակ 3**

Կուսակցություն- ներ	Նահանգային քաղաքապետա- րաններ Ընդամենը՝ 30	Քաղաքապետա- րաններ Ընդամենը՝ 51	Շրջաններ Ընդամենը՝ 900
ԱԶԿ	18	32	556
ՀԺԿ	6	7	161
ԱԸԿ	3	5	107
ԽԺԿ	3	7	67
ԵԿ	0	0	8

**2014 Թ. ԸՆՏՐԱՐՔԱՎԻ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Այս ընտրություններն այցի ընկան մի շարք ակնհայտ  
առանձնահատկություններով: Հասարակության մի հատվածի  
մոտ առկա էր ընդգծված դժգոհություն Էրդողանի և հատ-  
կապես վերջին 10 ամիսների ընթացքում նրա կայացրած  
որոշումների և քաղաքական վարքագծի նկատմամբ: 2013 թ.  
հունիսից ի վեր Թուրքիան պարբերաբար համաշխարհային  
տեղեկատվական գլխագրերում էր՝ կապված տարաբնույթ  
գործընթացների հետ (Գեզի այգում տեղի ունեցած դեպքերը և  
համաթուրքական բողոքի ցույցերը 2013 թ. ամռանը, 2013 թ.  
դեկտեմբեր և 2014 թ. փետրվար ամիսներին տեղի ունեցած  
սկանդալային դեպքերը «Մեծ կաշառք» գործի շրջանակնե-  
րում), ու այս ամենն ստեղծել էր տպավորություն, որ գալիք  
ՏԻՄ ընտրություններում ԱԶԿ-ն պարտություն կկրեր: Իրակա-  
նում գնահատականները բավական մակերեսային էին. 2007  
թ. հուլիսյան արտահերթ խորհրդարանական ընտրություննե-  
րին նախորդող և 2008 թ. Մարտից հուլիս ընկածամիսներին  
տեղի ունեցած գործընթացներն ԱԶԿ-ի համար պարունակում  
էին ոչ պակաս վտանգավոր մարտահրավերներ: Այս անգամ  
Էրդողանի կուսակցությունը խոցելի էին դարձրել մի քանի

գործոններ, որոնցից հարկ էր առանձնացնել հետևյալները՝ ա) թեև լրատվական դաշտը գրեթե ամբողջությամբ վերահսկվում էր ԱԶԿ-ին մոտ կանգնած բիզնես հոլդինգների կողմից, սակայն կային լրատվամիջոցներ, օրինակ՝ գյուլենական շարժմանը պատկանող, որոնք բացեքիսաց հակադրվում էին էրդոզանի գրաքննությանը և վերահսկողությանը, բ) ԱԶԿ-ի շարքերը լքած մի շարք քաղաքական գործիչներ էապես ազդել են կուսակցության միասնականության վրա, գ) թեև համացանցի վրա տարածվել էին նոր սահմանափակումներ, սակայն տեղադրված նոր ծայնագրությունները նորանոր փաստեր են բացահայտում ԱԶԿ-ի դեկավար կազմի և նրանց ընտանիքների վերաբերյալ՝ էապես վնասելով ԱԶԿ-ի հեղինակությանը, դ) Twitter սոցիալական միկրոբլոգի և Youtube-ի օգտագործման վրա դրված արգելքները բացասաբար ազդեցին ԱԶԿ-ի հեղինակության վրա և բացասական արձագանքի արժանացան ընդդիմության, ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից, ե) թերևս ամենակարևոր գործոնն էրդոզանի և Գյուլենի միջև սկսված հակամարտությունն էր և վերջինիս աջակցության բացակայությունը: Թվում էր՝ այս գործոնները և մի շարք այլ հարակից հանգամանքներ անպայմանորեն պետք է ազդեին ընտրությունների արդյունքների վրա, ավելյին՝ կային կարծիքներ, որ էրդոզանի կուսակցությունն ընտրություններում կպարտվեր: Իրականում, սակայն, հարկ է անդրադառնալ այն հիմնական ընդդիմադիր կուսակցություններին, որոնք կարող էին մարտահրավեր նետել ԱԶԿ-ին: Գլխավոր մրցակիցներ ՀԺԿ-ն և ԱԸԿ-ն չէին ներկայացրում այն այլընտրանքը, որով կկարողանային իրապես մարտահրավեր նետել ԱԶԿ-ին: Թեև հարկ է փաստել, որ 2010 թվականից ի վեր ԱԶԿ-ի հիմնական հակառակորդը՝ ՀԺԿ-ն, քաղաքական մի շարք առանցքային հարցերի կապակցությամբ դարձել էր առավել հանդուրժող, և, որ ամենակարևորն է, ՀԺԿ-ն վայելում էր գյուլենականների աջակցությունը, մի երևույթ, որը դժվար էր պատկերացնել տարիներ առաջ: Այսպիսով, 2009 թ. ՏԻՄ (23 %) և 2011 թ. խորհրդարանական ընտրություններում ստացած քվեների (25.92 %) համեմատ ՀԺԿ-ն ոչ էապես, սակայն տեսանելիորեն ավելացրեց իր քվեները՝ ստանալով 12,3 մլն քվե (27.9 %): Գրանցված արդյունքն ուշադրավ է նաև այն առումով, որ անգամ Գյուլեն-Քըլըչ-դարողլու չհայտարարված դաշինքի պայմաններում ՀԺԿ-ին չհաջողվեց հաղթահարել 30 %-ի սահմանափոխ:

Մարտի 30-ի ՏԻՄ ընտրություններին Թուրքիայում գործող քաղաքական ուժերը վճռական էին տրամադրված: Ընդդիմադիրները հասկանալիորեն փորձում են անել հնարավորինը իշխող կուսակցության դիրքերը սասանելու, իսկ որոշ շրջաններում նախկինում գրանցված հաջողությունները զարգացնելու նպատակով: Իր հերթին՝ իշխող քաղաքական ուժը փորձում էր չվավազեցնել նշածողը՝ ակնկալելով կրկնել 2009 թ. հաջողությունը՝ ստանալով մոտ 39 % քվե: Ընտրարշավի ընթացքում թեև էրդոզանն ակնարկում էր նախկին հաջողության կրկնություն, սակայն եթե անգամ ԱԶԿ-ի ստացած քվեները տատանվեին 35-40 %-ի միջակայքում, ապա այն կրկին էրդոզանը կդիտեր որպես հաջողություն:

Այս ՏԻՄ ընտրարշավը նախորդ ընտրություններից տարբերվում է մի շարք առումներով. նախ, 2013 թ. դեկտեմբերի ու հաջորդող ամիսների ընթացքում տեղի ունեցած աղաղակող բացահայտումները<sup>5</sup>, գաղտնագերծումները ձևավորել էին ընդհանուր օրակարգ, որին էլ փորձում էր հավատարիմ մնալ ընդդիմությունը՝ տեղական նշանակություն ունեցող փոքր խնդիրներից փորձելով թեքվել դեպի համապետական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնք բավական շատ էին վերջին ամիսների ընթացքում: Մինչդեռ, ԱԶԿ-ն փորձում է համարել 2-ը՝ խոսելով համապետական նշանակության խնդիրներից, միևնույն ժամանակ ձգտում էր չհեռանալ տեղական խնդիրներից և կանգ առնել իր կառավարման ընթացքում ունեցած ձեռքբերումների վրա: Ընդդիմությունը փորձում էր զուգահեռներ տանել 1989 թ. ՏԻՄ ընտրությունների հետ, երբ այն, համարելով ջանքերը, կարողացավ պարտության մատնել իշխող «Մայր հայրենիք» կուսակցությանը, որի նախագահ Թ. Օզալը ամիսներ անց առաջադրվեց և ընտրվեց Թուրքիայի նախագահ: Գուցե կային զուգահեռներ, սակայն առկա էր նաև մեծ տարբերություն. ԱԶԿ-ն շատ ավելի մեծ աջակցություն է վայել

<sup>5</sup> Constanze Letsch, Turkish PM: corruption probe part of 'dirty operation' against administration, <http://www.theguardian.com/world/2013/dec/18/turkish-pm-corruption-probe-dirty-operation>, December 18, 2013; Tim Arango and Sebnem Arsu, Graft Inquiry intensifies Turkish Political Rivalry, [http://www.nytimes.com/2013/12/18/world/europe/graft-inquiry-intensifies-turkish-political-rivalry.html?\\_r=0](http://www.nytimes.com/2013/12/18/world/europe/graft-inquiry-intensifies-turkish-political-rivalry.html?_r=0), December 17, 2013; Tim Arango, Corruption Scandal Is Edging Near Turkish Premier, <http://www.nytimes.com/2013/12/26/world/europe/turkish-cabinet-members-resign.html>



լում Թուրքիայում, քան Օզալի կուսակցությունը 25 տարի առաջ:

Ամբողջ ընտրարշավի ընթացքում ԱԶԿ-ն համոզված էր, որ վերջին 20 տարիների ընթացքում մատուցված ծառայությունները, կենսապայմանների բարելավումը, գնողունակության աճը և տնտեսության վերելքը, ենթակառուցվածքների զարգացումը ստեղծել են անհեղքելի լավատեսության հիմքեր՝ ընտրություններում կրկին հաղթելու համար: Էրդողանը և կուսակցության քաղաքականները վստահ էին, որ քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտրազանգվածը կզնահատի ԱԶԿ-ի կատարած աշխատանքը՝ պատշաճ նշանակություն կամ կարևորություն չտալով ժողովրդավարության հարցում առաջացած տեսանելի նահանջին, հասարակության բնեռացմանը, կոռուպցիոն պատմություններին, գաղտնագերծված փաստաթղթերին ու խոսակցություններին, գաղտնալսումներին և տարաբնույթ այլ գործողություններին:

Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ Թուրքիայի քաղաքական մշակույթում և ընտրազանգվածի քաղաքական վարքագծում շարունակում են գերիշխել բավական ինքնատիպ դրսևորումներ: Էրդողանի քարոզարշավը, նրա հայտարարությունների մեծ մասը և ստացած քվեների վերլուծությունը ևս մեկ անգամ հաստատեցին այն պնդումը, որ իր աջակիցների շրջանում նա հավասարապես ընկալվում է թե՛ որպես քաղաքական և թե՛ որպես հոգևոր առաջնորդ: Ընտրությունների արդյունքում ստացած վստահության քվեն ցույց տվեց, որ նրան հաջողվել է Թուրքիայում ստեղծել հանրային մտածելակերպ՝ հիմնված պահպանողական ժողովրդավարության գաղափարախոսության և առաջնորդի նկատմամբ անվերապահ աջակցության տարրերի վրա: Ընտրապայքարի սկզբում աջակցված հանրային կարծիքի հարցումներում նշվում էր հնարավոր 45 %-ի մասին, սակայն ընտրարշավի ընթացքում տեղի ունեցած սկանդալային իրադարձությունները, որոնցում Էրդողանը և նրա աջակիցները կենտրոնական դերերում էին, կասկած չէին թողնում, որ նրան կհաջողվեր հասնել այդ արդյունքին: Թվում էր, որ այդ ամենի արդյունքում նրա հեղինակությունն իրապես կվնասվեր, սակայն իրականում

նում ստացած արդյունքները գերազանցեցին ամենազգուշավոր, ամենալավատեսական և հոռետեսական կանխատեսումները:

Մարտի 30-ի ընտրություններում Էրդողանը ստանալու էր 2 կարևորագույն հարցի պատասխան. արդյո՞ք հասարակությունը գերադասելու է քիչ թե շատ բարեկեցիկ կյանքը, իշխող կուսակցության կողմից համայնքներում արված աշխատանքը և հետևաբար «ներելու» է վերջին տարիների ընթացքում Էրդողանի ավտորիտարիզմը և նրա անվան հետ կապված կոռուպցիոն պատմությունները, թե՛ քվեատուփերի մոտ «հաշվեհարդար» է տեսնելու: Դատելով արդյունքներից՝ նրա աջակիցները կանաչ լույս տվեցին նրան՝ շարունակելու համար այն աշխատանքը, որն արդեն 11 տարի նա իրականացնում էր: Հասկանալի է, որ ընտրություններում ստացած արդյունքը լուրջ հիմք ստեղծեց 2014 թ. օգոստոսին նախատեսված ընտրություններում նախ առաջադրվելու, ապա և հաղթանակի ակնկալիքի համար: Նրա օգտին տրված 45 %-ը կարելի է նաև դիտել որպես հասարակության աջակցություն նրա ապագա քաղաքական ծրագրերին: Այլ կերպ, մարտի 30-ի ՏԻՄ ընտրությունները, որոնք դիտվում էին որպես վստահության հանրաքվե, նա հաջողությամբ անցավ:

## ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Թե՛ իշխող, թե՛ ընդդիմադիր կուսակցությունների կողմից առաջադրվել էին շուրջ երկու տասնյակ հայազգի թեկնածուներ: Ինչպես 2009 թ. ՏԻՄ ընտրություններում, այս անգամ ևս քաղաքական կուսակցությունների առաջադրեցին հայ թեկնածուների՝ փորձելով լուծել առնվազն երկու խնդիր. նախևառաջ, Ստամբուլի հայահոծ հատվածներում առաջադրելով հայ թեկնածուներ՝ հասկանալիորեն նպատակ կար շահել հայերի քվեները, իսկ հաջորդ խնդիրը, որը տարբեր կուսակցություններ փորձում էին լուծել, հատկապես վերջին շրջանում աճող հեղինակություն վայելող քրդական ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը, հետևյալն էր՝ հայերին և մյուս ազգային ու կրոնական փոքրամասնություններին ներկայացնել որպես քաղաքական ծրագրերի իրագործման բաղադրիչներ: Մոտ 2 տասնյակ հայ թեկնածուների մի մասի անուններն այնքան էլ հայտնի չէին լայն հանրությանը, անգամ շատ հայերի մեջ հարց էր առաջացել ծայրահեղ ազգայնական ԱԶԿ-ի կողմից

<sup>6</sup> Առավել մանրամասն տե՛ս Aylin S. Görener and Meltem Ş. Ucal, The Personality and Leadership Style of Recep Tayyip Erdoğan: Implications for Turkish Foreign Policy, Turkish Studies, v. 12, no. 3, pp. 357-381.

Բաքըրըրյում առաջադրված թեկնածուների (Ներսես Երամյան և Էլմաս Գիրազոս) կապակցությամբ<sup>7</sup>:

Հայաստանի և հայ-թուրքական հարաբերությունների թեման այս ընտրությունների ընթացքում գրեթե չքննարկվեց: Սովորաբար այցելելով Հայաստանի հարակից նահանգներ՝ Էրզրոդանն առիթն օգտագործում էր Հայաստանի կամ հայության վերաբերյալ ինչ-որ հայտարարություն անելու համար: Այս ընտրարշավի ժամանակ Կարսը, Արդահանը և Իգդիրը շրջանցվեցին Էրզրոդանի կողմից, և նա այս նահանգներ չայցելեց, և հետևաբար առիթ չստեղծվեց նշված խնդիրների կապակցությամբ դիրքորոշում հայտնելու վերաբերյալ: ԱԶԿ-ի տարածված հայտարարության համաձայն՝ սակավաթիվ նահանգներ այցելելու պատճառը Էրզրոդանի առողջական խնդիրներն էին, հատկապես ծայնալարերի բորբոքումը: Ընդհանրապես, 81 նահանգներից Էրզրոդանն այցելեց 20-25-ը, մինչդեռ նախկինում նա աշխատում էր գրեթե բոլորում լինել: Անշուշտ, ԱԶԿ-ի անդամներն այցելեցին Հայաստանի հարակից նահանգները, հանդես եկան հայտարարություններով, որոնցից հատկապես ուշագրավ էր Մեծամորի ատոմակայանի փակման մասին ակնարկը: Փոխարենը, նշված նահանգներում բավական ակտիվ էին ընդդիմադիր կուսակցությունները, որոնց ղեկավար անձինք կազմակերպեցին հանդիպումներ նշված տարածաշրջանում, սակայն Հայաստանի և հայության հետ կապված ոչ մի հիշարժան հայտարարությամբ հանդես չեկան:

Աղյուսակ 4-ում, 5-ում և 6-ում ներկայացված են վերջին 11.5 տարիների ընթացքում տեղի ունեցած քվեարկությունների ժամանակ Կարսում, Իգդիրում և Արդահանում գրանցված արդյունքները:

Աղյուսակ 4

Ընտրության տարեթիվ/տեսակը	ՎԱՐՍ				
	ԱԶԿ	ՀԺԿ	ԱԾԿ	ԱՆԿԱՍԻ ԹԵԿՆ.	ԺՀԿ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
2002	17.2	16.7	11.8	11.3	-
2007	41.1	13.3	20	15.6	-
2011	42.57	16.6	17.3	19.3	
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
2004	38.5	11.6	16.9		-
2009	36.2	17.6	17.6		18.9
2014	25	25.1	28.3		
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՔԿԵՆԵՐ					
	ԱՅՈ		ՈՉ		
2010	65.58		34.42		

Աղյուսակ 5

Ընտրության տարեթիվ/տեսակը	ԻԳԴԻՐ				
	ԱԶԿ	ՀԺԿ	ԱԾԿ	ԱՆԿԱՍԻ ԹԵԿՆ.	ԺՀԿ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
2002	6.5	14.8	13.2	9.8	-
2007	28.9	8.3	15.1	40.5	
2011	28.2	1.7	34.09	31.5	
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
2004	23	4.6	22	0	-
2009	23	4.4	17	-	43.6
2014	11	0.7	45.5		45.4
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՔԿԵՆԵՐ					
	ԱՅՈ		ՈՉ		
2010	49.06		50.94		

<sup>7</sup> «Գործ զայլերի» կուսակցությունը հայ թեկնածու է առաջադրել, փետրվար 21, 2014, <http://civilnet.am/2014/02/21/%E2%80%8B%E2%80%8Blections-turkey-mhp-armenian-candidate-bakirkoy-nerses-yeramyan/#.Vg6VnZYyGiA>.



**Աղյուսակ 6**

**ԱՐԴԱՀԱՆ**

Ընտրության տարեթիվ/տեսակը	ԱԶԿ	ՀԺԿ	ԱՇԿ	ԱՆԿԱՍԻ ԹԵԿՆ.	ԺՀԿ
<b>ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
2002	11.7	21.8	8.8	3.1	-
2007	40.6	32.2	6	9.2	
2011	40.2	29.8	9.9	12.3	
<b>ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
2004	27.2	16.8	9.4	0	-
2009	36.9	15.9	6.4		13
2014	34.2	33.7	6.9		10.7
<b>ՍԱՀՄԱՆԱՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐ</b>					
	ԱՅՈ		ՈՉ		
2010	55		45		

Ուշագրավ արդյունք արձանագրվեց Հայաստանին հարակից երեք նահանգներում, քանի որ ընտրությունների արդյունքում դրանցից յուրաքանչյուրում իշխելու են տարբեր կուսակցություններ: Առանձնապես կարևոր էր Կարսի հանգամանքը, որտեղ իշխող կուսակցությունը պարտվեց: Կարսում հաղթեց ԱՇԿ-ն, որը բավական նշանակալից անակնկալ էր, թեև նահանգային խորհրդի ընտրություններում ԱԶԿ-ն առաջինն էր՝ 31.9 % քվեներով, ԽԺԿ-ն՝ երկրորդը՝ 24.9 %-ով, ԱՇԿ-ն՝ երրորդը՝ 18.3 %-ով, իսկ ՀԺԿ-ն չորրորդն էր՝ 13.6 %-ով: Իզդիրում կրկին հաղթեց քրդական կուսակցությունը, ազգայնական ԱՇԿ-ն երկրորդն էր փոքր տարբերությամբ: Իզդիրի նահանգային խորհրդի ընտրություններում ևս ԽԺԿ-ն առաջինն էր՝ 43.3 % քվեներով, ԱՇԿ-ն երկրորդն էր՝ 28,9 %-ով, ԱԶԿ-ն երրորդն էր՝ 19,9 %-ով, ՀԺԿ-ն չորրորդն էր՝ 4 %-ով: Ի դեպ, Իզդիրում գրանցված արդյունքների առումով ուշագրավ էր խորհրդարանի խոսնակ Ջեմիլ Չիչեքի անդրադարձը.

«Նրանք (քրդերը-ՏՄ) վերցրին Իզդիրը, ինչը նշանակում է՝ ամրապնդվեցին Հայաստանի հետ սահմանին», նա շարունակել էր միտքը՝ ակնարկելով, որ այս փաստը պետք է լուրջ քննության առնվի<sup>8</sup>: Արդահանում հաղթեց ԱԶԿ-ն՝ 34.2 %-ով, երկրորդը ՀԺԿ-ն էր, Իզդիրի նահանգային խորհրդի ընտրություններում ԱԶԿ-ն նույնպես առաջինն էր՝ 34,2 %-ով, ՀԺԿ-ն՝ երկրորդը՝ 33,7 %-ով, ԽԺԿ-ն երրորդն էր՝ 10,7 %-ով, և Դեմոկրատիկ կուսակցությունը՝ 10,3 %-ով: Կարող ենք արձանագրել, որ թե՛ Կարսում, թե՛ Իզդիրում ԱՇԿ-ն ազդեցիկ դիրքեր զբաղեցրեց, որի լծակները տարեցտարի առավել հզորանում էին:

**Ընտրական գործընթացների համապատասխանությունը ժողովրդավարության սկզբունքներին**

ԵՄ մարմինները դեռ 2013 թ. անհանգստություն էին հայտնել գալիք ՏԻՄ ընտրություններում ազատ կամ արտահայտման իրավունքի իրացման հնարավոր խոչընդոտների վերաբերյալ: 2014 թ. մարտին այդ մտահոգությունների արտահայտումը դարձավ ավելի հաճախակի: Մարտի 14-ին Եվրախորհրդարանի 18 պատգամավորներ՝ Մարիետե Շակեի (Marietje Schaake) գլխավորությամբ, նամակով դիմեցին Եվրամիության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Քեթրին Էշթոնին և Ընդլայնման և հարևանության քաղաքականության գծով Եվրահանձնակատար Շտեֆան Ֆյուլեին՝ Թուրքիայի ՏԻՄ ընտրությունների ընթացքին հետևելու համար դիտորդական առաքելություն ուղարկելու նպատակով<sup>9</sup>: Նրանց համատեղ նամակում նշվում էր «մակերես ելած աննախադեպ ճգնաժամի մասին», հետևաբար, «նման առաքելության ձևավորումը ոչ միայն կարևոր է, այլ նաև անկեղծորեն ասած, անհրաժեշտ»<sup>10</sup>: Նախ արձագանքեց Էրդողանը՝ նշելով, որ «եթե ուզում են, թող գան», իսկ պաշտոնական հրավեր այդպես էլ չուղարկվեց ո՛չ ԵՄ-ին, ո՛չ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին, ո՛չ Եվրոպական խորհրդի Տարածաշրջանային և տեղական ինքնակառավար-

<sup>8</sup> Kürtler yine Ermenistan sinirina dayandı, 31.03.2014, <http://www.agos.com.tr/tr/ yazi/6795/kurtler-yine-ermenistan-sinirina-dayandi>  
<sup>9</sup> Letter to the Commission requesting an EU election observation mission to Turkey, <http://www.marietjeschaake.eu/2014/03/letter-to-the-commission-requesting-an-eu-election-observation-mission-to-turkey/>  
<sup>10</sup> Նույն տեղում:

ման կոնգրեսին, ո՛չ էլ Վենետիկի հանձնաժողովին: Մարտի 21-ին պատգամավորներին ուղղված Ք. Էշթոնի և Շ. Ֆյուլեի պատասխան նամակում նշվում էր, որ ԵՄ դիտորդական գործունեությունը հիմնականում վերաբերում է խորհրդարանական և նախագահական ընտրություններին, հետևաբար ՏԻՄ ընտրություններում առաքելություն կարող է ուղարկվել «միայն բացառիկ հանգամանքներում»<sup>11</sup>: Արդյունքում ո՛չ ԵՄ-ը, ո՛չ ԵԱՀԿ/ԺՎԻԳ-ը դիտորդական առաքելություններ չգործողեցին Թուրքիա: Փոխարենը, աննախադեպ քանակությամբ տեղական դիտորդներ հետևեցին ընտրությունների ընթացքին:

Ընտրարշավի ընթացքում տեղ գտած մի շարք խախտումների վերաբերյալ (քարոզչության համար անհավասար պայմաններ, խտրական մոտեցում քարոզչության եթերաժամին, հարձակումներ նախընտրական շտաբների վրա, քարոզչական վահանակների ոչնչացում և այլն) ընդդիմադիր մի քանի կուսակցություններ դիմեցին ԵԱՀԿ/ԺՎԻԳ-ին, սակայն դրանք մնացին անարձագանք:

Նախկինում Թուրքիայում ընտրությունները, ընդհանուր առմամբ, անցել են մրցակցային պայմաններում, և դրանց արդյունքները չեն վիճարկվել: Իհարկե, եղել են բացառություններ, ինչպես օրինակ՝ 1930, 1946, 1957, 1987, 1994, 2011 թվականներին տեղի ունեցած ընտրություններում արձանագրվել են որոշակի խախտումներ, ընտրակաշառքի և բռնության դեպքեր: Մարտի 30-ի ընտրությունների օրն արձանագրված սպանությունները, բռնությունները, զինված հարձակումները, քվեարկության տեղամասերում արձանագրված խախտումները հիմնականում տեղի են ունեցել երկրի արևելյան և հարավ-արևելյան հատվածներում, գերազանցապես քրդաբնակ շրջաններում: Այս անգամ աչքի ընկան Շանլուրֆա նահանգի երկու շրջան և Հաթայի նահանգի մեկ շրջան: Հատուկ քննադատության արժանացավ Սիիրթի քաղաքապետի թեկնածուի սպանությունը, որը ներկայացնում էր իսլամամետ երջանկություն կուսակցությունը<sup>12</sup>:

Ընտրությունների ավարտից անմիջապես հետո երկրի տարբեր շրջաններում քաղաքապետերի տասնյակ թեկնածուներ պահանջեցին քվեների վերահաշվարկ կատարել: Հատկապես մեծ արձագանք գտավ Անկարայում ընդդիմության թեկնածուի նման պահանջը: Հանրապետական-ժողովրդական կուսակցության թեկնածու Յավաշը պահանջում է վերահաշվարկ՝ այնդեպով, որ գործող քաղաքապետ Գյոքչեքի օգտին եղել աղաղակող ընտրախախտումներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիմումներին ընթացք տվեց, և մի շարք շրջաններում սկսվեց քվեների վերահաշվարկ, որից հետո արդյունքները նույնը մնացին:

### Հիմնական եզրակացություններ

Հաղթելով 2014 թ. ՏԻՄ ընտրություններում ԱԶԿ-ն հերթական՝ 8-րդ անգամ ստացավ վստահության վե՛լե: Այս հանգամանքն ինքնին աննախադեպ ցուցանիշ է Թուրքիայի քաղաքական պատմության տեսանկյունից: Ընդ որում վերջին երկու՝ 2011 և 2014 թթ. ՏԻՄ ընտրություններում այն ստացավ ամենաշատ քվեները իր քաղաքական գործունեության ամբողջ ընթացքում: 2014 թ.՝ ՏԻՄ ընտրություններում նրա ստացած քվեների ցուցանիշը գերազանցեց նախկին երկու նմանատիպ ընտրությունների ցուցանիշները:

Ֆեթ. Գյուլենն աննախադեպ տեղեկատվական ու ռեսուրսային պայքար ձեռնարկեց ընդդեմ Էրդողանի, նրա ընտանիքի անդամների և նրա կուսակցության, ավելին, գյուլենականներն անթաքույց աջակցություն ցուցաբերեցին ընդդիմադիր կուսակցություններին, հիմնականում ՀԺԿ-ին, սակայն ԱԶԿ-ն վստահ հաղթանակ արձանագրեց:

Թեև Իզմիրը կրկին չանցավ ԱԶԿ-ի վերահսկողության տակ, սակայն ԱԶԿ-ն վստահ հաղթանակ տարավ երկու ամենամեծ քաղաքներում՝ Ստամբուլում և Անկարայում՝ հնարավորություն ստանալով ևս 5 տարով ղեկավարելու երկրի տնտեսական և քաղաքական կենտրոնները:

Ինչպես նախկինում, այս անգամ ևս քրդական գործոնն էական ազդեցություն թողեց ընտրությունների արդյունքների վրա: Նախ, քրդերի մի մասը շարունակում էր հավատալ ու աջակցել Էրդողանին, իսկ քրդական կուսակցությունները շարունակում էին ներկայանալ ոչ միասնական կերպով, արդյունքում քվեները կիսվեցին տարբեր կուսակցությունների միջև:

<sup>11</sup> <http://www.marietjeschaake.eu/wp-content/uploads/2014/03/A-2014-799388-Ashton-F%C3%BCle-on-TK-Elections-MEPs.pdf>

<sup>12</sup> SP'li belediye başkan adayi Behmen Aydın öldürüldü, 31.03. 2014, <http://www.bugun.com.tr/gundem/evinin-onunde-olduruldu-1040892.html>



ԱՁԿ-ն միակ կուսակցությունն է, որն ինչպես նախկինում, այնպես էլ այս ընտրություններում զգալի քվեներ ստացավ երկրի բոլոր ընտրատարածքներից: Ի տարբերություն մյուս կուսակցությունների, որոնք ունեն աշխարհագրական որոշակի ներկայացվածություն և չեն կարող արձանագրել համապետական ներկայացվածություն: Արդյունքում ԱՁԿ-ն գրեթե բոլոր ՏԻՄ-ում զբաղեցնում էր 1-4-րդ հորիզոնականները:

Մարտի 30-ի ընտրություններից հինգ ամիս անց՝ օգոստոսի 10-ին, Թուրքիայում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, երբ առաջին անգամ նախագահն ընտրվեց ուղղակի մանդատով: Այդ ընտրություններում հաղթեց Թուրքիայի երկարամյա վարչապետ Էրդողանը: 2015 թ. հունիսի 7-ի ընտրություններում ԱՁԿ-ն արձանագրեց առաջին լուրջ հետընթացը՝ անկարող լինելով խորհրդարանում ունենալ պարզ մեծամասնության համար անհրաժեշտ 276 մանդատը: Նոր կառավարություն ձևավորելու շուրջ մի քանի ամիս տևած անպտուղ բանակցություններից հետո՝ օգոստոսի 25-ին, Էրդողանը որոշեց նոյեմբերի 1-ին նշանակել արտահերթ խորհրդարանական ընտրություններ, որում ԱՁԿ-ն վստահ հաղթանակ տարավ՝ ստանալով 317 մանդատ:

ԼԵԿՈՆ ՀՈՎԱՍԵՓՅԱՆ  
ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ. ՄԱՐՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքիան ներկայում տարածաշրջանի ամենառազմականացված երկրներից է, որի զինված ուժերի սպառազինման ծավալներն ու տեմպերը գերազանցում են Սառը պատերազմի ժամանակաշրջանը: «Կոնվերսացիայի Բոննի միջազգային կենտրոնի» (BICC) «Գլոբալ ռազմականացման ինդեքս 2014» զեկույցի համաձայն՝ Թուրքիան ռազմականացվածության ցուցանիշներով 2013 թ. գտնվել է Եվրոպայի ամենառազմականացված 10 երկրների շարքում, իսկ աշխարհում գրաղեցրել 24-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են՝ Իրանը, Եգիպտոսը, ԱՄԷ-ն և այլն<sup>1</sup>: 2015 թ. Թուրքիայի ռազմական բյուջեն կազմել է շուրջ 10 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջին տարիներին սպառազինության գծով միայն ռազմական բյուջեից տարեկան հատկացումները կազմում են շուրջ 3 մլրդ ԱՄՆ դոլար, այդ թվում՝ նաև տեղական ռազմարդյունաբերության միջոցով ապահովվող սպառազինության ուղղությամբ: Ռազմական բյուջեի մոտ 50 տոկոսը կազմում են անձնակազմի, իսկ մնացած մասը՝ սպառազինության, ապրանքների ու ծառայությունների ծախսերը: Սպառազինության համար Թուրքիայում, բացի ռազմական բյուջեից, ծախսվում են նաև արտաբյուջետային հիմնադրամների ու հատկացումների միջոցները: ՀՆԱ-ից ռազմական ծախսերի հատկացման ցուցանիշով (շուրջ 1.7 տոկոս) ՆԱՏՕ-ի կազմում Թուրքիան զբաղեցնում է 7-րդ տեղը: Համաձայն միջազգային հեղինակավոր հետազոտական կառույցների՝ ռազմական ծախսերի ցուցանիշով վերջին տարիներին Թուրքիան աշխարհում զբաղեցնում

<sup>1</sup> Global Militarization Index 2014, TURKEY BECOMES A TOP 15 MILITARY SPENDER, [http://www.bicc.de/uploads/tx\\_bicctools/141209\\_GMI\\_ENG.pdf](http://www.bicc.de/uploads/tx_bicctools/141209_GMI_ENG.pdf).

էր 15-րդ հորիզոնականը: Վերջին 10 տարիների ընթացքում Թուրքիայի ռազմական ծախսերն աճել են 15 տոկոսով<sup>2</sup>:

Տարեկան ռազմական բյուջեի մոտ 20-30 %-ը ծախսվում է սպառազինության վրա: Թուրքիայի սպառազինման առումով բավական հավակնոտ ծրագրեր առաջադրվեցին իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կառավարման տարիներին: Թուրքիայի ՁՈՒ-ի արդիականացման տեսանկյունից էական ու հիմնարար նշանակություն ունեցող նախագծերի մեկնարկն ու պայմանագրերի ստորագրումը՝ տանկերի ազգային արտադրություն, 5-րդ սերնդի կործանիչների ձեռքբերում, հեռահար ՀՕՊ համակարգի զարգացում, տիեզերական հետախուզության համակարգերի ստեղծում, միջին հեռահարության հրթիռների արտադրություն և այլն, առաջադրվեցին հենց ԱԶԿ-ի կառավարման տարիներին:

Դրա հետ մեկտեղ հատկապես մեզանում թուրքական բանակի մասին կա հստակ ամրացած կարծրատիպ, որ այն հզորագույնն է և անպարտելի: Հաճախ կարելի է լսել նաև այսպիսի մեկնաբանություններ, որ թուրքական բանակը ՆԱՏՕ-ի հիմքն է, ամենամեծն է այդ կազմակերպության մեջ, ամենահզորը տարածաշրջանում և այլն: Փորձենք, հստակ փաստերի վրա հիմնվելով, կատարել թուրքական բանակի մարտունակության փորձի վերլուծություն և գնահատում:

Թուրքական բանակը զարգացման առանձին ճանապարհ սկսեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ մտավ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմ: Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի և պաշտպանական համակարգի կայացումն ու զարգացումը մեծամասամբ կախված էին ՆԱՏՕ-ի և հատկապես ԱՄՆ-ի աջակցությունից: Մինչև թուրքական բանակը պաշտոնապես կմտներ այս կազմակերպություն, 1950 թ. ամերիկյան զորքերի կազմում մասնակցեց կորեական պատերազմին: Մենք չենք քննարկի այդ իրողությունների ռազմաքաղաքական կողմերը, մեզ հետաքրքրում են թուրքական բանակի բուն գործողությունները և ձեռքբերումները: Թուրքական բանակի 241-րդ հետևակային գնդի հիման վրա կազմվում է մեկ առանձին բրիգադ՝ մինչև 5000-հոգանոց թվակազմով: Որշ տեղեկությունների համաձայն՝

իբր բանակը լրացվում է կամավորների շնորհիվ, ինչը խիստ կասկածելի է<sup>3</sup>: Նորակազմ բրիգադի հրամանատար նշանակվեց Առաջին աշխարհամարտի մասնակից Թահսին Յազըչըն, ով համաձայնել է նույնիսկ մեկ կոչում իջնել, որպեսզի նշանակվի այդ բրիգադի հրամանատար: Թուրքական բրիգադը Կորեա է հասել 1950 թ. հոկտեմբերի 12-ին և մտել ամերիկյան 25-րդ հետևակային դիվիզիայի կազմի մեջ: Իհարկե, վատ թրջված և բազում այլ առանձնահատկություններով օժտված թուրքական բրիգադի զինվորները մեծ խնդիրներ ստեղծեցին ամերիկյան հրամանատարության համար: Մարտական գործողությունների մեջ մտնելուն պես այդ ամենը մեծ խնդիր դարձավ ամերիկյան բանակի համար: Իրավիճակը չփրկեցին անգամ ամերիկյան սպաները, որոնք օգնում էին թուրքերին: Չնայած նրան, որ այս «վայրենիները», ինչպես նրանց անվանում էին ամերիկյան բանակի զենքավիճակները, գտնվում էին ամերիկյան 8-րդ բանակի պահեստազորում, չինացիների շեշտակի հարձակումը ստիպեց թուրքական բրիգադը մարտի մեջ մտնել արդեն նոյեմբեր ամսին: Հայտնի հարձակման ժամանակ, երբ ՄԱԿ-ի զորքերն ամենուր նահանջում էին կորուստներով, թուրքական բրիգադը ևս ծանր կորուստներ է կրել, այն դեպքում, որ երբեք չէր գործել հիմնական հարվածների ուղղությամբ: Տարբեր գնահատականներով կորցրել է անձնակազմի և ունեցվածքի 50-70 տոկոսը: Ավելի քան 300 հոգի համարվում էին սպանված և անհետ կորած: Արդեն 1951 թ. Թուրքական բանակը կազմեց նոր բրիգադ, որը փոխարինեց նախորդին, և այդպես երեք տարում երեք տարբեր բրիգադներ են մասնակցել կորեական պատերազմին: Ընդունված տվյալներով այդ երեք տարիների ընթացքում պատերազմին մասնակցել է մոտ 15 000 թուրքական զինվոր, իսկ կորուստները կազմել են մոտ 1000 զինվոր: Թուրքական ղեկավարությունը և բարձր սպայակազմը մեծ ցանկություն ուներ հնարավորինս շատ մարդ ուղարկել Կորեա, շատ մարդկանց անցկացնել մարտական փորձի կամ ինչպես ավելի ճիշտ կլինի ասել մասդաջի միջով: Սակայն մասնակցելով մի քանի նշանակալի գործողությունների՝ թուրքական բանակի ստորաբաժանումները երբեք չեն եղել կարևորագույն հատվածներում, չեն եղել գլխավոր

<sup>2</sup> Türkiye'nin askeri harcaması dünya çapında 15'inci sirada, <http://www.mil-liyet.com.tr/turkiye-nin-askeri-harcamasi-dunya/dunya/detay/2043544/default.htm>.

<sup>3</sup> Չի բացառվում, որ կորեական պատերազմին մասնակցած թուրքական բրիգադը համալրվել է հիմնականում Թուրքիայի տարածքում բնակվող քրդերով:



հարվածների վրա և աչքի չեն ընկել բացառիկ քաջությանը կամ արդյունավետությանը: Ահա այսպես սկսվեց թուրքական բանակի արևմտականացումը: Փաստորեն, կորեական պատերազմին թուրքական կողմի մասնակցությունն առաջնային դեր խաղաց ՆԱՏՕ-ի անդամ դառնալու հարցում: Կորեական պատերազմից հետո շատ արագ թուրքական բանակը սկսեց համալրվել արևմտյան տեխնիկայով, արևմտյան հրահանգիչների օգնությամբ արագորեն փոխում էր դիմագիծը, պատրաստության ձևն ու եղանակները: Իհարկե, այդ ամենը չէր օգնում, որպեսզի Թուրքիայի ներքին և արտաքին խնդիրները միանգամից չեզոքացվեին: Թուրքիայում դեռ շատ արդիական էին քրդական խնդիրը, մշտական պատերազմի վտանգը Հունաստանի հետ, Կիպրոսի հարցը և այլն: Դրանց հետ կապված թուրքական բանակը մինչև 1970-ականները գերազանցապես փոքր ստորաբաժանումների գործողություններով մի քանի անգամ ներքաշվել է մարտական գործողությունների մեջ: 1964 թ. թուրքական օդուժը Կիպրոսի հունական ջոկատներին օդային հարված հասցրեց: Թուրքական զլխավոր շտաբում արդեն ավելի շատ էին խոսում ռազմական միջամտության մասին:

Մի քանի ամիս նախապատրաստություններից հետո՝ 1974 թ. հուլիսի 18-ին, սկսվեց թուրքական բանակի «Աթիլլա» ռազմագործողությունը: ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ն իրենց անգործությանը արձակել էին թուրքերի ձեռքերը: Մերսինից շարժվեցին դեսանտային մի քանի նավեր, որոնք, ճիշտ է, հայտնաբերվեցին Կիպրոսի առափնյա ուժերի կողմից, սակայն հակադեղու համար ներուժն ավելի քան փոքր էր: Թուրքական առաջնային «Չաքմաք» ծովային զորախումբը, որը կազմում էր շուրջ 3500 հոգի, ափ էր հասել ավելի քան 20 նավերով, 15 տանկերով, 20 գրահամեքենաներով և 12 միավոր հրետանային մեծ միջոցներով և աջակցող ավիացիոն ուժերով: Ջրաջուկատի հրամանատարն էր գեներալ Սուլեյման Թունջերը: Միաժամանակ թուրքական 171-րդ և 132-րդ էսկադրիլիաների կործանիչների հարվածների տակ թուրքական օդուժի ինքնաթիռները հանգուցային կետերում իջեցրին նաև օդային դեսանտ: Ամենացավալին այն էր, որ Կիպրոսը մնաց առանց Հունաստանի օգնության: Սակայն թուրքական բանակը, ոգևորված անօգնական Կիպրոսի նկատմամբ ունեցած իր «հաջողություններով» և

<sup>4</sup> А. С., Орлов, В. А., Гаврилов, Тайны корейской войны; [http://www.moder-nlib.ru/books/orlov\\_a/tayni\\_koreyskoy\\_voyni/read/](http://www.moder-nlib.ru/books/orlov_a/tayni_koreyskoy_voyni/read/).

վախենալով հույների պատասխանից, այնքան էր շփոթված, որ հուլիսի 21-ին սեփական օդուժի 111-րդ և 141-րդ էսկադրիլիայի «F-100» և «F-104» կործանիչների օդաչուներին հրամայեց գրոհել սեփական ծովուժի «Ադաթեփե», «Կոչաթեփե» և «Թընազթեփե» ականակիրները: Մոտ 50 կործանիչներ, անտեսելով սեփական դրոշները և դրանք ընդունելով որպես հունական, ինչպես նաև նավերից եկող հրահանգները, ժամը 14:30-ի սահմաններում սկսեցին գրոհել նավերի վրա: Արդյունքում օդուժը կորցրեց մեկ կործանիչ, երկուսը վնասվեցին, իսկ օդաչուները խորտակեցին նավերից մեկը և վնասեցին մյուսը: Ըստ թուրքական տվյալների՝ թուրքական ականակիրների դեմ սեփական կործանիչների գործողությունների հետևանքով գրանցվեց 54 զոհ:Սա թուրքական բանակի ամենամեծ խայտառակություններից է, որը մինչև օրս ցանկանում են թաքցնել:

Նույն գործողությունների ընթացքում՝ հուլիսի 22-ին, Էգեյան ծովում տեղի ունեցավ առաջին օդային մարտը թուրքական և հունական կործանիչների միջև, որի արդյունքում խոցվեցին երկու թուրքական կործանիչ: Ընդ որում հունական կործանիչներն իրենց տեսակով նույն թուրքական կործանիչների մակարդակին էին: Միաժամանակ մարտերը կղզու վրա շարունակվում էին, թուրքական ժամ առ ժամ հզորացող զորախումբը հասցվել էր մոտ 40 000-ի՝ 200-ից ավելի տանկերի և լիարժեք օդային գերակայության պայմաններում: Մինչև օգոստոսի 17-ը, երբ ավարտվեցին ակտիվ մարտական գործողությունները, մարտերն ընթանում էին փոփոխական հաջողություններով: Կիպրական ուժերը չափազանց փոքր էին, սակայն որոշ տեղամասերում ոչ միայն կատարի դիմադրություն էին ցուցաբերում, այլ նաև թուրքերին ստիպում էին նահանջել: Բավական էր ասել, որ Կիպրոսի հունական բանակն ուներ ընդամենը 35 տանկ: Կիպրոսի դեմ թուրքական ագրեսիան սահմանափակ և ուժային մեծ անհավասարության պայմաններում իրականացված ռազմագործողություն էր:

Այս դեպքերից հետո, չնայած մշտական լարվածություններին Էգեյան ծովում, քրդական հարցում, սիրիական սահմանին և այլուր, թուրքական բանակը լայնածավալ մարտական

<sup>5</sup> Kocatepe Muhribi'ni kim batirdi?, <http://www.habervaktim.com/haber/26767/kocatepe-muhribini-kim-batirdi.html>.

<sup>6</sup> А. Розин, Действия ВМС во время турецкого вторжения на Кипр в 1974г., <http://alerozin.narod.ru/cypr.htm>.



գործողություններ չի վարել հատկապես հավասարազոր հակառակորդի դեմ: Նույնիսկ կիպրական ներխուժումն այդպիսին անվանել չի կարելի: Դրանից հետո թուրքական բանակի բոլոր գործողությունները հիմնականում կապված են հատուկ ծառայությունների հետ, որոնց իրականացրած սահմանափակ հատուկ գործողությունները որոշ առումներով մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

1952 թ., երբ Թուրքիան մտավ ՆԱՏՕ-ի կազմ, գլխավոր շտաբի ենթակայությամբ ստեղծվեց «Հատուկ պատերազմի բաժինը» (ՀՊԲ, *Özel Harp Dairesi*), որն էլ ներկայիս հատուկ նշանակության ուժերի հրամանատարության (*Özel Kuvvetler Komutanlığı*)<sup>7</sup> կամ, ինչպես առավել հայտնի են, «բոսորագոյն բերետ»-ի նախատիպն են<sup>8</sup>: Ազգբնական շրջանում այս ջոկատի պատրաստությունը կազմակերպում էին ամերիկյան հրահանգիչները ամերիկյան համակարգով: Ամերիկյան «կանաչ բերետների» 10-րդ խմբի փորձառու սպա կապիտան Սթիվ Մնատյեները, բավականին երկար ժամանակ մնալով Թուրքիայում, պատրաստեց ավելի քան 300 հոգի: Ջոկատի «Ա» ստո-

<sup>7</sup> Հատուկ նշանակության ուժերի հրամանատարությունն ուղղակիորեն ենթարկվում է ՁՈՒ ԳԾ պետին: 1992 թ. հրամանատարությունը վերակազմավորվում է բրիգադի կառուցվածքով, ավելի ուշ՝ դիվիզիայի, իսկ 2006 թ.՝ կորպուսի: Տե՛ս Onlar TSK'nin bel kemiği, [http://www.sabah.com.tr/fotohaber/gundem/onlar\\_tsknin\\_bel\\_kemigi?tc=35&albumid=20579&page=3](http://www.sabah.com.tr/fotohaber/gundem/onlar_tsknin_bel_kemigi?tc=35&albumid=20579&page=3): 5: ՁՈՒ հատուկ նշանակության ուժերի ամբողջական թվաքանակը կազմում է մոտ 50 հազար, այդ թվում՝ ցամաքային, ռազմաօդային, ռազմածովային ուժերի ստորաբաժանումները: Տե՛ս О. Ткаченко, В. Черков, Силы специального назначения Турецкой республики, Зарубежное военное обозрение, N 10, 2013, стр. 35-42:

<sup>8</sup> 1952 թ. ԱՄՆ-ի աջակցությամբ ներկայիս ԱՄԽ-ի նախատիպը հանդիսացող Ազգային պաշտպանության բարձրագույն խորհրդի որոշմամբ ԳԾ-ի կազմում ստեղծվում է «Մորիլիզացիոն հետազոտության խորհուրդը» (*Seferberlik Tetkik Kurulu*), որը սկսում է գործել 1954 թ. սկսած: 1967 թ. այդ կառույցն անվանափոխվում է՝ դառնալով «Հատուկ պատերազմի բաժին» (ՀՊԲ, *Özel Harp Dairesi*), որը յուրահատուկ զաղտեի «բանակ» էր հենց բանակի ներսում: Դրա հիմնական գործառույթը հակակոմունիստական պայքարի կազմակերպումն ու երկրի ներսում՝ ձախերի դեմ տարվող պայքարն էր և ԽՍՀՄ-ի հնարավոր ազդեցության չեզոքացումը: Ավելի ուշ այն վերակազմավորվեց որպես ներկայիս «Հատուկ նշանակության ուժերի հրամանատարություն»: Տե՛ս Լ. Հովսեփյան, Թուրքիայի պաշտպանական համակարգի արիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Եր., ԵՊՀ հրատ., 2014:

րարաժանումը, որը համարվում է լավագույնը, միայն սպայական է, ունի մինչև 100 անդամ: Այս ստորաբաժանումը տարբեր տեղեկություններով բազմիցս կիրառվել է հակաքրդական գործողություններում ոչ միայն Թուրքիայի, այլև Սիրիայի և Իրաքի տարածքում: Նման գործողություններից քչերն են հայտնի, իսկ դրանց արդյունավետության մասին մենք դեռ կնշենք: Նշված ջոկատի հայտնի գործողություններից է 1999 թ. «Քրդստանի բանվորական կուսակցության» (PKK) առաջնորդ Ա. Օջալանի ձերբակալությունը Քենիայում Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության (MIT) հետ միասին, որն ընդունված է փայլուն համարել. չնայած որ հետախուզական հիմնական աջակցությունն ապահովվել է իսրայելական ու ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից: Ա. Օջալանի փաստաբաններից Այյա Ուլքերը ձերբակալության հետ կապված նշում է, որ նախապես ծրագրված դավադրության արդյունքում Օջալանը ձերբակալվեց ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից և հանձնվեց Անկարային<sup>9</sup>:

Նմանատիպ գործողությունների մասին են նշում նաև Բոսնիայում, Կոսովոյում, Սիրիայում, Իրաքում և այլ երկրներում: Ընդունված է համարել, որ այս հատուկ ջոկատը և համանման այլ ուժեր լավ են գործում և մեծ հաջողությունների են հասել քրդերի դեմ պայքարում՝ սկսած 1984 թ.-ից: Առաջին հայացքից մամուլում բազում փաստեր կան այս կամ այն գործողության մասին, որոնց ժամանակ այս ջոկատները վերացրել են այս կամ այն անձին, ոչնչացրել այս զինապահեստը և այլն: Մի քանի փաստեր կան տարբեր մարտերի մասին, որտեղ նրանք ոչնչացրել են մի քանի հոգուց մինչև մի քանի տասնյակ քուրդ զինյալ և այլն: Նման տեղեկությունները՝ համապատասխան գովեստի խոսքերով, քիչ չեն նաև ռուսական հրապարակումներում:

Սեփական կամ լավ ուսումնասիրված տարածքներում, ինչպիսին համարվում է Սիրիայի կամ Իրաքի հյուսիսը, որտեղ հատուկ ջոկատները սահմանափակ ուժերով, սակայն տեխնիկական գերազանցությամբ ոչնչացնում են քանակապես շատ, բայց տեխնիկական և պատրաստության մակարդակով մի քանի անգամ զիջող հակառակորդին, աշխարհին շատ են հայտ-

<sup>9</sup> Современное состояние курдского вопроса и его влияние на Ближне- и Средневосточный регион и Кавказ, Сборник докладов, Москва 2011, стр. 16.

նի: Նմանատիպ գործողություններ իրականացնում են մուլտրակի գրեթե բոլոր պետությունների հատուկ ուժերը: Այդպիսի գործողություններով մասնագետներին դժվար է զարմացնել և զնահատել որպես առանձնահատուկ: Եթե նշում ենք առանձին հաջող դեպքերի մասին, դրանք լավ տպավորություն են թողնում, սակայն չէ՛ որ կան նաև նույնպիսի չստացված դեպքեր: Նույն տվյալների համաձայն՝ այս ջոկատները հատկապես արդյունավետ են գործել սկսած 1995 թ.-ից: Սակայն անգամ այս իրավիճակում, երբ տեղեկությունները հստակ ճշտված էին, տարածքը՝ հստակ ուսումնասիրված, իսկ քրդերի տեխնիկական և մարտական պատրաստականության մակարդակը՝ զգալիորեն թույլ, առկա էր օդուժի աջակցություն և այլն, միևնույն է, թուրքական հատուկ ջոկատների կորուստները լավագույն դեպքում կազմում էին 1/5-6 հարաբերությամբ<sup>10</sup>:

2003 թ., երբ սկսվեց իրաքյան պատերազմը, թուրքական հատուկ ջոկատները փորձեցին ներխուժել Իրաք՝ որոշակի գործողությունների համար, առանց դաշնակիցների հետ համաձայնեցնելու իրենց նպատակները: Որոշ հետախուզադիվերսիոն գործողություններից հետո, սակայն, թուրքական ջոկատը Քիրկուկի մոտակայքում ձերբակալվեց ամերիկյան ուժերի կողմից<sup>11</sup>: 2003 թ. հուլիսի 4-ին Իրաքի Սուլեյմանիե քաղաքում ԱՄՆ հատուկ նշանակության ստորաբաժանման ու Հյուսիսային Իրաքի քրդական զինվորների կողմից ձերբակալվեցին Թուրքիայի հատուկ նշանակության ուժերի 12 սպաներ ու ենթասպաներ: Ըստ որոշ հրապարակումների՝ ամերիկյան ստորաբաժանման մոտենալու մասին տեղեկատվություն ունենալուն պես թուրք զինծառայողները կապվում և տեղեկացնում են թուրք-իրաքյան սահմանին՝ Սիլոփի շրջանում գտնվող Թուրքիայի հատուկ նշանակության ուժերի գործողությունների շտաբ, որտեղից ստանում են ամերիկացիների հարձակման դեպքում պատասխան տալու հրահանգ, սակայն թուրքական հատուկ ջոկատայինները նախընտրում են չդիմել պատասխան գործողությունների և հանձնվում են: Ի դեպ, դրանից ամիսներ առաջ՝ ապրիլին, Քիրկուկում բացահայտվում և ձերբակալվում

<sup>10</sup> E., Гроисман, Спецназ зарубежья: Турецкий спецназ. Бордовые береты, [http://www.bratishka.ru/archiv/2005/9/2005\\_9\\_10.php](http://www.bratishka.ru/archiv/2005/9/2005_9_10.php)

<sup>11</sup> Նույն տեղում:

են թուրք սպաներ, որոնք Քիրկուկի թյուրքմեններին զենք էին մատակարարել<sup>12</sup>:

Բոլորովին վերջերս հայտնի դարձավ, որ 2013 թ. փետրվարի վերջին Սիրիայում դաժան ճակատագրի են արժանացել թուրքական գլխավոր շտաբի հայտնի հատուկ ստորաբաժանման «CSR» հատուկ ջոկատի մարտիկները: Թուրքական էլիտայի սպաներից կազմված ջոկատը լիովին ոչնչացվել է այն ժամանակ, երբ փորձել է օգնել ընդդիմադիր «Սիրիական ազատ բանակի» ապստամբներին<sup>13</sup>: Մինչ այդ տեղեկություններ հաստատվեցին առանձին չորս թուրք սպաների ոչնչացման մասին: Դեռևս 2011 թ. դեկտեմբերին Թուրքիայի կողմից հայտարարություն էր եղել թուրք-սիրիական սահմանին 7 հազար «բնորոգույն բեռետ» մարտիկների տեղակայման մասին<sup>14</sup>: Ահա հակառակորդի տարածքում գործելու արդյունավետության ցուցանիշը: Մինչդեռ աշխարհի հզորագույն երկրների հատուկ ստորաբաժանումներ բազում անգամներ հաջող գործողություններ են իրականացրել իրենց տարածքներից դուրս, ոչ անմիջական հարևանների տարածքներում: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ ամերիկյան, անգլիական, խորհրդային կամ այլ երկրների հատուկ ուժերն առանց մեծ հաղորդակցային և թիկունքային ապահովման հաջող գործողություններ են իրականացրել սեփական երկրից մեծ հեռավորության վրա, շատ դեպքերում հանդուգն տրանսպորտային փոխադրումներով և գրոհներով<sup>15</sup>: Թուրքիայի պարագայում իր տարածքից դուրս հատուկ գործողության օրինակ կարող է համարվել 1999 թ. Քենիայում ՔԲԿ առաջնորդ Ա. Օջալանի ձերբակալությունը, սակայն այդ գործողությունը ծրագրվել և իրականացվել է ամերիկյան հատուկ ծառայությունների լուրջ աջակցությամբ ու ներգրավվածությամբ, ինչպես հետախուզական տեղեկությունների տրամադրման, այնպես էլ բուն գործողության պլանավոր-

<sup>12</sup> 4 TEMMUZ 2003... O GÜN ASLINDA NE OLDU?, <http://www.habervitriini.com/haber/4-temmuz-2003-o-gun-aslinda-ne-oldu-208195/>.

<sup>13</sup> В Сирии уничтожен элитный отряд турецкого спецназа, 28 февраля 2013, <http://topwar.ru/24802-v-sirii-unichtozhen-elitnyy-otryad-tureckogo-specnaza.html>

<sup>14</sup> Suriye sinirina bordo bereli takviyesi, <http://www.dunyabulteni.net/?aType=haber&ArticleID=187172>, 09.12.2011.

<sup>15</sup> Օրինակ՝ իսրայելական հատուկ նշանակության ուժերի «Վետեր» ռազմագործողությունը, խորհրդային նման ուժերի «Թաջ-Բեկի» սպառի գրավումը և այլն:



ման հարցում<sup>16</sup>: Տարբեր աղբյուրներ այդ գործողության կազմակերպման հարցում կարևորում են նաև իսրայելական «Mossad»-ի դերակատարությունը: Ի դեպ, դեռևս հետախուզությունն այն կարևոր ոլորտներից է, որտեղ Թուրքիան լուրջ կախում է ունեցել ինչպես ԱՄՆ-ից, այնպես էլ Իսրայելից: Այսօր էլ որոշ թուրք մասնագետներ մատնանշում են հետախուզության ոլորտում Թուրքիայի կախվածության մասին: 2012 թ. հուլիսին թուրքական «TÜRKSAM» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, դոկտոր Ջելալթեթին Յավազը, խոսելով թուրք-իսրայելական հարաբերությունների մասին, անդրադարձել էր նախկինում թուրքական հետախուզական մարմիններին իսրայելական հատուկ ծառայությունների կողմից ցուցաբերված օգնությանը՝ նշելով, որ «նախկինում ՔԲԿ-ի դեմ պայքարում իսրայելական «Մոսադ» ծառայությունը կարևոր հետախուզական օգնություն է ցուցաբերել Թուրքիային: Միայն այդ ոլորտում է Թուրքիան դեռ զգում Իսրայելի կարիքը»<sup>17</sup>: Թուրք հայտնի լրագրող, թուրքական հատուկ ծառայությունների վերաբերյալ ծավալուն աշխատության հեղինակ Թունջա Օզքանն իր հայտնի գրքում նշում է, որ թուրքական հատուկ ծառայություններին հատկապես Թուրքիայի քրդաբնակ արևելյան ու հարավարևելյան շրջաններում իսրայելական հետախուզության կողմից ցուցաբերվող աջակցության շրջանակում իսրայելական հատուկ ծառայությունների դերակատարությունն ու տեղեկացվածության մակարդակն այդ շրջաններում ու Հյուսիսային Իրաքում այնպիսի մասշտաբների էր հասել, որ անհանգստություն առաջ բերեց թուրքական կողմի մոտ<sup>18</sup>: Եվ իրականում դժվար է թերագնահատել իսրայելական հետախուզության ներգրավվածությունն ու ազդեցությունը քրդական գործոնում:

Հարկ է նշել, որ հատկապես վերջին տարիներին ՔԲԿ-ի դեմ պայքարի հարցերում Թուրքիայի անվտանգության համակարգում հաճախակի էին բարձրաձայնվում հետախուզական մարմինների բացթողումների ու թերությունների վերաբերյալ: Թուրքական հատուկ ծառայությունները, հատկապես ՔԲԿ-ի և

ընդհանրապես քրդական զինյալների դեմ պայքարի հարցում, 1990-ական թթ. ակտիվ համագործակցության մեջ էին իսրայելական կողմի հետ<sup>19</sup> և զգալի կախում ունեին հետախուզական տվյալների փոխանցման առումով: Թուրք վերլուծաբանի վերոնշյալ պնդումը վկայում է, որ մինչ օրս էլ թուրքական հատուկ ծառայություններն ինքնուրույն չեն կարողանում ապահովել անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությունը ՔԲԿ-ի վերաբերյալ: Եվ իրականում իսրայելական հատուկ ծառայություններն ավելի լավ են տիրապետում տարածաշրջանում և հատկապես Հյուսիսային Իրաքում քրդական շրջանների ու դրանցում զարգացումների վերաբերյալ հետախուզական տեղեկատվությանը:

Հասկանալի է, որ եթե էլիտար հատուկ ջոկատները քրդերի հետ բախումներում նման կորուստներ էին կրում, ապա բանակային սովորական ստորաբաժանումները մեղմ ասած լավ չէին կարող գործել: «Քրդստանի բանվորական կուսակցության» իրականացրած գործողությունների, գրանցված բախումների փնձակագրությունը ցույց է տալիս թուրքական բանակին ու անվտանգության ստորաբաժանումների կրած մեծ կորուստները<sup>20</sup>:

Թուրքական ՁՈՒ-ի իրականացրած վերջին ծախողված ու խայտառակ ռազմագործողություններից էր 2011 թ. դեկտեմբերին թուրք-իրաքյան սահմանի միջադեպը: Դեկտեմբերի 28-ի երեկոյան թուրքական օդուժի 2 F-16 ինքնաթիռները ուժակոծում են թուրք-իրաքյան սահմանին գտնվող Շըրնաք նահանգի Ուլուդերե շրջանի մոտակայքում նկատված մի խումբ մարդկանց: Թուրքական հետախուզական ԱԹՍ-ները տեղե-

<sup>16</sup> Öcalan'ı Mossad Yakaladı, <http://analizmerkezi.com/haber/ocalani-mossad-yakaladi-5313.html>, 01.03.2010.

<sup>17</sup> Sbu' u Ջ. Յավազի հարցազրույցը առաջին լրատվականին [http://1in.am/arm/armenia\\_interview\\_97186.html?from=interview](http://1in.am/arm/armenia_interview_97186.html?from=interview):

<sup>18</sup> Tuncay Özkan, Milli Istihbarat Teşkilati, MIT'in Gizli Tarihi, Istanbul, Cumhuriyet Kitapları 2010, s. 381.

<sup>19</sup> Թուրք-իսրայելական անվտանգության, հատուկ ծառայությունների համագործակցության մասին տե՛ս Nezhir Tavlas, Türk-İsrail Güvenlik ve İstihbarat İlişkileri, Avrasya Dosyası İsrail Özel Sayısı, cilt 1, sayı 3, Şonbahar 1994: Թուրքական և իսրայելական հատուկ ծառայությունների միջև համագործակցության հիմքերը դրվել են դեռևս 1958 թ. Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Գուրիոնի և արտաքին գործերի նախարար Գ. Մեյեիի՝ Անկարա կատարած գաղտնի այցելության արդյունքում: Թուրքիան իր հետախուզական հնարավորությունները մեծացնելու և զարգացնելու համար ակտիվ կապերի մեջ էր Իսրայելի, ԱՄՆ-ի և Իրանի հետախուզական մարմինների հետ: Sbu' u Şimşek E., Bahar I., նշվ. աշխ., էջ 237-238:

<sup>20</sup> Курдские повстанцы убили 21 турецкого военного, <http://lenta.ru/news/2011/10/19/kurd/>; Турецкая армия: между стереотипами и реальностью, <http://www.orer.am/?p=62000&lang=r>

կատվություն են փոխանցում իբր այդ տարածքում քուրդ զինյալների առկայության մասին, և օդուժն անցնում է գործողությունների՝ սպանելով 35 քաղաքացիական անձանց, որոնք մաքսանենգ ճանապարհով հատում էին թուրք-իրաքյան սահմանը: Նման խայտառակ ծախողման համար հատուկ հետաքննություն սկսվեց և միայն նշվեց, որ դա կանխամտածված չի եղել<sup>21</sup>: Եթե ՆԱՏՕ-ի օդուժը նման քանակությամբ խաղաղ բնակիչների ուժբակոծեր, ապա կառավարության հրաժարական կպահանջեին, սակայն քանի որ սա Թուրքիան է, ապա նման բան տեղի չունեցավ:

Միայն 2012 թ. առաջին 9 ամիսների ընթացքում, ըստ Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի, ՔԲԿ-ի իրականացրած գործողությունների և դրա դեմ պայքարի հետևանքով զոհվել է 88 զինծառայող, որից 54-ը՝ արհեստավարժներ, որոնց պատրաստությունը շատ բարձր է համարվում<sup>22</sup>: Սակայն այս տվյալները մեղմ սասժ վատահոյություն չեն ներշնչում:

2012 թ. տվյալներով քրդական զինյալներն իրականացրել են ավելի քան 700 հարձակում, որոնց ընթացքում նրանք կորցրել են մոտ 300 զինյալ, իսկ թուրքական բանակի կորուստները մի քանի անգամ ավելի շատ էին: Նույն տարում թուրքական բանակի ոչ մարդկային կորուստները կազմել են մի քանի ուղղաթիռ և ԱԹՄ<sup>23</sup>, մինչև 30 միավոր ծանր զրահատեխնիկա և բազում այլ միջոցներ<sup>24</sup>: Սոցանցներում կան մի քանի տեսագրություններ, թե ինչպես են քրդերը ոչնչացնում շարասյուներ, զինվորների և անգամ խոցում ուղղաթիռներ: Նշենք, որ սրանք մեծ ռազմագործողությունների ժամանակ կրած կորուստների են հավասարվում: Մասնագետներից շատերը պնդում են, որ քրդերը տնօրինում են ամբողջ շրջաններ, որտեղ թուրքական բանակի ոտքը չի մտնում, նրանք փաստացի ինքնավարության մեջ ապրում են շատ հատվածներում:

<sup>21</sup> Irak sinirinda F-16'lar kaçakçılara vurdu: 35 ölü, [http://www.zaman.com.tr/gundem\\_irak-sinirinda-f-16lar-kaçakçılara-vurdu-35-ölu\\_1221408.html](http://www.zaman.com.tr/gundem_irak-sinirinda-f-16lar-kaçakçılara-vurdu-35-ölu_1221408.html), 29.12.2011.

<sup>22</sup> TSK Son 9 Ayda Verilen Şehit Sayisini Açıkladı, [http://www.haber365.com/Haber/TSK\\_Son\\_9\\_Ayda\\_Verilen\\_Sehit\\_Sayisini\\_Acıkladi/](http://www.haber365.com/Haber/TSK_Son_9_Ayda_Verilen_Sehit_Sayisini_Acıkladi/), 10.09.2012.

<sup>23</sup> В Турции курдские повстанцы уничтожили американский беспилотник Сентябрь 21, 2012, <http://news.am/rus/news/121835.html>

<sup>24</sup> PKK-ն վիճակագրական տվյալներ է հրապարակել 2012 թ. թուրքական անվտանգության ուժերի հետ բախումների մասին, <http://168.am/2013/01/05/160291.html>.

Ըստ Թուրքիայի ՊՆ-ի 2012 թ. հունիսի պաշտոնական տվյալների՝ 1984 թ.-ից ի վեր ՔԲԿ-ի դեմ պայքարում Թուրքիայի զինված ուժերի կորուստների թիվը կազմել է 6169, որից՝ 411 սպա, 375 ենթասպա, 585 ժանդարմերիայի զինծառայող և 4798 զինվոր<sup>25</sup>: Հատուկ նշենք, որ այս կորուստները հավասար են Արցախյան պատերազմի հայկական կորուստներին: Սակայն արդյո՞ք սրանք իրական թվեր են: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի մարդու իրավունքների ուսումնասիրման ահաբեկչության ենթահանձնաժողովը 2013 թ. հրապարակեց ամենամանրամասն զեկույցը ՔԲԿ-ի դեմ պայքարում զինվորական ու քաղաքացիական կորուստների վերաբերյալ: Ըստ այդմ՝ 1981-2011 թթ. ընթացքում ժանդարմերիայի գլխավոր հրամանատարությունը տվել է 3105 զոհ, որից՝ 370 սպա և ենթասպա: Ցամաքային ուժերի հրամանատարությունը կրել է 2312, ռազմաօդայինը՝ 14, իսկ ռազմածովայինը՝ 49 կորուստ: Չեկույցի համաձայն՝ 30 տարիների ընթացքում ՁՈՒ-ի և այլ գերատեսչությունների՝ ներառյալ ՆԳՆ-ն և ժանդարմերիան, ընդհանուր թվերի թիվը կազմել է 7 918<sup>26</sup>: Բացի այցի ընկնող ընդհանուր թվերից, որոնք ցուցադրում են թուրքական բանակի ողջ «ներուժը», ուշադրություն դարձնենք ռազմաօդային ուժերի կորուստներին: 14 օդաչուների կորուստները նշանակում են, որ անվազալ խոցվել է մոտ կրկնակի օդանավ: Փաստորեն, թուրքական բանակը կազմակերպված ու կայացած ՀՕՊ համալարգ չունեցող հակառակորդի հետ պայքարում սեփական տարածքում կորցրել է տասնյակ թռչող սարքեր:

1987 թ. մինչև օրս քրդական մարտական խմբերի հետ բախումներում մահացել է 40-45 հազար մարդ<sup>27</sup>, այդ թվի մոտ կեսը կազմում են թուրքական բանակի և անվտանգության մարմինների զինծառայողները:

2015 թ. հուլիսի 7-ից հոկտեմբերի 6-ը Թուրքիայի տարածքում վերսկսված ՔԲԿ-ի գործողությունների հետևանքով Թուրքիայի անվտանգության մարմինների ու բանակի կրած

<sup>25</sup> İŞTE 28 YILDA VERDİĞİMİZ ŞEHİT SAYISI!, <http://www.aktifhaber.com/iste-28-yilda-verdigimiz-sehit-sayisi-631016h.htm>, 11.07.2012.

<sup>26</sup> İste 30 Yıllık Bilanço, <http://haberdessin.com/haber/gundem/iste-30-yillik-bilanco>, 29.01.2013.

<sup>27</sup> "Это начало новой эры". Глава курдских сепаратистов призвал повстанцев сложить оружие и покинуть Турцию. 21 марта. 2013. <http://korrespondent.net/world/1529117>



կորուստները, թուրքական պաշտոնական տվյալների համաձայն, կազմում են ավելի քան 140 մարդ, իսկ ՔԲԿ-ինը՝ 204<sup>28</sup>: Հրապարակման մեջ նշվում է, որ 204 զոհերի մեծամասնությունը ՔԲԿ-ականներ են, սակայն չի բացառվում, որ նրանց մի մասը կարող են լինել քաղաքագիական անձինք քողաքնակ շրջաններից: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մարտական գործողություններն ընթացել են սեփական տարածքում, ՔԲԿ-ի զինույնները չունեն կանոնավոր բանակի զինվածություն և առհասարակ տեխնիկական հագեցվածությամբ զգալիորեն զիջում են թուրքական բանակին, ուստի թվերի այս հարաբերակցությունն ամենևին չի խոսում թուրքական բանակի ու անվտանգության մարմինների օգտին:

Ինչպես գիտենք, թուրքական մամուլն ազատներից չէ աշխարհում և հաճախ բազմաթիվ միջադեպեր քողարկվում են: Վերը բերված տվյալները հենց դա են փաստում: Թուրքական բանակի որակի և մարտունակության մասին լավագույնս խոսում է նաև մեկ այլ ցուցանիշ՝ ինքնասպանությունների թիվը: Թուրքական ՀԼՄ-ների 2012 թ. հրապարակումների համաձայն՝ վերջին 10 տարիներին թուրքական ՁՈՒ-ում ինքնասպան է եղել 934 զինծառայող<sup>29</sup>: Միայն 2012 թ. ընթացքում այդ թիվը կազմել է մոտ 70 զինծառայող<sup>30</sup>: Ինքնասպանություն է գործում յուրաքանչյուր 8000-երորդ թուրք զինվորը: Այս ցուցանիշով թուրքական բանակը զիջում է ամերիկյան, իսրայելական և անգամ հայկական բանակին և գերազանցում է միայն ռուսական բանակին: Այս համատեքստում նշենք նաև մեկ այլ կարևոր տեղեկություն, որը վերջերս քննարկվեց մամուլում և: «Վերջին մեկ ամսվա ընթացքում թուրքական ՌՕՈՒ-ը լքել են ավելի քան 110 օմաչուներ» հոդվածը բավականին մեծ աղմուկ հանեց Թուրքիայում: Սակայն, ինչպես պարզվեց, դա օրինաչափ են համարում շատ մասնագետներ, քանի որ 2012 թ. ընթացքում թուրքական բանակից հեռացել էին մոտ 1000 սպա, և դա գրե-

թե հաստատուն թիվ է կազմում ամեն տարվա կտրվածքով<sup>31</sup>: Սրանք ցուցանիշներ են, որոնք այս կամ այն կերպ բնորոշում են բանակի իրական մարտունակությունը, ներքին ներուժը և այլ կարևոր հատկանիշներ:

Վերջերս Թուրքիայի պաշտպանության նախարարը խոսել էր նաև այն դեպքերի մասին, որոնց ժամանակ օդում խոցվել էին թուրքական կործանիչներ: Նա խոստովանել է 1983 թ. սեպտեմբերի 14-ի դեպքը, երբ իրաքյան տարածքում խոցվել է թուրքական «F-100» կործանիչը ֆրանսիական «Mirage F1» կործանիչով: Մյուս միջադեպը գրանցվել է 1996 թ. Հոկտեմբերի 8-ին Էգեյան ծովի Սաքըզ կղզու հարավում: Հունական ինքնաթիռների հետ մոտակա օդային մարտեր մղելիս կործանվել էր Թուրքիայի ռազմաօդային ուժերին պատկանող ամերիկյան արտադրության «F-16» կործանիչը: Օդաչուներից մեկը փրկվել էր, իսկ մյուսը՝ ոչ: Թուրքական օդուժը հաճախ է Էգեյան ծովի հատվածում խախտում օդային սահմանը, ինչին ի պատասխան Հունաստանը դիմում է կոպիտ քայլերի: Թուրքական կործանիչն այս անգամ հրթիռահարվել է մեկ այլ ֆրանսիական՝ «Mirage-2000» կործանիչի կողմից<sup>32</sup>: Այս օդային մարտը ի դեպ ավիացիայի պատմության մեջ եզակի է նրանով, որ ամերիկյան նշված կործանիչի միակ ապացուցված պարտությունն է, իսկ ֆրանսիական կործանիչի միակ ապացուցված հաղթանակը նմանատիպ մեքենայի նկատմամբ: Ինչպես նենք վերևում արդեն նշեցինք, նման գործողություններ էլի են եղել և սրանք ամբողջը չեն: Նման դեպքերի փաստ կա նաև Խորհրդրդային Հայաստանի տարածքում: Սակայն այստեղ էականը դրանց քանակը չէ, այլ այն փաստը, որ մշտապես գտնվելով լարված իրավիճակում՝ թուրքական օդուժը երբեք հաղթանակներ չի տարել օդում նույնիսկ հավասարազոր հակառակորդի նկատմամբ:

2014 թ. հունիսի 11-ին «Իրաքում և Լևանտում իսլամական պետության» զինյալները, գրոհ կազմակերպելով Մոսուլի թուրքական հյուպատոսարանի վրա, գերի վերցրին 49 անձի, որից

<sup>28</sup> 92 günde bin 707 terörist etkisiz hale getirildi, <http://www.aa.com.tr/tr/turkiye/92-gunde-bin-707-terorist-etkisiz-hale-getirildi/>433649.

<sup>29</sup> TSK'da intihar şehit sayisini geciti!, <http://haber.gazetevatan.com/tskda-intihar-sehit-sayisini-gecti/495889/1/gundem>, 28.11.2012.

<sup>30</sup> <http://en.haberler.com/soldier-kills-himself-in-fourth-army-suicide-this-248097/>.

<sup>31</sup> Վերջին մեկ ամսվա ընթացքում Թուրքիայի զինված ուժերը լքել է 110 մարտական օդաչու. փետրվար 12. 2013. <http://168.am/2013/02/12/180012.html>:

<sup>32</sup> Վերջին 50 տարում թուրքական ավիացիայի որքան մարտական ինքնաթիռ են կործանել հարևան երկրները, <http://168.am/2013/03/13/194882.html>, 13.03.2013:

30-ը՝ թուրքական հատուկ նշանակության ուժերի զինճառայողներ, որոնք իրականացրել են հյուպատոսարանի պահպանությունը<sup>33</sup>: Հատուկ նշանակության ուժերի կողմից որևէ դիմադրություն չույժ ցի տրվել գրոհի ժամանակ, ուղղակի վայր են դրել զենքը և հանձնվել ծայրահեղ իսլամականներին: Միայն 101 օր անց Թուրքիայի իշխանությունները հայտարարեցին, որ հյուպատոսարանի գերիներն անվնաս ազատ են արձակվել Թուրքիայի կողմից իրականացված հատուկ գործողության շնորհիվ: ԻԼԻՊ-ի ձեռքում պահվող 49 թուրք պատանդների ազատման հանգամանքների հետ կապված որոշ հակասություններ ու տարօրինակություններ կան: Ըստ թուրքական մամուլի հրապարակումների՝ ազատ արձակման գործընթացը երկար է ծրագրվել, հնչն իրականացվել է հատուկ գործողության արդյունքում: Սակայն ռազմական հատուկ գործողություն չի իրականացվել, բախում չի եղել: Ազատ արձակումը հնարավոր է եղել տարբեր խողովակներով տարվող բանակցությունների ու ԻԼԻՊ-ին համոզման ճանապարհով: Ինտենսիվագետ էին բանակցությունները, և ազատման նախնական ազդակներ են ստացվել: Իրականացված հատուկ գործողության հետ կապված թուրքական կողմի հայտարարություններն ու մեկնաբանությունները սկզբնական շրջանում հակասական էին, որոնք վերուժությունը գույզ տվեց և մասամբ հաստատվեց նաև պաշտոնապես, որ ԻԼԻՊ-ի հետ տարվել է բանակցություն, այսինքն՝ հատուկ գործարք<sup>34</sup>: Նույնիսկ թուրքական ու արտասահմանյան մամուլում յուրեր հրապարակվեցին, որ թուրքական կողմը գերիների վերադարձման հետ կապված ԻԼԻՊ-ին է հանձնել իր տարածքում պահվող զինյալներին, տվել նյութական աջակցություն, իրականացրել սպառազինություն մատակարարում և այլն<sup>35</sup>: Դեռևս այդ գերիների ազատ արձակման գործողությունը բավական շատ մութ կողմեր ունի և հարգականի տակ է դնում թուրքական հատուկ ծառայությունների ու հատուկ նշանակության ուժերի կողմից «փա-

<sup>33</sup> İSİD Türk Konsolosluğu'na girdi

<http://www.aksam.com.tr/guncel/isid-turk-konsolosluguna-girdi/haber-315156>

<sup>34</sup> Dışişleri Bakanı: Musul'da rehinelere için takas oldu, <http://ilerihaber.org/disisleri-bakani-musulda-rehinelere-icin-takas-oldu/4723/>

<sup>35</sup> İngiliz Times: Türkiye 49 rehineyi 180 İSİD'liyle takas etti, <http://gundem.bugun.com.tr/musul-rehineleryiyle-iligili-cok-konusulacak-iddia-haberi/1287108>; ANHA: "Türk ordusu bu sabah İSİD'e silah verdi", <http://www.sendika.org/2014/09/anha-turk-ordusu-bu-sabah-isode-silah-verdi/>

յուն» որակված գործողության իրականությունը: Այդ գործողությունը եղել է առավելապես քաղաքական, գործարքային, չնայած թուրքական իշխանությունները դա ներկայագրին որպես համաշխարհային նշանակության փայլուն հատուկ գործողություն թուրքական հետախուզության ու հատուկ նշանակության ուժերի մասնակցությամբ<sup>36</sup>:

Թուրքական բանակը, իհարկե, տարածաշրջանի հզոր բանակներից մեկն է: Այն մեծ է իր քանակով, տարեցտարի ավելի է զինվում՝ շեշտադրում կատարելով նորագույն զինատեսակների վրա: Թուրքական բանակի ուժեղ կողմերից կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ բանակի սպայակազմի զգալի մասը լավ կրթված է, որոշ մասը փայլուն կրթություն է ստանում նաև արևմտյան ռազմական հաստատություններում: Սակայն քնականարար թուրքական բանակը ևս լրջագույն խնդիրներ ունի: Թուրքական բանակի ամենամեծ խնդիրները բխում են նաև նրանից, որ այդ բանակը բավականին մեծ է: Այսինքն՝ հարցն այն է, որ ոչ բոլոր երկրները կարող են պահել հսկայական, բայց լավ սպառազինված, պատրաստված ու մարտունակ բանակ: Ինչպես մեքե նշեցինք, սպաներից շատերը լավ կրթված են, սակայն այդ նույն սպաներն ահա արդեն ավելի քան 40 տարի է՝ ոչ մի մարտական գործողության չեն մասնակցել: Հատկապես խոսքը վերաբերում է լայնածավալ մարտական գործողություններին, որտեղ կիրառվում են մեծ ստորաբաժանումներ: Թուրքական բանակն անգամ մեկ դիվիզիայի կազմով մարտական գործողության իրական փորձ չունի: Ծոցի պատերազմի ժամանակ թուրքական ԳԾ-ը դեմ դուրս եկավ թուրքական բանակի ծավալուն ներգրավմանը՝ հղում կատարելով այն հանգամանքի վրա, որ նույնիսկ սեփական սահմանների մոտ բանակն ի վիճակի չէ բացազատելու, ապահովելու և կազմակերպելու գործողություններ անգամ 100-150 հազար թվակազմի համար: Ընդհանուր առմամբ, 1990-ականների սկզբներին թուրքական բանակի մարտական պատրաստության ու ռազմական գործողություններ վարելու առումով «ուղենիշային» փորձառություն եղավ ՆԱՏՕ-ի կազմում Ծոցի պատերազմին Թուրքիայի մասնակցու-

<sup>36</sup> Հովսեփյան Լ., 49 թուրք գերիները, չստացված թուրքական էնտեբեն և մանկերվու խաղաքարտը, <http://armenpress.am/arm/news/776366/49-turq-gerinery-chstacvats-turqakan-enteben-ev-manevrelu.html>.



թյունը<sup>37</sup>: Դեռ պատերազմից առաջ թուրքական ՁՈւ-ի ԳՇ-ը խիստ զգուշավոր դիրքորոշում որդեգրեց Ծոցի պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցում: Թուրքական զինվորական վերնախավը բացահայտ կասկածանքով էր վերաբերվում իր տարածքներից դուրս ռազմական ուժեր կենտրոնացնելու և պահելու կամ նույնիսկ Իրաքի հետ սահմանին լայնամասշտաբ արագընթաց, մոբիլ գործողություններ իրականացնելու հնարավորություններին ու կարողություններին: Եվ իրականում, Ծոցի պատերազմն ակնհայտ դարձրեց Թուրքիայի ՁՈւ-ի ժամանակակից չափորոշիչներով մարտական գործողություններ վարելու անպատրաստությունը<sup>38</sup>: Ընդ որում, այն ՆԱՏՕ-ի եզակի երկրներից էր, եթե ոչ միակը, որը ռազմական գործողությունների առումով չհամապատասխանեց այդ պահանջներին: Փաստորեն, Ծոցի պատերազմում Թուրքիայի մասնակցությունը և զինուժի տեղաշարժը 1974 թ. Կիպրոսի հյուսիսային հատվածի գրավումից հետո ամենամեծն էր, ինչն էլ ի ցույց դրեց թուրքական բանակի թերությունները:

Քրդական զինյալների դեմ պայքարը լայնածավալ մարտական գործողություններ չեն, և բացի այդ էլ անգամ այդ իրավիճակում ձեռքբերումները, մեղմ ասած, այնքան էլ փայլուն չեն: Մարտական փորձը բանակների համար չափազանց կարևոր է: Այստեղ հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական բանակը ՆԱՏՕ-ի կազմում ավանդաբար ամենավատ սպառազինությունն է ունեցել: Բավական է նշել, որ մինչև վերջերս թուրքական բանակը հեռահար զենիթահրթիռային համալիրներ չուներ, այն ժամանակ, երբ Հոլանդիան նման համալիրներ ստացել է 1990-ական թթ. կեսերին: Թուրքական բանակի իրասայելի ավելի քան կեսը մինչև օրս 1960-ականների ամերիկյան մեքենաներ են: Թուրքական բանակի կառուցվածքը մինչև 2010-2012թթ. Հին, արդեն վաղուց իրեն չարդարացրած գունդ-դիվիզիա-կորպուս մոդել է: Եվ սա այն դեպքում, երբ արևմտյան բոլոր բանակներն այս ամենից հրաժարվել էին դեռ 1990-ականներին: Որպեսզի ընթերցողն ավելի հստակ պատկերացնի, թե ինչ է նշանակում այս ամենը, բերենք մի օրինակ: Եվրոպական բանակները,

որոնք իրենց մակարդակով թուրքականից մի գլուխ բարձր են, 2011 թ. լիբիական պատերազմում լիարժեք ձայնադուրմ ապրեցին: Խնդիրն այն է, որ այդ բոլոր բանակներն առանց ամերիկյան բանակի, որը բոլորի հիմնական մատակարարն է ու կազմակերպիչը, դատապարտված են: Դրանցից ոչ մեկը չկարողացավ ցանցակենտրոն ռազմագործողություն իրականացնել անգամ սահմանափակ տարածքների վրա, փոքր ուժերով: Թուրքական բանակը, իր տեխնիկական հնարավորություններով և փորձով զիջելով անգամ այդ բանակներին, բնականաբար, շատ ավելի համեստ մարտական հնարավորություններ ունի:

Ներկայում թուրքական բանակն անցնում է փոխակերպումների լայն գործընթաց՝ կառուցվածքային-կազմակերպական և սպառազինության առումներով: Թուրքական ՁՈւ-երի կազմակերպման ու կառուցվածքային փոփոխությունների առումով վերջնական կողմնորոշում կամ հստակեցում դեռևս չկա, և այն գտնվում է ուսումնասիրությունների դաշտում: 1990-ական թթ. Սկսած, նոր մարտահրավերների ու սպառնալիքների ի հայտ գալուն զուգահեռ, նաև ռազմական ոլորտում սկսվեց հետմոդեռնի ժամանակաշրջան, որը կարողացան կյանքի կոչել և նոր իրողություններին համարժեք պաշտպանական ոլորտն արդիականացնել արևմտյան մի շարք երկրներ: Թուրքական բանակն էլ իր հերթին սկսեց արդիականացման ու փոխակերպման մի գործընթաց, որը սակայն մինչև օրս չի ավարտվել և նախնական փուլում է գտնվում:

Բանակների մարտունակության մասին հնարավոր կլինի խոսել միայն ռազմական գործողությունների պարագայում: Ինչ վերաբերում է մամուլում և տարբեր վերլուծականներում թուրքական բանակի՝ տարածաշրջանում ամենամարտունակն ու հզորը հանդիսանալու գնահատականներին, ապա դրա չափումը խիստ հարաբերական է: Թուրքական բանակի հիմնական խնդիրը մնում է զորամիավորումների կառավարման համակարգերի և փորձի հարցը:

- թուրքական բանակը, արևմտյան բանակների հետևորդը հանդիսանալով հանդերձ, ունի մեծաքանակ հին սպառազինություն,
- մինչև վերջերս դեռ ուներ գունդ-կորպուս-դիվիզիա կազմի մոդել.

<sup>37</sup> Ali Karaosmanoğlu, The Evolution of the National Security Culture and the Military in Turkey, Journal of International Affairs, Vol. 54, No. 1, Fall 2000, p. 211:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 30:



- այն երբեք լայնածավալ մարտական գործողությունների չի մասնակցել, զորամիավորումներն իրական բացազատում չեն իրականացրել
- բարձր սպայակազմը մարտական գործողությունների վարման փորձ չունի,
- բանակն արևմտյան բանակներին հատուկ մարտական գործողություններ վարելու համար թույլ հագեցած է ապահովման և ղեկավարման համակարգերով:

1974 թ. Կիպրոսի ռազմագործողությունը սահմանափակ էր իր բնույթով ու մասշտաբներով: Հյուսիսային Իրաքում անդրսահմանային գործողությունները ևս չեն կարող տալ թուրքական բանակի մարտական պատրաստության իրական պատկերը, քանի որ դրանք կրում էին սահմանափակ ու անհավասար բնույթ: Ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքում քուրդ զինյալների դեմ մոտ 30-ամյա գործողությունների փորձին, ապա կարելի է նշել բազմաթիվ ձախողումների մասին, իսկ թուրքական բանակի կորուստների թիվը նույնպես խոսում փաստ է:

Թուրքական բանակը լայնամասշտաբ ռազմական գործողությունների պարագայում անպայմանորեն հաշվի է առնում ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների հետ համատեղ գործողությունների անհրաժեշտությունը, այն է՝ թուրքական բանակը դեռևս լայնամասշտաբ ռազմական գործողությունների համար ապավինում է իր դաշնակիցների աջակցությանը՝ թե՛ սպառազինության և թե՛ կառավարման առումներով:

Վերջին շրջանում հատկապես թուրքական տարբեր լրատվամիջոցներով անընդհատ ներկայացվում են Թուրքիայի զինված ուժերի հզորությունը, առկա սպառազինությունը և համեմատություններ արվում Սիրիայի ռազմական ներուժի հետ՝ հիմնավորելով Թուրքիայի ակնհայտ առավելությունը: Իհարկե, թվաքանակի և սպառազինության առումով թուրքական բանակը առաջատար է, սակայն դա դեռ բավական չէ մարտունակության ապահովման համար, որովհետև այն իր մեջ բավական շատ բաղադրիչներ ունի, և թուրքական բանակի հիմնական խնդիրն այսօր էլ մնում է զորամիավորումների կառավարման համակարգերի և փորձի հարցը, որի մասին բարձրաձայնել են մի շարք թուրք զինվորականներ ու փորձագետներ: Այլ խոսքով՝ թուրքական բանակի հզորության կարծրատիպի հիմքում դեռևս ընկած են մեծ թվաքանակը և ՆԱՏՕ-ի անդամ լինելը:

**ՉԻՆ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՒԱՄՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Չին-թուրքական ռազմավարական համագործակցության հաստատումը**

Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1971թ. օգոստոսի 4-ին<sup>1</sup>, սակայն երկու երկրների միջև հարաբերությունները սկսել են զարգանալ միայն 1980-ականներից<sup>2</sup> և առավել ակտիվանալ 1990-ականների սկզբից<sup>3</sup>:

2000-ականների սկզբից Թուրքիայի ռազմավելտոր արտաքին քաղաքականության օրակարգում կարևոր տեղ սկսեց զբաղեցնել արևելասասիական և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների, մասնավորապես Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումը, որն աստիճանաբար վեր էր ածվում համաշխարհային նոր ուժային կենտրոնի<sup>4</sup>:

<sup>1</sup> Rosita Dellios and Nadir Kemal Yilmaz, Turkey and China: A Study in Symmetry, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Shanghai International Studies University, Vol. 2, No. 1, 2008, p. 16.

<sup>2</sup> John C.K. Daly, Sino-Turkish Relations Beyond the Silk Road, Association For Asian Research, New York, 04.05.2007. <http://www.asianresearch.org/articles/3005.html>

<sup>3</sup> Вэнь Цзябао провел переговоры с турецким коллегой по развитию двусторонних отношений и укреплению сотрудничества, Russian.News.Cn, 08.10.2010., <http://russian.news.cn/china/2010-10/08/c1354774.htm>

<sup>4</sup> Andrew McGregor, Arming for Asymmetric Warfare: Turkey's Arms Industry in the 21st Century, The Jamestown Foundation, June 2008, p. 2, [http://www.jamestown.org/uploads/media/Jamestown-McGregor\\_TurkishArmsIndustry.pdf](http://www.jamestown.org/uploads/media/Jamestown-McGregor_TurkishArmsIndustry.pdf)

Մեծ քանակյակ և ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամ-երկրներ Թուրքիայի և Չինաստանի միջև մերձեցումը պայմանավորված էր ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական գործոններով<sup>5</sup>: Երկու երկրներն աշխարհի զարգացած արդյունաբերական երկրներից և ամենաարագ աճող տնտեսություններից են<sup>6</sup>:

ՉԺՀ-ը՝ իբրև ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ, իր միջազգային հեղինակությամբ և գերտերության կարգավիճակի հասնելու հավակնություններով, հսկայական տնտեսական ներուժով և թուրքական արտադրանքի համար լայնածավալ շուկա ծառայելու հեռանկարով չէր կարող դուրս մնալ Անկարայի ռազմավարական շահերի ուղեծրից<sup>7</sup>: Թուրքիայի բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքը թույլ է տալիս վերջինիս Չինաստանից դեպի Ռուսաստան, Եվրոպա, Մերձավոր Արևելք (ՄԱ) և Կովկաս առևտրային հոսքերի հենակետի դեր խաղալ: Նշենք, որ Թուրքիան 1996 թ. մաքսային միության մեջ է ԵՄ-ի հետ և ազատ առևտրի պայմանագիր է ստորագրել տարածաշրջանի տասնյակից ավելի առանցքային պետությունների հետ<sup>8</sup>: Այս փաստը մեծացնում է Թուրքիայի գրավչությունը չինացի գործարարների համար<sup>9</sup>:

ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամակցությունը ևս Անկարային հնարավորություն է տալիս Պեկինի հետ կանոնավոր ուղղակի երկխոսություն վարել, համաշխարհային քաղաքականության և տղնտեսության կարևոր հիմնախնդիրների շուրջ<sup>10</sup>:

<sup>5</sup> Head of Investment Support and Promotion Agency, Mr. Alparslan Korkmaz Gives Interview with People's Daily, Embassy of the People's Republic of China in the Republic of Turkey, 04.01.2010. <http://tr.china-embassy.org/eng/ztgx/t649614.htm>

<sup>6</sup> Senior CPC official: Healthy Bilateral Relations Serve the Interests of Chinese, Turkish Peoples, Embassy of the People's Republic of China in the Republic of Turkey, 16.04.2010. <http://tr.china-embassy.org/eng/ztgx/t682637.htm>

<sup>7</sup> И.А., Свиштунова, Об отношениях Турецкой Республики с Китаем, Институт Ближнего Востока, 28.11.2010. <http://www.iimes.ru/rus/stat/2010/28-11-10.htm>

<sup>8</sup> Head of Investment Support and Promotion Agency, Mr. Alparslan Korkmaz Gives Interview with People's Daily, նշվ. աշխ., էջ 1:

<sup>9</sup> Turkish State Minister Mr. Zafer Çağlayan Gives Interview with People's Daily, Embassy of the People's Republic of China in the Republic of Turkey, 04.01.2010. <http://tr.china-embassy.org/eng/ztgx/t649610.htm>

<sup>10</sup> И.А., Свиштунова, Визит президента Турции А. Гюля в Китай, Институт Ближнего Востока, 08.07.2009, стр. 1. <http://www.iimes.ru/rus/stat/2009/08-07-09a.htm>

2000-ականների երկրորդ կեսից Թուրքիան ձեռնամուկ ևրգավ Պեկինի հետ ռազմավարական հարաբերությունների հաստատման գործընթացին, որն իր իրավական ձևակերպումը ստացավ 2010 թ. հոկտեմբերին՝ երկու երկրների միջև ռազմավարական համագործակցության հաստատման վերաբերյալ ստորագրված համատեղ հոչակագրում<sup>11</sup>: Որոշ փորձագետների կարծիքով այդուհետ Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական առանցքն Արևմուտքից սկսեց տեղափոխվել դեպի Արևելք, հակառակ Անկարայի պնդումներին, թե Չինաստանի հետ հարաբերությունները չեն կարող զարգանալ իբրև այլընտրանք Արևմուտքին կամ վերջինիս անտեսման գնով<sup>12</sup>:

### **Չին-թուրքական «Անատոլիական արժիվ 2010» համալուղ գորավարժությունները**

Չին-թուրքական ռազմավարական համագործակցությունը չսահմանափակվեց քաղաքական և տնտեսական ոլորտներով, այլ տեղափոխվեց ռազմական ոլորտ: 2010 թ. աշնանը Թուրքիան իր պատմության մեջ առաջին անգամ ՉԺՀ-ի հետ համատեղ գորավարժություններ անցկացրեց «Անատոլիական արժիվ 2010» ռազմաօդային ամենամյա ուսումնավարժանքների շրջանակներում, որոնք ավանդաբար վարում էր ԱՄՆ-ի և Իսրայելի հետ<sup>13</sup>: Նշենք, որ մինչև 2008 թ. Իսրայելը բազմիցս օգտագործել է Թուրքիայի օդային տարածքը՝ մասնակցելով «Անատոլիական արժիվ» ամենամյա զորավարժություններին: Սակայն 2010 թ. Գազայի հատվածի համար մարդասիրական օգնություն տեղափոխող թուրքական նավերի պահակախմբի վրա իսրայելցիների հարձակումից հետո, որն իր դեպ ՉԺՀ-ի ԱԳՆ-ը դատապարտեց (մայիսի 31-ին), Իսրայելի և Թուրքիայի

<sup>11</sup> Turkey Issue Joint Declaration on Establishing Strategic Relationship of Cooperation, Xinhua, english.news.cn, 09.10.2010. <http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/09/c13547897.htm>; China, Turkey Upgrade Ties to Strategic Cooperative Relationship During Wen's Visit, Xinhua, english.news.cn, 09.10.2010. [http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/09/c\\_13548521.htm](http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/09/c_13548521.htm)

<sup>12</sup> Turkey, China Move for "New Cooperation Paradigm", Today's Zaman, 03.11.2010. <http://www.todayszaman.com/news-226168-100-turkey-china-move-for-new-cooperation-paradigm.html>

<sup>13</sup> Анкара меняет Израиль и США на Китай и Иран: Турция в зеркале СМИ, ИА REGNUM, 12.10.2010. <http://www.regnum.ru/news/polit/1335201.html>



միջև հարաբերությունները վատթարացան: Միջադեպից հետո Իսրայելը, ապա նաև ԱՄՆ-ը հրաժարվեցին մասնակցել վերոնշյալ գորավարժություններին<sup>14</sup>:

Ըստ էության «Անատոլիական արծիվ»-ը ՆԱՏՕ-ի անդամ-երկրի հետ Պեկինի կողմից երբևէ անցկացրած առաջին զորավարժություններն էին, որոնք առաջացրին Արևմուտքի մտահոգությունը, հատկապես ամերիկյան և ՆԱՏՕ-ական տեխնոլոգիաները Չինաստանի ձեռքն անցնելու առնչությամբ<sup>15</sup>: Սակայն, ըստ ԱՄՆ-ի պաշտպանական գերատեսչության ներկայացուցչի, Անկարան հավաստիացրել էր Վաշինգտոնին, որ ձեռնարկել է բոլոր միջոցառումները ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի ռազմական տեխնոլոգիաների գաղտնիության պաշտպանության համար և խոստացել, որ ԱՄՆ-ում արտադրված «F-16» տեսակի ռեակտիվ ինքնաթիռները չեն օգտագործվի զորավարժանքների ընթացքում<sup>16</sup>:

Չնայած Թուրքիան ձեռնպահ մնաց ռուսումավարժանքների ընթացքում իր առավել առաջադեմ «F-16» ռեակտիվ ինքնաթիռներն օգտագործելուց՝ սահմանափակվելով միայն «F-4» տեսակով, այնուհանդերձ Չինաստանի հետ ռազմական կապերն այդպիսի մակարդակի բարձրացնելու ուղղությամբ Անկարայի որոշումը վկայում էր Թուրքիայի արտաքին ռազմավարության մեջ նոր գերակայությունների հնարավոր ուրվագծման մասին<sup>17</sup>:

Իր հերթին Պեկինի մասնակցությունն «Անատոլիական արծիվ 2010»-ին խոսում էր Մերձավոր Արևելքում (ՄԱ) Չինաստանի անմիջական աշխարհագրական սահմանագծից դուրս, ԶԺՀ-ի ժողովրդական ազատագրական բանակի (ԺԱԲ) կողմից երկարաժամկետ միջակայքում մարտական առաքելություն

ծավալելու կարողության և արշավային մարտական հնարավորությունների աճի մասին<sup>18</sup>:

Հորավարժանքների ընթացքում չինական ԺԱԲ-ի և թուրքական հատուկ ուժայինների զործադրած գրոհային մարտավարությունն իրականացվում էր ապստամբական և ահաբեկչական շարժումների ապաստանման համար բարենպաստ համարվող և բրաշատ ու լեռնային (չբացահայտված) տարածքում<sup>19</sup>:

Հարկ է նշել, որ Թուրքիա տանող ճանապարհին ԺԱԲ-ի օդուժի ինքնաթիռները վերալիցքավորվեցին Պակիստանում և Իրանում: Սա Իրանի Իսլամական Հանրապետության պատմության մեջ երկրի տարածքում օտարերկրյա ռազմական ինքնաթիռների իրականացրած առաջին վայրէջքի և վերալիցքավորման դեպքն էր<sup>20</sup>: Օրամայի վարչակազմը քննադատեց Թուրքիային՝ Պակիստանի և Իրանի տարածքով չինական կործանիչ ինքնաթիռներ ուղարկելու հարցում Իրանի հետ ռազմական համաձայնության գալու համար<sup>21</sup>: Իրականում Իրանի առնչությամբ Արևմուտքի մտահոգություններն անհիմն չէին, եթե հաշվի առնենք այն փաստը, որ 2010 թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 4-ն Իրանի հարցով Չինաստան այցելած թուրք արտգործնախարար Դավութօղլուի հայտարարության համաձայն՝ կողմերը մանրամասն քննարկել էին Իրանի միջուկային ծրագրի խնդիրը, և նրանց տեսակետները բավականին համընկնում էին<sup>22</sup>:

Որոշ վերլուծաբանների կարծիքով չին-թուրքական զորավարժանքները ցույց տվեցին, որ Թուրքիան կարող էր հիմնովին փոխել իր արտաքին քաղաքականության և անվտանգության ռազմավարությունը՝ ըլրդ անջատողականների նկատմամբ շարունակական ճնշման հարցում չինական ազդե-

<sup>14</sup> Китайская сторона осуждает Израиль за нападение на караван турецких судов с гуманитарными грузами для сектора Газа, Жэньминь Жибао, 01.06.2010. <http://russian.people.com.cn/31521/7006714.html>

<sup>15</sup> Chris Zambelis, Sino-Turkish Strategic Partnership: Implications of Anatolian Eagle 2010, European Dialogue, European Energy Security and Related Issues, 19.01.2011, p. 9. <http://eurodialogue.org/eu-central-asia/Sino-Turkish-Strategic-Partnership-Implications-of-Anatolian-Eagle-2010>

<sup>16</sup> Анкара меняет Израиль и США на Китай и Иран, ԵՂՄ., էջ 1:

<sup>17</sup> Saban Kardas, Turkey Seeks Closer Economic and Strategic Ties with China, Eurasia Daily Monitor, Vol.: 7 Issue: 186, The Jamestown Foundation, 15.10.2010, p. 1. [http://www.jamestown.org /single/?no\\_cache=1&tx\\_ttnews \[tt\\_news\]=37038](http://www.jamestown.org /single/?no_cache=1&tx_ttnews [tt_news]=37038)

<sup>18</sup> Chris Zambelis, Sino-Turkish Strategic Partnership: Implications of Anatolian Eagle 2010, ԵՂՄ., էջ 9:

<sup>19</sup> Xinhua News Agency, 9.11.2010; South China Morning Post, Hong Kong, 09.11.2010.

<sup>20</sup> «Турецкий Гамбит»: потери на Западе – выигрыши на Востоке?, Українська національна асамблея (УНА-УНCO), 06.12.10. <http://una-unso.in.ua/?p=14461>

<sup>21</sup> Growing Ties between Turkey, China, Iran Worry Israel and U.S., Haaretz Daily Newspaper, 07.10.2010. <http://www.haaretz.com/print-edition/news/growing-ties-between-turkey-china-iran-worry-israel-and-u-s-1.317583>

<sup>22</sup> Chris Zambelis, Sino-Turkish Strategic Partnership, ԵՂՄ., էջ 11:

ցիկ աջակցությունը ստանալու դիմաց<sup>23</sup>: «Անատոլիական Արծիվ 2010»-ը նախադեպ կարող էր ծառայել Չինաստանի և Թուրքիայի միջև հետագա համատեղ զորավարժությունների, զինվորականների վերապատրաստման և համագործակցության այլ ձևերի զարգացման համար: Արևմտյան վերլուծաբանները հնարավոր սցենարներ էին առաջ քաշում չին-թուրքական զորավարժությունների շարունակման հնարավորության և հակաարևմտյան պետությունների ցանցի հետագա ճյուղավորման վերաբերյալ<sup>24</sup>:

Որոշ փորձագետներ գտնում էին, որ Չինաստանը ցանկանում էր ջերմացնել Թուրքիայի հետ հարաբերությունները թուրք զինվորականության հետ անմիջական համագործակցություն հաստատելու միջոցով՝ միաժամանակ խուսափելով ուղղորակյալ հիմնախնդրի սրումից: Ենթադրվում էր, որ զորավարժությունները կարող էին մեծացնել Չինաստանի նկատմամբ «Թուրքիայի լծակները» ուղղորների «վիճակը բարելավելու» նպատակով<sup>25</sup>:

### **Թուրքիայի արձագանքը 2009 թ. ամռանը Սինցզյան-Ույղուրական ինքնավար մարզում (ՍՈՒԻՄ) տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ**

Սինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, ուղղորների և Սինցզյանի թյուրքախոս այլ էթնիկ խմբերի հետ պատմամշակութային ընդհանրությունից ելնելով, Թուրքիան ոչ միայն հնարավորություն էր տվել ուղղուր վտարանդիններին բնակություն հաստատելու իր տարածքում, այլև սատարելու իր ՉԺՀ-ի դեմ անջատողական շարժմանն ուղղված պայքարում ուղղորական առավել ակտիվ, այսպես կոչված, «Արևելյան Թուրքեստանի ազատագրական

շարժման» (ԱԹԱՀ) կենտրոնակայանի հիմնադրման և թուրքական բանակի ուսումնավարժական ծրագրեր ուղղորների ընդգրկման գործին:

Ավելին, Ստամբուլում 1976 թ. հիմնադրված «Արևելյան Թուրքեստանի հիմնադրամի»<sup>26</sup> աջակցությամբ «ԱԹԱՀ»-ը 1987 թ. պաշտոնապես ճանաչվել էր ոչկառավարական կազմակերպություն: «Ույղուրստան պետություն»՝ տարածքը և սահմանվել էր Ստամբուլում 1996 թ. կայացած ուղղորական համաշխարհային հետնաբեմում: Ընդ որում, նշվում էր, որ «Ույղուրստանի» հիմնադրման համար անհրաժեշտ է պայքարել բոլոր մատչելի, ընդհուպ զինված միջոցներով<sup>27</sup>:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում Պեկինի ռազմավարական դիրքերին առավել մեծ վտանգ սկսեց ներկայացնել տարածաշրջանում գլխավոր դերակատարության հավակնող և ուղղուր ազգայնականության գլխավոր հովանավոր համարվող Թուրքիան, որը ոչ միայն բարոյահոգեբանական ու կրոնական, այլև ֆինանսական ու ռազմական աջակցություն էր ցուցաբերում նրանց:

Այնուհանդերձ, XX դարի վերջին Պեկինը փորձում էր իր «հարաբերությունները բարելավել» Թուրքիայի հետ՝ համագործակցելով ոչ միայն երկկողմանի հիմնախնդիրների կարգավորման, այլև Թուրքիայում ուղղորների գործունեությանը վերջ դնելու ուղղությամբ: 2000 թ. փետրվարի 14-ին երկու երկրների միջև պետական անվտանգության ոլորտում համագործակցության վերաբերյալ ստորագրված համաձայնագրով պայմանավորվածություն էր ձեռք բերվել Թուրքիայում հակաչինական ահաբեկչական գործողությունների դեմ պայքարի ուղղությամբ: Իսկ 2002 թ. ապրիլի 15-ին ՉԺՀ-ի Պետխորհրդի վարչապետի՝ Անկարա կատարած այցի ընթացքում Թուրքիայի

<sup>23</sup> Jorge Benitez, A Coming Sino-Turkish Axis?, Atlantic Council, Washington, 10.12.2010, <http://www.acus.org/natosource/coming-sino-turkish-axis>

<sup>24</sup> Michael Auslin, A Coming Sino-Turkish Axis?, Ankara is Turning away from Israel and Cozying up to China, The Wall Street Journal, 08.12.2010. <http://online.wsj.com/article/SB100014240527487034935045760073835299942.html>

<sup>25</sup> Turkey-China Military Exercises: What Do They Mean for the Uyghurs?, China-Defense-mashup, 04.11.2010, p. 1-2. <http://www.china-defense-mashup.com/turkey-china-military-exercises-what-do-they-mean-for-the-uyghurs.html>

<sup>26</sup> Yitzhak Shichor, Ethno-Diplomacy: The Uyghur Hitch in Sino-Turkish Relations, Policy Studies 53, East-West Center, Institute of Southeast Asian Studies, Singapore, 2009, p. 18. <http://www.eastwestcenter.org/fileadmin/stored/pdfs/ps053.pdf>

Ըստ ուղղուր անջատողականների՝ «Ույղուրստան պետություն» աշխարհագրորեն պետք է ընդգրկեր ոչ միայն Սինցզյանի ողջ տարածքը, այլև Ղազախստանի ավաթայական մարզի Չիլիկ շրջանն ու Ղրղզստանի արևելյան մի քանի շրջաններ:

<sup>27</sup> А. Рузиев, Синьцзянский сепаратизм. По китайскому монстру могут ударить уйгурской дубиной, Центр Азия, 15.05.2002. <http://www.centrasia.ru/news2.php?st=1021443240>



վարչապետ Բյուեթ Էջևիթը պատրաստակամություն հայտնեց չինական կազմակերպությունների հետ հակահարեկնական պայքարի խորացման ուղղությամբ<sup>28</sup>:

Այնուհանդերձ, թուրքական կառավարությունը, մասնավորապես Թուրքիայի վարչապետը, խիստ քննադատությամբ և դատապարտմամբ հանդես եկավ Սինցզյանում 2009 թ. ամռանը տեղի ունեցած անկարգությունների կապակցությամբ՝ որակելով դրանք որպես Չինաստանի իշխանությունների կողմից ուղղոր մուսուլմանների նկատմամբ իրականացված «ցեղասպանություն»<sup>29</sup>:

Պաշտոնական Պեկինն անմիջապես հակադարձեց Անկարային՝ ընդգծելով, որ Սինցզյանի խնդիրը բացառապես ՉժՀ-ի ներքին գործն է<sup>30</sup>: Չինական մամուլում Թուրքիայի պատմական հիշողությունը թարմացնող հողվածներ տպագրվեցին՝ XX դարի սկզբին հայերի ցեղասպանության փաստի հետ կապված: Իսկ «Reuters»-ն անդրադարձավ «ցեղասպանության» հարցում Չինաստանի դեմ Էրդողանի մեղադրանքին՝ մատնանշելով, որ ցեղասպանություն որակման հանդեպ զգայուն են հատկապես Թուրքիայում, քանի որ վերջինս չի ճանաչում Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան թուրքերի իրականացրած հայերի սպանոն իբրև ցեղասպանություն<sup>31</sup>:

Հոնկոնգի «Asia Sentinel»-ի սյունակագիր Սիլվիա Հուին ոչ միայն անհեթեթություն համարեց Էրդողանի կողմից ցեղասպանություն եզրն օգտագործվելը, այլև ակնարկեց հայերի

հանդեպ օսմանյան թուրքերի իրականացրած XX դարի առաջին ցեղասպանության մասին<sup>32</sup>:

Թափանցիկ ակնարկներ արվեցին նաև Թուրքիայում քրդերի իրավունքների ոտնահարման և Պեկինի կողմից Անկարայի դեմ քրդերի հետ ունեցած կապերն օգտագործվելու անհրաժեշտության ուղղությամբ<sup>33</sup>: Չինական պաշտոնական լրատվամիջոցները, քննադատելով Էրդողանին՝ «Պեկինին առաջարկում էին փոխել վերաբերմունքը Քրդական Աշխատավորական կուսակցության նկատմամբ և պաշտպանել վերջինիս անկախության ձգտումը»<sup>34</sup>: ՉժՀ-ի համացանցային ֆորումներն առաջին անգամ իրենց ձայնը բարձրացրին ի պաշտպանություն քուրդ անջատողականների<sup>35</sup>:

Հետտրական հարցադրմամբ հանդես եկավ նաև Թուրքիայում ՉժՀ-ի դեսպանը, թե այդ ինչպես պատահեց, որ միջադեպերը տեղի ունեցան հատկապես Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի՝ 2009 թ. Սինցզյան կատարած այցից անմիջապես հետո<sup>36</sup>:

Հարկ է նշել, որ պաշտոնական Պեկինի համոզմամբ 2009 թ. հուլիսյան անկարգությունների հետևում կանգնած էր դրսից հովանավորվող «Ույղուրների համաշխարհային կոնգրես» անջատողական կազմակերպությունը<sup>37</sup>: ՍՈՒԻՄ-ի կառավարության ղեկավար Նուր Բեքրիի տեսակետի համաձայն՝ Չինաստանի իշխանություններին մարտահրավեր էին նետել «չարիքի երեք ուժերը»՝ ահաբեկչությունը, ծայրահեղականությունը և անջատողականությունը: Նրա կարծիքով կազմակերպված քնույթ կրող անկարգությունների հետևում կանգնած

<sup>28</sup> Китай, Факты и цифры 2003, Издательство “Синьсин”, Пекин, стр. 94.

<sup>29</sup> Emrullah Uslu, Ankara's Reaction to Xinjiang Crisis Raises Bilateral Tension, Eurasia Daily Monitor, The Jamestown Foundation, Vol. 6, Issue: 135, 15.07.2009, p. 1. [<sup>30</sup> Turkish PM Erdogan Likens Xinjiang Violence to 'Genocide', FRANCE 24 International News, 10.07.2009. <http://www.france24.com/en/20090710-turkish-pm-erdogan-xinjiang-violence-genocide-turkey-uighurs-han-trade-beijing-china>](http://www.jamestown.org/programs/edm/single?tx_ttnews[tt_news]=35268&tx_ttnews[backPid]=485&no_cache=1; Today's Zaman, 16.07.2009.</a></p>
</div>
<div data-bbox=)

<sup>31</sup> Daren Butler, Turkish PM 'Genocide' Comment Triggers China Ties Concern, Reuters, 15.07.2009. <http://blogs.reuters.com/global/2009/07/15/turkish-pm-genocide-comment-triggers-china-ties-concern/>

<sup>32</sup> Sylvia Hui, 'Genocide' in Xinjiang, Asia Sentinel, 13.07.2009. [http://www.asia-sentinel.com/index2.php?option=com\\_content&do\\_pdf=1&id=1966](http://www.asia-sentinel.com/index2.php?option=com_content&do_pdf=1&id=1966)

<sup>33</sup> Ambassador Gong Xiaosheng: Friendship and Cooperation between China and Turkey in Line with Our Common Interests, Embassy of the People's Republic of China in the Republic of Turkey, 03.08.2009. <http://tr.china-embassy.org/eng/ztgx/t576720.htm>

<sup>34</sup> People's Daily, 14.07.2009.

<sup>35</sup> Չինաստանը պետք է հակադարձի Թուրքիային, «ԱԶԳ» օրաթերթը #137, 23.07.2009 [http://www.azg.am/wap/?nl=AM&id=2009072304&Base\\_PUB=0](http://www.azg.am/wap/?nl=AM&id=2009072304&Base_PUB=0)

<sup>36</sup> Ambassador Gong Xiaosheng: Friendship and Cooperation between China ..., նշվ. աշխ., էջ 1:

<sup>37</sup> В китайском Урумчи введен комендантский час, Известия, 07. 07.2009. <http://izvestia.ru/news/454126>

էր վերոնշյալ Կոնգրեսի առաջնորդը՝ տարագրության մեջ գտնվող Ռափիա Քադիրը<sup>36</sup>:

Ամեն դեպքում հարկ է նկատել, որ Թուրքիան շահագրգռված չէր Չինաստանի հետ հարաբերությունները սրելով: Անկարան հաշվի էր առնում ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և Եվրոպայի՝ Թուրքիայի հետ հարաբերություններում նկատվող լարվածությունը և վերջին տարիներին ՄԱ-ում ԱՄՆ-ի վարած քաղաքականության հարցում ունեցած տարածայնությունները, ԵՄ-ի անդամակցության հարցում Թուրքիային մերժումը և մի շարք այլ գործոններ: Թուրք ռազմավարների կարծիքով Չինաստանը Թուրքիայի համար նույնքան կարևոր էր, որքան ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Ճապոնիան՝ շնորհիվ միջազգային հարաբերություններում զբաղեցրած դիրքի և համաշխարհային գերտերության վերածվելու հեռանկարի<sup>37</sup>: Չինաստանը Թուրքիայում, ինչպես նաև ՄԱ-ի մի շարք այլ երկրներում, ընկալվում է իբրև միջազգային խնդիրներում իր ազդեցությունն աստիճանաբար ընդլայնող և ԱՄՆ-ի գերիշխանությանը հետագայում մարտահրավեր նետող տերություն: Ուստի, թուրք փորձագետները կարծում էին, որ տարածաշրջանային անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով՝ Թուրքիան Շանհայի համագործակցության կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ստանալու դիմաց կարող է Չինաստանին առաջարկել ռազմավարական կամուրջի իր դիրքերը, ինչպես նաև Սինցզյանի ահաբեկչության դեմ պայքարում իր համագործակցությունը<sup>38</sup>: Փոխարենը Անկարան ակնկալում էր ապահովել Պեկինի միջազգային աջակցությունը հայկական, Քրդական աշ-

խատավորական կուսակցության և Կիպրոսի հետ ունեցած հիմնախնդիրներում<sup>41</sup>:

### Թուրքիայի և Չինաստանի դիրքորոշումը միջազգային որոշ հիմնախնդիրների շուրջ

Անկարայի և Պեկինի դիրքորոշումները համընկնում էին նաև Իրանի միջուկային խնդրի հարցում<sup>42</sup>, որը պայմանավորված էր ոչ միայն Իրանում Չինաստանի էներգետիկ ու ներդրումային շահերով, այլև չին-ամերիկյան մրցակցության համատեքստով՝ իբրև հակակշիռ Վաշինգտոնի կողմից Թայվանին շարունակ ցուցաբերվող ռազմաքաղաքական աջակցության և Ասիախաղաղովկիանոսյան տարածաշրջանում Պեկինի կենսական շահերի դեմ ամերիկյան սպառնալիքներին<sup>43</sup>:

Հարկ է նշել, որ Պեկինը սատարեց Թուրքիայի, Պակիստանի և Աֆղանստանի միջև հակաահաբեկչական պայքարում իրականացվող համագործակցությունը՝ կիսելով Աֆղանստանում ու Պակիստանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունների և տարածաշրջանային անկայունության հարցում Անկարայի հետ ունեցած ընդհանուր մտահոգությունները<sup>44</sup>:

Ինչ վերաբերում է վերջին շրջանում ՄԱ-ում տեղի ունեցող զարգացումներին և այսպես կոչված «Արաբական գարնան» նկատմամբ երկու պետությունների զբաղեցրած դիրքորոշմանը, ապա արաբական երկրների (որտեղ Պեկինն ունի էներգետիկ և ներդրումային շահեր, որոշ երկրների հետ՝ ռազմավարական մակարդակի հասնող համագործակցություն) նկատմամբ Պեկինն Անկարային տրամազծորեն հակառակ

<sup>36</sup> И. Антонов, А. Максимов, В Китае появились своя Ичкерия, Известия, 06.07.09 <http://www.izvestia.ru/world/article3130358/>

1999 թ. օգոստոսին Ռափիա Քադիրը ձերբակալվեց և 8 տարվա ազատազրկման դատապարտվեց, իսկ ընտանիքն արտաքսվեց ԱՄՆ: Այս մասին տե՛ս China's Fearful Muslim Minority, Relations with China's Ethnic Minorities are Tense, BBC News, 08.01.2002.

<sup>37</sup> Tao Zan, Uncertainty and Ambiguity: Turkey's Perception on the Rise of China, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Shanghai International Studies University, Vol. 3, No. 1, 2009, p. 76. <http://mideast.shisu.edu.cn/picture/article/33/b7/b8/acafbd24175a68760eeb598408c/27031900-592a-49a3-ac7d-f03e69158b2c.pdf>

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>41</sup> Ümit Nazmi Hazir, The Two Actors of Regional and Global Change: Turkey and China, Institute of Strategic Thinking, 12.03.2012. <http://www.sde.org.tr/en/news/1810/the-two-actors-of-regional-and-global-change-turkey-and-china.aspx>

<sup>42</sup> Chris Zambelis, Sino-Turkish Strategic Partnership, էջվ. աշխ., էջ 11:

<sup>43</sup> Chris Zambelis, Shifting Sands in the Gulf: The Iran Calculus in China-Saudi Arabia Relations, China Brief, The Jamestown Foundation, Vol. X, Issue 10, 13.05.2010, p. 5. [http://www.jamestown.org/uploads/media/\\_cb\\_010\\_43.pdf](http://www.jamestown.org/uploads/media/_cb_010_43.pdf).

<sup>44</sup> Davutoglu's Visit and Shifting Turkish-Chinese Relations, Institute of Strategic Thinking, Ankara, 06.05.2011. <http://www.sde.org.tr/en/news/1484/davutoglus-visit-and-shifting-turkish-chinese-relations.aspx>



քաղաքականություն է վարում<sup>45</sup>: Չինաստանը չափազանց մեծ զգուշավորություն է հանդես բերում արաբական վարչակարգերի դեմ պատժամիջոցների կիրառման, այդ երկրների ներքին գործերին միջամտության և տարածքային ամբողջականության պահպանման հարցում՝ վերջիններին Ռուսաստանի հետ ՄԱԿ-ի ԱԽ-ի շրջանակներում քաղաքական աջակցություն ապահովելով<sup>46</sup>:

Նշենք, որ 2012 թ. ապրիլի 11-ին Պեկինում ՉԺՀ-ի նախագահ Հու Չինթաոյի և Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումն անցավ լարված մթնոլորտում: Պեկինը խիստ դատապարտեց Սիրիայի նկատմամբ լրացուցիչ պատժամիջոցներ մտցնելու նպատակով Անկարայի առաջարկությունը<sup>46</sup>:

Իսկ 2015 թ. սկզբին Ռեջեփ Թայիփ Էրդողանը հանդես եկավ Ռուսաստանի և Չինաստանի հասցեին ուղղված խիստ քննադատությամբ՝ մեղադրելով վերջիններին Սիրիայի նկատմամբ արտաքին միջամտությունը խոչընդոտելու և ճգնաժամի լուծման ուղղությամբ բոլոր փորձերը «կասեցնելու» մեջ<sup>47</sup>:

**Չին-թուրքական անտրապոնտեսական համագործակցությունը**

Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի, մասնավորապես Չինաստանի նկատմամբ Թուրքիայի տնտեսական ռազմավարությունն ուղղված է ոչ միայն ՉԺՀ արտահանման

խթանմանը, այլև սեփական գործարար հնարավորությունների մեծացմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բանկային համակարգը, պայմանագրային և խորհրդակցական ծառայությունները, ռազմական արդյունաբերությունը, ազատ առևտրի գոտիների ստեղծումը, տրանսպորտը և հեռահաղորդակցությունը, տուրիզմը և փոքր ու միջին ձեռնարկատիրությունը: Չինական ընկերություններն իրենց թուրք գործընկերների հետ համագործակցում են տրանսպորտի, գիտության և տեխնոլոգիաների, վերականգնվող էներգետիկ պաշարների, միջուկային էներգիայի, նավաշինության, տեղեկատվական տեխնոլոգիաների և մի շարք այլ ոլորտներում<sup>48</sup>:

2010 թ. հոկտեմբերի 8-ին Անկարայում Չինաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեցին տնտեսական և առևտրային, ենթակառուցվածքների և տեխնիկական խորհրդատվական համագործակցության, մշակութային փոխանակման, կապի և տեղեկատվության տեխնիկական համագործակցության, ծովային, էներգետիկ օբյեկտների, երկաթուղային ոլորտներում տնտեսական և մշակութային համագործակցության զարգացման վերաբերյալ մի շարք պայմանագրեր<sup>49</sup>: Երկու երկրները համաձայնության եկան երկկողմանի առևտրում դոլարի փոխարեն սեփական արժույթների՝ յիբայի և յուանի օգտագործման հարցում: Չինաստանը դարձավ երրորդ երկիրը (Թուրքիայի մյուս խոշոր առևտրային գործընկերներից՝ Ռուսաստանից և Իրանից հետո), որի հետ Թուրքիան նման համաձայնագիր էր ստորագրել<sup>50</sup>: Անկարան ու Պեկինը հայտնեցին երկու երկրների միջև առևտուրը եռապատկելու՝ 16 մլրդ ԱՄՆ

<sup>45</sup> Selcuk Colakoglu, Turkey-China Relations: Seeking a Strategic Partnership, Turkish Weekly, 17.04.2012. <http://www.turkishweekly.net/columnist/3612/turkey-china-relations-seeking-a-strategic-partnership.html>

<sup>46</sup> Այս մասին մանրամասն տե՛ս А. Арутюнян, Вокруг китайско-ливийских отношений, Африка в глобальном мире: прошлое, настоящ и будущее. Материалы 10 Школы молодых африканистов России, Институт Африки РАН, Москва, 2011г., стр. 7-12; Չինաստանի դիրքորոշումն «արաբական գարնան» նկատմամբ, Մերձավոր Արևելք. Քաղաքական փոխակերպումներ, հատոր 2 (1), Ժամանակակից եվրասիա, եր., 2013 թ., էջ 64-104:

<sup>46</sup> Peter Mattis, China Fêtes Turkish Leader as Beijing Recognizes Ankara's Growing Role, China Brief, The Jamestown Foundation, Vol. XII, Issue 8, 12.04.2012, p. 2.

<sup>47</sup> Эрдоган выступил с резкой критикой России и Китая, якобы «препятствующих сирийскому урегулированию», Сирийское арабское информационное агентство САНА, 03.02.2015. <http://www.sana.sy/ru/?p=25279>

<sup>48</sup> Turkish State Minister Mr. Zafer Çağlayan Gives Interview with People's Daily, նշվ. աշխ., էջ 1:

<sup>49</sup> China, Turkey Sign Pacts on Economic, Cultural Cooperation, Xinhua, english.news.cn, 08.10.2010, p. 1. [http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/08/c\\_13547632.htm](http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/08/c_13547632.htm); China, Turkey Ink 8 Cooperation Agreements, China Knowledge Online, 12.10.2010, p. 1. [http://www.chinaknowledge.com/Newsires/News\\_Detail.aspx?type=1&cat=INS&NewsID=37601](http://www.chinaknowledge.com/Newsires/News_Detail.aspx?type=1&cat=INS&NewsID=37601); Вэнь Цзябао присутствовал на церемонии подписания 8 соглашений о сотрудничестве между Китаем и Турцией, Russian. News.Cn, 10.09.2010, стр. 1. [http://russian.news.cn/china/2010-10/09/c\\_13548068.htm](http://russian.news.cn/china/2010-10/09/c_13548068.htm)

<sup>50</sup> China, Turkey Issue Joint Declaration on Establishing Strategic Relationship of Cooperation, Xinhua, english.news.cn, 09.10.2010, p. 1. <http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/09/c13547897.htm>



դոլարից (մինչև 2015 թ.) 50 մլրդ դոլարի, իսկ մինչև 2020 թ.<sup>51</sup> 100 մլրդ դոլարի հասցնելու իրենց մտադրության մասին<sup>51</sup>:

Նշենք, որ Չինաստանը Թուրքիա է արտահանում հիմնականում մեքենաներ և էլեկտրատեխնիկական արդյունաբերական ապրանքներ, մեքենաշինական ապրանքատեսականի, մանրագործվածք, քիմիական արտադրանք, շինարարական ապրանքներ, խաղալիքներ և ներմուծում է գունավոր մետաղներ ու հանքանյութ, ինչպիսիք են բորը և խրոմը<sup>52</sup>: 2012 թ. Չինաստանը դարձավ Թուրքիայի երրորդ ամենամեծ առևտրային գործընկերը, Թուրքիա արտահանողներից առաջինը, մինչդեռ Թուրքիան առևտրային ամենամեծ դեֆիցիտն ունի Չինաստանի հետ<sup>53</sup>:

Հարկ է նկատել, որ հակառակ երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման, Թուրքիան ու Չինաստանը միջազգային առևտրի որոշ ոլորտներում մրցակիցներ են: Երկու երկրների միջև առևտրային հարաբերություններում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել՝ առևտրի անհավասարակշռությունը, արդյունաբերական համանման ոլորտներում Թուրքիայի և Չինաստանի միջև առկա խիստ մրցակցությունը<sup>54</sup>:

Խնդիրն այն է, որ միջազգային շուկայում չինական թեթև

արդյունաբերական էժան արտադրանքով զերհագեցածությունը լրջորեն վնասում է թուրքական մանրագործվածքների և հագուստի արտադրությանը: Այն Թուրքիայի արդյունաբերության հիմնական ոլորտներից մեկն է, որն ապահովում է երկրի համախառն ներքին արդյունքի 10%-ը և աշխատուժի զբաղվածության 21%-ը<sup>55</sup>: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում Չինաստանը նույնպես սկսել է զբերակալող դեր խաղալ թուրքական շուկայում, որը չի կարող չմտաժողել Անկարային<sup>56</sup>:

Այնուհանդերձ, մնալով մրցակիցներ տեքստիլի և էլեկտրոնիկայի ոլորտներում, երկու երկրներն աշխատում են ավելի հավասարակշռված առևտրային հարաբերություններ զարգացնել՝ շարունակաբար ընդլայնելով երկկողմ առևտրի ծավալները: Չինաստանի կառավարությունը խրախուսում է չինական ձեռնարկատիրության կողմից Թուրքիայում ներկրումների ու ներդրումների աճը՝ հաշվի առնելով Թուրքիայի աշխարհաքաղաքական բարենպաստ դիրքը, ինչպես նաև նրա ամուր և ինստիտուցիոնալ հարաբերությունները ԵՄ-ի և տարածաշրջանի առանցքային երկրների հետ: Իր հերթին Թուրքիայի ղեկավարությունը ձգտում է կարգավորել առևտրային հաշվեկշիռը և ավելացնել թուրքական արտադրանքի արտահանումն աշխարհի 1/5 բնակչությունն ունեցող երկրի շուկաներ<sup>57</sup>:

**Թուրքիայի մասնակցության խնդիրը Չինաստանի «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» նախագծին**

Չինաստանի նոր ղեկավարությունը, ի դեմս նախագահ Սի Ծինպինի, փորձում է կյանքի կոչել իր «Մեծ մետաքսի ճանապարհի» ռազմավարությունը «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» չինական հայեցակարգի իրականացման միջոցով: Վերջինս Չինաստանի անվտանգությանը սպառնացող արտաքին և ներքին մարտահրավերների դիմակայելու և տնտեսական զարգացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակ է հետապնդում<sup>58</sup>:

<sup>51</sup> China, Turkey Hold Forum to Boost Economic Ties, Xinhua, english.news.cn, 20.10.2010. [http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/20/c\\_13565503.htm](http://news.xinhuanet.com/english2010/china/2010-10/20/c_13565503.htm); China, Turkey to Establish Strategic Cooperative Relationship, Xinhua, english.news.cn, 08.10.2010; Li Yida, China-Turkey Ties Enjoy Broad Prospect, People's Daily, 22.02.2012, p. 1. <http://english.peopledaily.com.cn/90780/7737077.html>; Zhang Haizhou and Cecily Liu, Turkey Looks to Strengthen Ties with China, China Daily, 21.02.2012. <http://english.peopledaily.com.cn/90883/7734999.html>

<sup>52</sup> Прибытие вице-преьера и министра иностранных дел Турции в Пекин, Жэньминь Жибао, 01.02.2005. <http://russian.people.com.cn/31521/3160710.html>; Salih Tinmaz, PM Erdoğan's Visit to China: Turkey-China Relations, Wise Men Center For Strategic Studies, Turkey, 03.05.2012, p. 1. <http://www.bigesam.org/en/index.php?view=article&catid=107%3Aanalizler-cin&id=508%3Apm-erdoans-visit-to-china-turkey-china-relations&format=pdf&option=comcontent&Itemid=134>

<sup>53</sup> Li Yida, China-Turkey Ties Enjoy Broad Prospect, ..., նշվ. աշխ., էջ 1:

<sup>54</sup> Tao Zan, Uncertainty and Ambiguity: Turkey's Perception on the Rise of China, նշվ. աշխ., էջ 73:

<sup>55</sup> Л. Овсепян, По вопросу о торгово-экономических отношениях Турции и Китая, Турция. Энергетика и международные экономические связи, Институт политических исследований, Ереван, 2008, стр. 5.

<sup>56</sup> Tao Zan, Uncertainty and Ambiguity: Turkey's Perception on the Rise of China, նշվ. աշխ., էջ 73-75:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>58</sup> Այս մասին տե՛ս Հարությունյան Ա., «Նոր մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» չինական հայեցակարգը, Եվրասիական խաչմերուկներ.

Անկարան չափազանց կարևորում է Թուրքիայի ներգրավումը Չինաստանի «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» նախաձեռնությանը՝ Թուրքիայի դիրքերն իբրև Ասիան ու Եվրոպան կապող հանգույցի օգտագործման և հետագա ամրապնդման ակնկալիքով: Անկարան չափազանց հետաքրքրված է այդ նախագծով՝ չինական ներդրումների ներգրավման, ենթակառուցվածքների ստեղծման, էներգետիկայի, կապի, ֆինանսների, ավիացիայի և այլ ոլորտներում երկկողմ համագործակցության խորացման, երկիրը չինական ձեռնարկությունների համար արտադրության և նյութատեխնիկական բազայի վերածելու նպատակով<sup>59</sup>:

Անկարան ու Պեկինը երրորդ աշխարհի երկրներում միջին և երկարաժամկետ ենթակառուցվածքային համատեղ նախագծերի համագործակցության զարգացման ծրագրերի նախապատրաստման նպատակով ստեղծել են «Մետաքսի ճանապարհ»-ի նախագծի աշխատանքային խումբ, որը պետք է ամրապնդի առևտրային հարաբերությունները Թուրքիայի, Չինաստանի, Իրանի, Պակիստանի, Հնդկաստանի միջև, ինչպես նաև Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ<sup>60</sup>: Չինաստանը մտադիր է Սինցյանից դեպի Թուրքիա տանող արագընթաց գնացքի համար 6000 կմ 150 մլրդ դոլար արժողությամբ երկաթգծի շինարարություն իրականացնել: Չինացի մասնագետների կարծիքով Պեկինը մեծ առաջնահերթություն է տալիս այս ծրագրին և պատրաստ է ֆինանսավորելու այն: Սինցյանից ձգվող «Երկաթյա մետաքսի ճանապարհ»-ն անցնելու է Ղրղրզստանով, Տաջիկստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով, Իրանով՝ հասնելով Թուրքիայի տարածք<sup>61</sup>:

Նոր մարտահրավերներ, Ժամանակակից Եվրասիա, հատոր II (2), ԳԱԱ ԱԻ, Եր., 2013 թ., էջ 46-67:

<sup>59</sup> Shannon Tiezzi, Can China-Turkey Relations Move On? The Diplomat Magazine, 30.07.2015. <http://thediplomat.com/2015/07/can-china-turkey-relations-move-on/>

<sup>60</sup> И.А. Свистунова, Об отношениях Турецкой Республики с Китаем, նշվ. աշխ., էջ 1:

<sup>61</sup> Չինաստանից դեպի Թուրքիա ձգվող «Երկաթյա մետաքս ճանապարհը» կրթագլի 2020 թ., ankakh.com, 05.07.2014.

Նախատեսվում է, որ երկաթգծը մասամբ շահագործման կհանձնվի 2020 թ., իսկ ամբողջությամբ պատրաստ կլինի 2030 թ.: Մարդատար գնացքների արագությունը 200 կմ/ժ կլինի, իսկ քեռնատարներինը՝ 160 կմ/ժ:

Գործնականում «Մետաքսի ճանապարհ»-ը մարմնավորում է ոչ միայն չինական Սիանից Ստամբուլ ձգվող առևտրային աշխույժ գործունեությունը, այլև կարող է գաղափարների և տեխնոլոգիաների փոխանակման համար կարևոր խողովակ ծառայել<sup>62</sup>:

### Էներգետիկ համագործակցությունը

Թուրքիայի և Չինաստանի միջև մրցակցություն է նկատվում նաև էներգետիկ ոլորտում՝ պայմանավորված սեփական ներքին ռեսուրսներով այդ երկրների դինամիկ աճող տնտեսությունների կարիքների ապահովման անհնարինությամբ: Այդ մրցակցությունն ավելի ակնհայտ դարձավ Կասպյան ավազանում և նախկին խորհրդային երկրներից նավթի և գազի արտահանման համար մղվող պայքարում<sup>63</sup>: Թուրքիայի աշխարհաքաղաքական և ռազմավարական բարենպաստ դիրքը թույլ է տալիս ներգործություն ունենալ Կասպից ծովի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի վրա: Այն նաև Եվրոպայում սպառողական շուկաների համար նավթի և քեռնական գազի հիմնական արտադրողների համար առաջատար էներգետիկ միջանցքի և տարանցիկ կարևոր կենտրոնի վերածվելու հնարավորություն է ընձեռում: Թուրքիան դարձել է համաշխարհային էներգետիկ անվտանգության կարևոր խաղացող, որը վերջին տասնամյակում խոշոր էներգետիկ նախագծերի միջոցով փորձում է նպաստել Եվրասիայում նոր էներգետիկ շուկաների առաջացմանը<sup>64</sup>:

Միևնույն ժամանակ կարելի է ենթադրել, որ Չինաստանի հետ իր կապերն ակտիվացնելու Թուրքիայի ցանկությունը, որը ձգտում է միջազգային հարաբերությունների ժամանակակից կառուցում ուժային անկախ կենտրոն դառնալ, բացասորվում է ոչ միայն տնտեսական շահերով, այլև աշխարհում իր դիրքերն ամրապնդելու ցանկությամբ: Անկարան հստակ գիտակցում է, որ Ասիախաղաղովկանոսյան տարածաշրջանը գալիք տաս-

<sup>62</sup> Loïc Poulain, China's New Balkan Strategy, The Center for Strategic and International Studies, Vol.: 1, No. 2, August 2011 p. 3. [http://csis.org/files/publication/110829\\_CEW\\_China\\_in\\_Balkans.pdf](http://csis.org/files/publication/110829_CEW_China_in_Balkans.pdf)

<sup>63</sup> Daly J.C.K., Sino-Turkish Relations beyond the Silk Road, Association for Asian Research, New York, 04.05.2007. <http://www.asianresearch.org/articles/3005.html>

<sup>64</sup> Turkish State Minister Mr. Zafer Çağlayan Gives Interview with People's Daily, նշվ. աշխ., էջ 1:



Նամյակների ընթացքում կդառնա համաշխարհային տնտեսության հիմնական շարժիչ ուժն ու առանցքը:

Այդ կերպ Թուրքիան կարծես որոշել է ընդգծել ԱՄՆ-ի գերակայության շուրջ կառուցված տնտեսական և ֆինանսական աշխարհակարգում անկախ քաղաքականություն վարելու իր ցանկությունը: Պատահական չէ, որ թուրք ղեկավարները տարբեր առիթներով ընդգծում են, որ համաշխարհային տնտեսության ծանրության կենտրոնը տեղափոխվում է Ասիա, հետևաբար ավանդաբար արևմտյան աշխարհին ինտեգրված Թուրքիան այժմ պետք է վերանայի իր տնտեսական ու քաղաքական առաջնահերթությունները:

ԱՆԴՐԱՆԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

**ՆԵՌՈՍՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՍՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ**

Օսմանյան կայսրության հանդեպ կարոտախտը մշտապես հանդիսացել է Թուրքիայի իսլամամետ շարժումների ու կուսակցությունների բնորոշիչը<sup>1</sup>: Առաջին անգամ «նեոսմանականություն» եզրը ասպարեզ եկավ Թուրգուօ Օզալի նախագահության շրջանում (1989-1993 թթ.): Եզրի հեղինակն Օզալի խորհրդական, լրագրող Ջենգիզ Չանդարն էր, ով առաջարկում էր արտաքին քաղաքական բազմամյա թնջուկները լուծել Օսմանյան կայսրության օրինակով՝ օգտագործելով բազմամշակութայնության գաղափարներն ու տնտեսական ինտեգրումը<sup>2</sup>: Ասել է թե նախատեսում էր գաղափարներն օգտագործել որպես «ճանապարհային քարտեզ» գործողությունների համար: Նեոսմանական արտաքին քաղաքականության գծերը բնորոշ էին նաև էրբաքանի Բարօրություն կուսակցության մեկամյա կառավարման շրջանին: ԲԿ-ի արտաքին քաղաքականության ձևավորման մեջ մեծ դերակատարում ունեցող պատգամավոր Արդուլլահ Գյուլը նեոսմանականության մասին արտահայտվում էր հետևյալ կերպ. «Պատմությունը, աշխարհագրությունը և իրականությունը պահանջում են Թուրքիայից իրականացնել իր առաքելությունն անկախ մեր ցանկություններից: Այդ առաքելությունը կամ դերը կարող է լինել Օսմանյան կայսրության դերը: Հետևաբար մենք չենք կարող անտարբեր մնալ Պաղեստինի, Հարավսլավիայի կամ Ալբա-

<sup>1</sup> R. Çakir, Türk İslamcılarının Projesi Osmanlıdır, 8 Temmuz 1996, Yeni Yüzyıl.  
<sup>2</sup> C. Çandar, Turgut Özal: The Ottoman of the 21st Century, 28 April 1992, Sabah.

նիայի զարգացումների հանդեպ՝ ելնելով մեր ազգային շահերից»<sup>3</sup>:

Նեոսմանական գաղափարների տարածման հերթական ալիքը սկսվեց ԱԶԿ-ի կառավարման շրջանում: Ինչպես նշում է Յավուզը, ԱԶԿ-ի վերնախավին միավորող գլխավոր գործոններից մեկը հավատն է առ այն, որ Օսմանյան կայսրության անցյալն առանցքային կարևորություն ունի Թուրքիայի ապագայի համար<sup>4</sup>:

Ամենթ Դավութօղլուն հաճախ համարվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարախոսը: Դավութօղլուն ԲԿ-ի իշխանության տարիներին խորհրդատվական ծառայություն էր մատուցում կուսակցությանը, սակայն մնում էր քաղաքականությունից դուրս: 2002 թ. խորհրդարանական ընտրություններից հետո կառավարություն կազմած Աբդուլլահ Գյուլը նրան առաջարկեց զբաղեցնել վարչապետի՝ արտաքին քաղաքական հարցերով խորհրդականի պաշտոնը՝ նշելով, որ այսուհետ նա հնարավորություն կունենա կյանքի կոչելու իր գիտելիքները<sup>5</sup>: Այսպիսով, «Դավութօղլուի ղեկավարությամբ վարչապետի՝ արտաքին հարցերով խորհրդականի գրասենյակն ամենօրյա խորհրդատվություն տրամադրող փոքր բյուրոյից վերածվեց նոր արտաքին քաղաքականությանը ռազմավարական ու գաղափարական աջակցություն տրամադրող աղբյուրի»<sup>6</sup>: 2009 թ. Դավութօղլուի՝ ԱԳ նախարար նշանակվելով նրա ազդեցությունն արտաքին քաղաքականության վրա ինստիտուցիոնալացվեց<sup>7</sup>:

1993 թ. Դավութօղլուն իր դոկտորական ատենախոսությունը պաշտպանել էր քաղաքակրթությունների զոյաբանական տարբերությունների վերաբերյալ: «Այլընտրանքային պարտդիզմաներ. իսլամական ու արևմտյան աշխարհայացքների ազդեցությունը քաղաքական տեսության վրա» ատենախոսության նախաբանում նա նշում է, թե աշխատության մեխն այն է, որ «Արևմտյան ու իսլամական քաղաքագիտական մտքի բա-

խումն ու հակասությունը բխում են ավելի շատ նրանց փիլիսոփայական, մեթոդաբանական ու տեսական, քան ինստիտուցիոնալ ու պատմական տարբերություններից»<sup>8</sup>: Մեկ այլ՝ «Քաղաքակրթական փոխակերպումը և մահմեդական աշխարհը» աշխատության մեջ Դավութօղլուն զարգացնում է նույն միտքը. «Իսլամական երկրների արևմտականացման հակված մտավորականության ծախսողումը վկայում է քաղաքակրթությունների հակամարտության էքստենսիվ բնույթի մասին»<sup>9</sup>: Չնայած իսլամակենտրոն մտածելակերպին, ինչպես արդարացիորեն նկատում է թուրք քաղաքագետ Բեհյուլ Օզքանը, Դավութօղլուն իր պանիսլամական գաղափարները շարադրելիս հիմնվում է արևմտյան աշխարհաքաղաքական մտքի ներկայացուցիչներ Մահանի, Մակինդեբի, Հաուսհոֆերի ծավալապաշտական տեսությունների վրա՝ օգտագործելով նաև նրանց առաջ քաշած եզրերը, ինչպիսիք են «կենսական տարածքը» (Lebensraum), «հետնաքակը» (Hinterland) և այլն<sup>10</sup>:

Նշենք, որ այս վաղ աշխատություններում շարադրված հեղինակի իսլամակենտրոն աշխարհնկարում հիմնականում պահպանվել է մինչև օրս. օրինակ՝ 2013 թ. ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցնող Դավութօղլուն հայտարարեց, որ եթե Իսրայելը հարձակվի իսլամական երկրների վրա, Թուրքիան չի լռի<sup>11</sup>: Այս ընկալմամբ բացատրվում է տարբեր հակամարտություններում Անկարայի վարած արտաքին քաղաքականությունը՝ հիմնված կրոնական համերաշխության վրա:

2001 թ. լույս տեսած և բազմիցս վերահրատարակված «Ռազմավարական խորք» աշխատությունը համարվում է հեղինակի հիմնական աշխատությունը, որտեղ նա փորձում է հիմնավորել, թե Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը քաղաքակրթական փոխակերպումների արդյունքում զրկվել է իր ռազմավարական խորքից, ինչը պատ-

<sup>3</sup> H. Yavuz, *Islamic Political Identity in Turkey*, p. 236.

<sup>4</sup> H. Yavuz, *Secularism and Muslim Democracy in Turkey*, p. 95.

<sup>5</sup> G. Zengin, Hoca: Türk Diş Politikası'nda Davutoğlu Etkisi, İstanbul, 2010, s. 108.

<sup>6</sup> A. Murinson, *The strategic depth doctrine of Turkish foreign policy*, Middle Eastern Studies, Vol. 42, No. 6, 2006, p. 947.

<sup>7</sup> Dişişleri Bakanı Sayın Prof. Dr. Ahmet Davutoğlu, <http://www.mfa.gov.tr/ahmetdavutoglu.tr.mfa>

<sup>8</sup> A. Davutoglu, *Alternative Paradigms: The Impact of Islamic and Western Weltanschauungs on Political Theory*, Lanham, MD, University Press of America, 1994, p. 2.

<sup>9</sup> A. Davutoglu, *Civilizational Transformation and the Muslim World*, Kuala Lumpur, Mahir Publications, 1994, p. 64.

<sup>10</sup> B. Ozkan, *The collapse of Davutoğlu's Pan-Islamist foreign policy*, 23 June 2014, *Hurriyet Daily News*.

<sup>11</sup> İsrail Müslüman ülkelerle saldirirsa sessiz kalamayiz, 2 Şubat 2013, *Zaman*, [http://www.zaman.com.tr/dunya\\_israil-musulman-ulkelerle-saldirirsa-sessiz-kalamayiz\\_2048590.html](http://www.zaman.com.tr/dunya_israil-musulman-ulkelerle-saldirirsa-sessiz-kalamayiz_2048590.html)



մակաև ու աշխարհագրական չափումների համադրումն է: Դավութոյուն գրում է. «Թուրքիայի գլխավոր հակասությունը մի քաղաքակրթության կենտրոնի հանդիսացող հասարակությունը իր քաղաքական վերնախավի կողմից այլ քաղաքակրթության համակարգի մեջ մտցնելն է»<sup>12</sup>: Հեղինակը շարունակում է, որ նման լարվածությունն ու ինքնության ճգնաժամն առաջացրել են միայն թուրքական հասարակությանը բնորոշ հոգեբանական բարդույթ, որի հետևանքով արտաքին քաղաքականություն իրականացնողները երկրի սահմաններից այն կողմ բազմավեկտոր քաղաքականություն վարելուն պատրաստ չեն<sup>13</sup>: Այսպիսով, Դավութոյուն արտաքին քաղաքականության հաջողությունը, բազմավեկտոր քաղաքականություն վարելու ուղղակիորեն կապում է սեփական քաղաքակրթությանը վերադառնալու, ինքնության ճգնաժամը հաղթահարելու հետ:

Անդրադառնալով Թուրքիայի աշխարհաքաղաքական վիճակին՝ Դավութոյուն նշում է, որ այն գտնվում է աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների միջև, ինչպիսիք են մերձակա ցամաքային ավազանը՝ Բալկաններ-Մերձավոր Արևելք - Կովկաս, մերձակա ծովային ավազանը՝ Սև - Ադրիատիկ - Արևելյան Միջերկրական - Կարմիր ծովեր - Պարսից ծոց - Կասպից ծով, և մերձակա աշխարհամասային ավազանները՝ Եվրոպա - Հյուսիսային Աֆրիկա - Հարավային Ասիա-Կենտրոնական և Հեռավոր Ասիա<sup>14</sup>: Դավութոյուն նախատեսում է այս տարածաշրջաններում Թուրքիայի ազդեցությունն ընդլայնելով՝ վերածել գլոբալ ազդեցության<sup>15</sup>:

Հեղինակը նաև նշում է, որ միաժամանակ հանդիսանալով Եվրոպա և Ասիա՝ Թուրքիայի դերն իբրև կամուրջ աստիճանաբար ավելի կարևոր է դառնում<sup>16</sup>: «Արևելքի ու Արևմուտքի, Ասիայի ու Եվրոպայի միջև մշակութային, քաղաքական ու տնտեսական կամրջի դեր խաղալու համար երկու կողմում էլ ինքնավստահ պատկանելության զգացում, կայուն կեցվածք, հոգեբանական ազդակներից հեռու սառնասիրտ ու

բանական մոտեցում է անհրաժեշտ», - նշում է Դավութոյուն<sup>17</sup>: Հետագայում հեղինակն ավելի է զարգացնում կամուրջ լինելու գաղափարը և այն փոխարինում «կենտրոնական երկրի» գաղափարով, որով նա հասկանում է և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում հավասարաչափ ազդեցիկ երկիր<sup>18</sup>:

Ահմեթ Դավութոյուն անդրադառնում է նաև այն գործոններին ու լծակներին, որոնք պետք է օգտագործվեն արտաքին քաղաքականության մեջ: Մասնավորապես հեղինակն այլ երկրների թյուրքախոս փոքրամասնություններին ու օսմանյան մշակութային ժառանգությունը գնահատում է իբրև Թուրքիայի արտաքին քաղաքականության գործնական տարրեր՝ նշելով, թե դրանց կորստի պայմաններում Թուրքիան տվյալ տարածաշրջանում կկորցնի ազդեցության լծակները<sup>19</sup>:

Աշխատության վերջում Դավութոյուն նշում է, որ Թուրքիայի համար գլխավոր մարտահրավերը արևմտականացման ու սեփական քաղաքակրթության միջև լարվածության հաղթահարումն է, որի հաջողության դեպքում Թուրքիան կվերածվի քաղաքակրթությունների միջև փոխազդեցության լավագույն օրինակի, հակառակ դեպքում կընկղմվի ներքին սպառնալիքի ընկալումներով ապրող և ներհասարակական էներգիան վատնող փակ շրջայի մեջ<sup>20</sup>: Դավութոյունի աշխատության վերոնշյալ հատվածը հատկապես կարևոր է հեղինակի՝ Թուրքիայի վարչապետ դառնալու համատեքստում: Կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի կառավարությունը կդիմի քայլերի, որոնք, ըստ իրենց տեսականի, պետք է երկիրը վերադարձնեն իսլամական քաղաքակրթության գիրկը:

«Ռազմավարական խորք» աշխատությունում Դավութոյուն ավելի է զարգացնում նեոօսմանական գաղափարները, որ առաջ էին եկել դեռևս Օզալի շրջանում: Հեղինակը նշում է, որ տարածաշրջանի հարուստ աշխարհամշակութային քարտեզը հինգ դար շարունակ նվազագույն վտանգի պայմաններում պահպանած Օսմանյան կայսրության ժառանգության կիրառումն իբրև ռազմավարական գործիք ոչ միայն Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության, այլև տարածաշրջանում արդար ու կայուն կարգ հաստատելու տեսանկյունից

<sup>12</sup> A. Davutoğlu, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, 2003, İstanbul, Küre Yayınları, s. 83.

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>14</sup> A. Davutoğlu, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, 2003, İstanbul, Küre Yayınları, s. 118.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 117:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 262:

<sup>18</sup> A. Davutoğlu, *Türkiye merkez ülke olmalı, Radikal*, 26 Şubat 2004.

<sup>19</sup> A. Davutoğlu, *Stratejik Derinlik*, նշվ. աշխ., էջ 316:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 546:

մեծ կարևորություն ունի<sup>21</sup>: «Ռազմավարական խորքում» նշելով, թե առանց օսմանյան արխիվների հնարավոր չէ տարածաշրջանում ոչ մի հակամարտության կարգավորում Դավութօղլուն նպատակ ունի օսմանյան անցյալը բերել ներկա քաղաքականության ասպարեզ<sup>22</sup>: Ինչպես նկատում է գերմանացի վերլուծաբան Հեինց Քրամերը, Դավութօղլուի նոր մոտեցման գլխավոր փաստարկը ոչ թե այն է, որ պատմությունն ու մշակույթն ընդհանրապես դեր են խաղում պետությունների արտաքին քաղաքականության մեջ, այլ, ավելի շատ այն, որ նրանք պետք է որոշակի դեր խաղան Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ<sup>23</sup>: Ակնհայտ է, որ, ըստ Դավութօղլուի, անցյալը ներկայի համար որոշիչ գործոն է: «Թուրքիայի բազմամշակութային ժառանգության վերահմաստավորումը ոչ միայն տեղական խնդիրների, այլև գլոբալ ճգնաժամերի հաղթահարման տեսանկյունից մեծ կարևորություն ունի», -նշում է հեղինակը<sup>24</sup>:

Օսմանյան անցյալի ազդեցությունը Դավութօղլուի վրա դրսևորվում է նաև գործնականում: 2009 թ. Սարանլոյում իր ելույթի ժամանակ ԱԳ նախարար Դավութօղլուն նշեց. «Միակ բացառությունը պատմության ընթացքում, երբ Բալկանները ոչ թե ծայրամաս էին, այլ համաշխարհային քաղաքականության կենտրոն, օսմանյան դարաշրջանն էր», «մենք կվերականգնենք այդ Բալկանները», «մենք կրկին Բալկանները, Մերձավոր Արևելքը ու Կովկասը Թուրքիայի հետ միասին կդարձնենք համաշխարհային քաղաքականության կենտրոն»<sup>25</sup>:

Հավելենք, որ նույն տեսլականով առաջնորդվում է ողջ ԱԶԿ-ի վերնախավը. Էրդողանը նմանապես հայտարարում է. «Օսմանյան կայսրությունն ուներ բավական հաջող կառավարման համակարգ, և դարեր շարունակ ներկայիս հակամարտության գոտիները պահպանում էին իրենց գոյությունն առանց խնդիրների: Պաղեստինի, Իրաքի ու Սիրիայի, Կրիմի,

Բալկանների և մյուս քոլոր հակամարտություններն ի հայտ եկան Օսմանյան կայսրության փլուզումից հետո»<sup>26</sup>:

Այսպիսով, կարելի է նկատել, որ Դավութօղլուի համար նեոօսմանական գաղափարներն ունեն նորմատիվ ուժ: Հեղինակը, սակայն, մշտապես հերքում է արտաքին քաղաքական դիրքում նեոօսմանական քաղաքականություն վարելու միտումները: Հասկանալի է մտավախությունը, որ հարևան պետությունները, որոնք օսմանյան անցյալից պահպանում են դադող հիշողություններ, կհակադրվեն նման սկզբունքով Թուրքիայի հետ հարաբերությունների կառուցմանը: Եվ իսկապես, օսմանյան անցյալին կատարված հղումներն ի վերջո տալիս են հակառակ արդյունքը. պատահական չէ, որ տարբեր հարևան պետություններ՝ Րոսնիա-Հերցեգովինա, Կիպրոս, Հայաստան, Իրան, Սիրիա, Թուրքիային մեղադրում են նեոօսմանական քաղաքականություն վարելու մեջ<sup>27</sup>:

Իրականում այսպես կոչված «օսմանյան ժառանգությունը», որի շնորհիվ Դավութօղլուն նախատեսում է «կարգ ու կանոն» հաստատել հարակից տարածաշրջաններում, սնամեջ դրույթ է ու չունի գիտական հիմնավորում: Այս դրույթի առկայությունն իսկ ենթադրում է անհարգալից վերաբերմունք նախկին Օսմանյան կայսրության տարածքում գոյություն ունեցող պետականությունների նկատմամբ: Օսմանյան կայսրությունը ստեղծվել էր բնիկ ժողովուրդների նվաճման ճանապարհով՝ շատերին զրկելով սեփական պետականությունից: Նեոօսմանական տեսլականն այս ժողովուրդների ազատագրական պայքարը դիտարկում է որպես եվրոպական ուժերի դավադրության, ոչ թե պատմական անհրաժեշտության արդյունք: Դավութօղլուն նշում է, թե քրիստոնեության վրա հիմնված պատմության եվրոպակենտրոն ընկալումը Օսմանյան կայսրության ժողովուրդներին դարձրեց թշնամիներ, իսկ ազգային պետությունների լեգիտիմության ձգտումն անհրաժեշտություն առաջացրեց հաշվեհարդար տեսնելու ազգային պետությանը նա-

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 301:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> H. Kramer, AKP's 'New' Foreign Policy between Vision and Pragmatism, Working Paper FG 2, 2010/01 SWP, Berlin, p. 4.

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 93:

<sup>25</sup> Speech of Ahmet Davutoglu at the Opening Ceremony of the Conference "Ottoman Legacy and Balkan Muslim Communities Today", International University of Sarajevo, 2009.

<sup>26</sup> Turkish President Erdogan on ISIS and Regional Security. A Conversation With Recep Tayyip Erdogan. New York. Council on Foreign Relations. September 22, 2014.

<sup>27</sup> ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատում, 17 հունվարի 2011թ.:



խորդած օսմանյան շրջանի հետ<sup>28</sup>: Ասել է թե հեղինակի համար հետօսմանյան շրջանում կառուցված կամ վերակառուցված պետականությունները լեգիտիմ չեն: Այս ընկալման արդյունքն են Թուրքիայի կողմից հարևան երկրներում իշխանությունը տասպալելու փորձերը, ինչպես դա եղավ Սիրիայի պարագայում:

Դավութօղլուի տեսլականը հակասական է նաև այն առումով, որ հեղինակը մի կողմից փառաբանում է 1919-1923 թթ. Թուրքիայի ազգայնական շարժումը ու ըստ էության թուրք ազգայնական է, մյուս կողմից արհամարհում կամ թերագնահատում է Օսմանյան մյուս ժողովուրդների ազգայնականությունը: Քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարը արևմտյան հրահրումների արդյունք դիտարկելուց բացի, Դավութօղլուն նաև անտեսում է մահմեդական ժողովուրդների՝ օրինակ՝ արաբների ազգայնականության նշանակությունը: Այս ընկալումը և՛ Մերձավոր Արևելքի իրականությունը տարընթերցելու պատճառներից մեկն է:

Այսպես կոչված «օսմանյան ժառանգության» օգտագործման դրույթի մեկ այլ թերություն է հարակից տարածաշրջանների աշխարհաքաղաքական դրության վերաբերյալ ոչ իրատեսական պատկերացումը: Մասնավորապես, Օսմանյան կայսրության ժամանակաշրջանից ի վեր նախկին օսմանյան տարածաշրջաններում ձևավորվել են նոր իրողություններ, որոնց պայմաններում օսմանյան տիրապետության փորձառության օգտագործումն իրատեսական չէ: Մերձավոր Արևելքում, օրինակ՝ նոր իրողություններ են աշխարհիկ վերնախավերն ու պետությունները, քրդական պետականության ստեղծման գործընթացը, գերտերություններ ԱՄՆ-ի, ՌԴ-ի ռազմական ներկայությունը և այլն: Դավութօղլուն չի հիմնավորում, թե ինչպես պետք է այսպես կոչված «օսմանյան ժառանգությունը» հարաբերվի այս նոր իրողությունների հետ:

Դավութօղլուի գաղափարների ու տեսլականի վերաբերյալ առկա է ևս մեկ հակասություն. որոշ հեղինակներ, ինչպիսիք են Սոներ Չաղափթայը<sup>29</sup>, Բեհյուլ Օզքանը<sup>30</sup>, խիստ տար-

անջատում են դնում Դավութօղլուի պանիսլամական գաղափարների ու նեոօսմանական տեսլականի միջև՝ նշելով, թե իրականում Դավութօղլուի գաղափարները պանիսլամական են, ոչ թե նեոօսմանական: Այս տեսակետը ելնում է այն վարկածից, թե Օսմանյան կայսրությունը բազմամշակութային տերություն էր, որը չէր հիմնվում իսլամական գաղափարների վրա: Իրականում օսմանյան տիրապետության շրջանում ոչ մահմեդականները գոյատևում էին որպես երկրորդ կարգի քաղաքացիներ՝ զրկված լինելով օրենքի պաշտպանությունից<sup>31</sup>: Կրոնական իսլամականներն էին պատճառը, որ տարբեր հպատակ ժողովուրդների ստվար զանգվածներ Կովկասում ու Բալկաններում հարկադրված էին կրոնափոխ լինել: Ավելին, Օսմանյան կայսրության կրոնական անհանդուրժողականությունն ու իսլամականությունը դրսևորվում էին ոչ միայն ներքին բնագավառում. Ռուբեն Սաֆրաստյանի բնորոշմամբ այդ կայսրության հիմնադիրները, վաղ շրջանից սկսած, իրենց ընկալում էին որպես քրիստոնեության դեմ պայքարի առաջամարտիկներ<sup>32</sup>: Այս ամենը նկատի ունենալով՝ կարելի է եզրակացնել, որ Դավութօղլուի գաղափարները պանիսլամական են, քանի որ հիմնվում են ոչ միայն հարակից տարածաշրջաններում, այլև գլոբալ ասպարեզում իսլամական ուժերի հետ համերաշխության վրա: Միաժամանակ նրա արտաքին քաղաքական տեսլականը նեոօսմանական է, քանի որ նախատեսում է ազդեցության գոտու ստեղծում Օսմանյան կայսրության նախկին տարածքներում:

Չնայած ԱԶԿ-ի վերնախավի նեոօսմանական գաղափարներին՝ կուսակցության 2001 թ. ծրագրում դրանք աղոտ են արտացոլված: ԱԶԿ-ի նոր տեսլականի մասին որոշակի պատկերացում է տալիս մահմեդական աշխարհի հետ հարաբերու-

<sup>28</sup> A. Davutoğlu, Turkish-Armenian Relations in the Process of De-Ottomanization or Dehistoricization : Is a Just Memory Possible? Turkish Policy Quarterly, Vol 13, No 1, Spring 2014, pp. 21-22.

<sup>29</sup> S. Çağaptay, AKP'nin dış politikası Neo-Osmanlici değil, 6 Mayıs 2009, Referans. <http://www.cagaptay.com/6106/akpnin-dis-politikasi-neo-osmanlici-degil>

<sup>30</sup> B. Ozkan, The collapse of Davutoğlu's Pan-Islamist foreign policy, 23 June 2014, Hurriyet Daily News. <http://www.hurriyetdailynews.com/the-collapse-of-davutoglu-pan-islamist-foreign-policy.aspx?pageID=449&nID=68125&NewsCatID=396>

<sup>31</sup> T. Akçam, A shameful act: the Armenian genocide and the question of Turkish responsibility. New York: Metropolitan Books. 2006. p. 24.

<sup>32</sup> Մանրամասն տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան պետություն. ծագումնաբանության որոշ առանձնահատկություններ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հատոր VI, Եր., 2009 թ., էջ 20-32:

թյուններին հատուկ նշանակություն տալու դրույթը<sup>33</sup>: Ծրագրում Արևմուտքի կարևորությունը և առաջնահերթությունը շեշտելը պայմանավորված էր նորաստեղծ կուսակցության՝ Արևմուտքի աջակցությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Ավելորդ չէ նշել նաև, որ կուսակցության ծրագրի արտաքին քաղաքական գլուխն ամբողջապես գրել էր փորձառու դիվանագետ Յաշար Յաքըշը, ով կայացել էր աշխարհիկ պարտադիզմա կրող ԱԳՆ-ում:

Կուսակցության ծրագիրը գրեթե ամբողջովին արտացոլված էր նաև ԱԶԿ-ի առաջին ու երկրորդ կառավարությունների ծրագրերում<sup>34,35</sup>: Հարկ է նկատել, սակայն, որ Էրդողանի առաջին կառավարության ծրագիրը շեշտում էր ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարևորությունը<sup>36</sup>: Այս հանգամանքը, որ կարելի է բացատրել Իրաքի շուրջ առկա հակասություններով, վկայում է նաև այն մասին, որ կառավարության ծրագրերն ավելի շատ արտացոլում էին այդ պահին արտաքին քաղաքական և անգամ կուսակցության իշխանության համար հրատապ խնդիրները, քան Թուրքիայի նոր քաղաքական վերնախավի տեսլականը:

2007 թ. Էրդողանի երկրորդ կառավարության ծրագիրը, որ կազմվեց կուսակցության համոզիչ հաղթանակից հետո, ավելի շատ էր արտացոլում ԱԶԿ-ի վերնախավի գաղափարները: Մասնավորապես կառավարության ծրագիրն առաջնային նպատակ էր համարում հարևան տարածաշրջանների հետ հարաբերությունների ինստիտուցիոնալացումը, այնինչ ԱՄՆ-ի հետ հարաբերություններին հատկացվում էր վերջին տեղը Հեռավոր Արևելքի պետությունների հետ հարաբերությունների կողքին<sup>37</sup>: Ակնհայտ է, որ կուսակցությունն այլևս չունեի իշխանությունն Արևմուտքի աջակցությամբ պահելու խնդիր: 2011 թ. Էրդողանի երրորդ կառավարության ծրագիրը նշում էր, որ կուսակցության հիմնական նպատակն իշխանության գալու օրվանից հանդիսացել է Թուրքիան տարածաշրջանային տերու-

թյուն դարձնելը<sup>38</sup>: Նույն ժամանակաշրջանում կուսակցության կազմած «Թիրախ 2023» տեսլականում Թուրքիան պատկերվում է որպես տարածաշրջանի կենտրոն<sup>39</sup>:

Ամփոփելով վերևում շարադրվածը՝ կարելի է նշել, որ ԱԶԿ-ի վերնախավի արտաքին քաղաքական տեսլականը նեո-օսմանական է: Այս գաղափարները տեսական առումով որոշ չափով մշակվել են ԱԳ նախարար Դավութօղլուի կողմից: Այսպես, նեոօսմանականությունը չի արտահայտվում ծրագրային դրույթներում և գործնականում միշտ չէ, որ ծառայում է որպես ուղեցույց, քանի որ ԱԶԿ-ը ներքին ու արտաքին քաղաքականության ասպարեզում հանդիպում է սահմանափակող գործոնների: Վերը նշվածից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ նեոօսմանականությունը չի կիրառվում որպես գաղափարախոսություն, սակայն այդ գաղափարները կարևոր դերակատարում ունեն արտաքին քաղաքականության դրսևորումներում:

<sup>33</sup> AK Parti Programı. [https://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum\\_](https://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum_)

<sup>34</sup> Gül Hükümeti Programı. <http://www.tbmm.gov.tr/hukümetler/HP58.htm>.

<sup>35</sup> I Erdoğan Hükümeti Programı. <http://www.tbmm.gov.tr/hukümetler/HP59.htm>.

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> II Erdoğan Hükümeti Programı. <http://www.tbmm.gov.tr/hukümetler/HP60.htm>.

<sup>38</sup> III Erdoğan Hükümeti Programı. <http://www.tbmm.gov.tr/hukümetler/HP61.htm>.

<sup>39</sup> Hedef 2023 Siyasi Vizyonu, s. 152. <http://www.akparti.org.tr/beyan-name2011.pdf>.



## ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍՏԱՐԴՅԱԼ

ՌԴ-ԻԻՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ  
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ  
ԳՈՐԾՆԵԹԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

*Լեռնածոյություն*

6+1 ձևաչափում մի շարք անարդյունք բանակցային գործընթացներից հետո՝ 2013 թ. Իրանի միջուկային ծրագրի (ՄԾ)<sup>2</sup>

**Տեղեկանք.** Իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցություններում ներգրավված են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական հինգ անդամները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան: Մինչև 2006 թ. Իրանի հետ բանակցում էր ԵՄ եղյակը (EU3)<sup>1</sup>՝ Ֆրանսիան, Գերմանիան և Միացյալ Թագավորությունը: Իրանական միջուկային ծրագրի շուրջ բանակցությունները մեկնարկել են 2004 թ., այն բանից հետո, երբ ԱԷՄԳ-ի (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն) կողմից հայտնաբերվեցին ուրանի հարստացման ցենտրիֆուգներ, որի արդյունքում արևոյան երկրները մեղադրեցին Իրանին «գաղտնի ռազմական միջուկային ծրագիր» զարգացնելու մեջ և պահանջեցին իրաժարվել միջուկային ծրագրից: Թեև 2004 թ. Իրանը ԵՄ եղյակի հետ ստորագրեց համաձայնագիր, իսկ 2004 թ. Նոյեմբերին հայտարարեց ուրանի հարստացման ծրագրի դադարեցման մասին, սակայն 2005 թ. Մահմուդ Ահմադինեժադի նախագահական ընտրություններում հաղթանակից հետո պաշտոնական Թեհրանը հայտարարեց միջուկային էներգետիկայի խաղաղ օգտագործման իր իրավունքի մասին՝ վերսկսելով ուրանի հարստացման ծրագիրը: 2004-2006 թթ. ԱԷՄԳ-ի և Իրանի միջև անարդյունավետ բանակցային գործընթացից հետո՝ 2006 թ. Հուլիսին, ԱԷՄԳ-ն Իրանի «միջուկային փաթեթը» հանձնեց ՄԱԿ-ի ԱԽ-ին: Իրանի հետ բանակցությունները շարունակեց միջազգային միջնորդների «վեց-կյակը»: 2006-2007 թթ. ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից Իրանի նկատմամբ կիրառվեցին պատժամիջոցներ (1737, 1747, 1696 բանաձևերը), 2008 թ. Մարտին և 2010 թ. հունիսին պատժամիջոցները խստացվեցին (1803, 1929 բանաձևերը), որից հետո ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Կանադայի և այլ երկրների կողմից մտցվեցին նաև միակողմանի խիստ պատժամիջոցներ, այդ թվում՝ 2012 թ. Նավթային էմբարգոն: ՌԴ-ի ԱԳՆ-ի հայտարարությամբ Ռու-

խաղաղ կարգավորման խնդիրը որակական նոր փուլ թևակոխեց: 2013 թ. նոյեմբերին ժնևում կողմերը կնքեցին միջանկյալ համաձայնագիր<sup>3</sup>: Փորձագետների տեսանկյունից ժնևյան հանդիպումներն ուշագրավ էին այն իմաստով, որ ի տարբերություն նախորդ բանակցությունների՝ ընթացան երկկողմ պարտավորությունների ստանձնման նոր մակարդակում, ինչը թափ հաղորդեց կարգավորման ընթացքին և՛ ամրապնդվեց կես տարվա ժամանակահատվածում իրանական միջուկային ծրագրի խաղաղ կարգավորման վերաբերյալ վերջնական համաձայնագիր կնքելու կողմերի հստակ դիրքորոշմամբ: Ի սկզբանե համապարփակ համաձայնագրի կնքումը նախատեսվում էր 2014 թ. գարնանը, այնուհետև հետաձգվեց մինչև նույն թվականի նոյեմբեր<sup>4</sup>: Սակայն, ինչպես ցույց տվեցին զարգացումները, համապարփակ համաձայնագրի փոխարեն նույն թվականի ապրիլի 2-ին Լոզանում կայացած բանակցությունների արդյունքում ներկայացվեց «շրջանակային փաստաթուղթ»: Կողմերը փաստեցին, որ «ձեռք են բերվել լուծումներ՝ համա-

սատան Իրանի հետ հարաբերություններում խստորեն հետևել է այն սահմանափակումներին, որոնք սահմանվել են ԱԽ-ի կողմից: Տե՛ս Գ. Իսկանդարյան, ԻԻՀ 2008-2010 թթ. արտաքին և ներքին քաղաքական հիմնախնդիրները, Ժամանակակից Եվրասիա I (1), Եր., 2012, էջ 75-81, Գ. Իսկանդարյան, Իրանի ներքին ու արտաքին մարտահրավերները, Տարածաշրջանային խնդիրներ, 1/2013, Եր., էջ 19-26:

<sup>2</sup> **B.B. Escees**, Перспективы иранской ядерной программы при президенте Хасане Роухани, М., 2013, с. 14-23, В. Головачев - Ядерная программа Ирана: история создания и современное состояние, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1102939440>,

<sup>3</sup> Նոյեմբերի 20-24-ի ժնևյան բանակցությունների արդյունքում ընդունվեց «Գործողությունների միասնական պլանը», որում վեցամսյա ժամանակամիջոցում նախանշվում էին կողմերի գործողությունները: Համաձայնագիր նախատեսում էր Իրանի կողմից ուրանի հարստացման և պլուտոնի արտադրության ծրագրի փուլային կրճատում միջազգային պատժամիջոցների մասնակի վերացման դիմաց: Implementation of the NPT Safeguards Agreement and Relevant Provisions of Security Council Resolutions in the Islamic Republic of Iran, Report by the Director General, IAEA, Atom for Peace, Board of Governors, 7 November, 2014, p. 2. <http://www.isisnucleariran.org/assets/pdf/iaea-iranreport-071114.pdf>

<sup>4</sup> Sbu Joint Statement by Catherine Ashton and Iranian Foreign Minister Mohammad Javad Zarif following the talks in Vienna, 24 November 2014, European External Action Service, [http://eeas.europa.eu/statements-eas/2014/141124\\_02\\_en.htm](http://eeas.europa.eu/statements-eas/2014/141124_02_en.htm)

պարփակ պայմանագրի կնքման առանցքային ձևաչափերում», իսկ վերջնական համաձայնագրի կնքումը հետաձգվեց մինչև հունիսի 30-ը<sup>5</sup>:

Եթե ընդհանրացնենք ԻԻՀ ՄՕ-ի վերաբերյալ փորձագիտական շրջանների տեսակետները, ապա մի մասի կարծիքով՝ Իրանի ՄՕ-ն ունի ռազմական բաղադրիչ, և ԻԻՀ-ի կողմից միջուկային զենք ստեղծելու հնարավորության համատեքստում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուրանի հարուստացման ծրագրին, որի իրագործման ընթացքում կուտակվել էին բավականին քանակությամբ ուրանի պաշարներ (հարուստացված մինչև 20%), և Թեիրանը կարող է վերահարստացնել այն միջուկային զենքի արտադրության մակարդակի՝ դուրս գալով միջուկային փորձարկումների հարթություն<sup>6</sup>: Այդ դեպքում լուրջ խնդիրներ են առաջանում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ անվտանգության մակարդակներում, որոնցից առաջնայինն են.

1. Իսրայելի կողմից իրանական միջուկային օբյեկտների հավանական հրթիռակոծումը և ԱՄՆ-ից համապատասխան ռազմական օգնությունը, ինչը սկիզբ կդնի անկանխատեսելի ելքով տարածաշրջանային պատերազմի,

<sup>5</sup> St'eu Joint Statement By Eu High Representative Federica Mogherini and Iranian Foreign Minister Javad Zarif, April 2, 2015, European External Action Service, [http://eeas.europa.eu/statements-eeas/2015/150402\\_03\\_en.htm](http://eeas.europa.eu/statements-eeas/2015/150402_03_en.htm)

<sup>6</sup> Իրանն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ է դարձել 1958 թ., 1969 թ. հուլիսի 1-ին ստորագրել է Միջուկային զենքի չտարածման մասին համաձայնագիրը (ՄՉՁՊ), որը վավերացրել է 1970 թ. փետրվարի 2-ին: ՄՉՁՊ IV հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երկիր իրավունք ունի «զարգացնելու հետազոտությունները, միջուկային էներգիայի արտադրությունն ու օգտագործումը բացառապես խաղաղ նպատակներով»: 1974 թ. Իրանը ԱԷՄԳ-ի հետ ստորագրել է «Ոչ միջուկային երկրների համապարփակ երաշխիքների մասին պայմանագիրը», որով ոչ միջուկային պետությունը պարտավորվում է ԱԷՄԳ-ին տեղեկություն տալ երկրում արտադրվող կամ արտահանվող բոլոր միջուկային նյութերի և դրանց տեղակայման մասին: Գործակալության անդամներն իրենց հերթին կարող են ստուգումներ անցկացնել երկրի միջուկային ենթակառուցվածքներում և զնահատել պետության կողմից հրապարակվող տվյալների համապատասխանելիությունը: The Text of the Agreement between Iran and the Agency for the Application of Safeguards in Connection with the Treaty on the Non-Proliferation of Nuclear Weapons <https://www.iaea.org/sites/default/files/publications/documents/infcircs/1974/infcirc214.pdf>

2. գործող միջուկային զենքի չտարածման մասին գլոբալ համակարգի թուլացումը, ինչը կարող է հանգեցնել տարածաշրջանում նոր միջուկային պետությունների առաջացմանը:

Փորձագետների մյուս ծանրակշիռ հատվածը կարծում է, որ ԻԻՀ ղեկավարությունը դեռևս չի ընդունել միջուկային զենքի ստեղծման վերաբերյալ քաղաքական որոշում և ցանկանում է ընթանալ «ճապոնական մոդելով»՝ հասնել այնպիսի գիտատեխնոլոգիական մակարդակի, որը թույլ կտա անհրաժեշտության դեպքում միջուկային զենք ստեղծել մի քանի ամսվա ընթացքում:

ՄՕ-ով պայմանավորված Իրանի նկատմամբ մտցված պատժամիջոցների կենսագործմանը զուգընթաց կրճատվեց իրանական էներգակիրների արտահանումը, գրեթե ամբողջովին արգելափակվեց ԻԻՀ բանկային ոլորտի կապը միջազգային ֆինանսական համակարգի հետ՝ ծայրաստիճան բարդացնելով երկրի առևտրատնտեսական հարաբերությունները և օտարերկրյա ներդրումների հնարավորությունները, հանգեցնելով բարձր գնաճի և ժողովրդի կենսամակարդակի նվազման: Իրանի միջուկային ծրագրի խաղաղ կարգավորման, հետևաբար նաև Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացման հարցը նոր թափ ստացավ 2013 թ. չափավոր պահպանողական գործիչ Հասան Ռուհանիի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո, ում ծրագրի առանցքային բաղկացուցիչներից էին Արևմուտքի հետ երկխոսության ձևաչափի ընդլայնման միջոցով իրանական միջուկային խնդրի խաղաղ կարգավորումը և երկրի տնտեսական առաջընթացի ապահովումը<sup>7</sup>: Իրանի միջուկային խնդրի կարգավորման գործընթացի ակտիվացմանը նպաստեց նաև մերձավորարևելյան ճգնաժամը, որի պայմաններում Իրանը կարողացավ մասամբ հաղթահարել միջազգային մեկուսացումը՝ ձգտելով զարգացնել հարաբերությունները համաշխարհային բոլոր խաղացողների հետ և միջազգային հանրությանն ապացուցեց տարածաշրջանային և աշխարհաքաղաքական կարևոր գործոն լինելու իրողությունը:

<sup>7</sup> St'eu Steven Ditte, Who Is Hassan Rouhani? <http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/who-is-hassan-rouhani>, В.В. Евсеев, Перспективы иранской ядерной программы при президенте Хасане Роухани, М., 2013, с. 118-143:



2015 թ. հուլիսի 14-ին Վիեննայում շուրջ 13 տարի շարունակվող բանակցային գործընթացի արդյունքում, Իրանի և միջազգային միջնորդ «վեզնյակի» միջև կնքվեց Իրանի միջուկային ծրագրի և պատժամիջոցների վերազման մասին վեց-նական համաձայնագիրը /*Համապոեդ համապարփակ գործողությունների ծրագիրը*/, որով միջնորդներին և Իրանին հաջողվեց համաձայնության գալ Իրանի ԱՄ-ի խաղաղ գաղազման և պատժամիջոցների չեղարկման մեխանիզմների շուրջ: Պայմանագրով ԱՄ-ի հետ կապված ԻԻՀ-ի նկատմամբ մտցված պատժամիջոցների աստիճանական վերացման դիմաց կրճատվելու են Իրանի միջուկային հզորությունները, և փաստացի ճանաչվեց Իրանի խաղաղ նպատակներով միջուկային ծրագիր զարգացնելու իրավունքը<sup>8</sup>:

***Ռուս-իրանական զգուշավոր գործընկերության հիմնական շարժառիթները***

Ռուսաստանի իրանական արտաքին քաղաքական ուղենիշի ձևավորման հարցում նշանակալի դեր են խաղացել և շարունակում են խաղալ հետևյալ գործոնները.

- Իրանի հետ համագործակցության միջոցով Հարավային Կովկասում, Կասպից ծովում և Կենտրոնական Ասիայում

<sup>8</sup> Համապոեդ համապարփակ գործողությունների ծրագրով թեև Իրանի բոլոր միջուկային օբյեկտները պահպանվում են, սակայն Իրանը պարտավորվում է 15 տարվա ընթացքում չհարստացնել ավելի քան 3,67% ուրան, որը չի գերազանցի 300 կգ-ը, 10 տարվա ընթացքում կրճատել ցենտրիֆուգների քանակը երկու երրորդով՝ 19 հազարից հասցնելով 6104-ի, և զարգացնել խաղաղ միջուկային իր ծրագիրը ԱԷՄԳ-ի մշտազննման և վերահսկողության ներքո, որի դիմաց Իրանի վրայից աստիճանաբար հանվելու են այն բոլոր պատժամիջոցները, որոնք մտցվել են Իրանի ԱՄ-ի հետ կապված առևտրի, ֆինանսների, տեխնոլոգիաների և էներգետիկայի ոլորտներում: Ըստ համաձայնագրի, թեև Իրանի նկատմամբ զենքի էմբարգոն 5 տարով կպահպանվի, սակայն ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ որոշակի զինատեսակների մատակարարումներ հնարավոր են նաև այդ ժամանակահատվածում: Համաձայնագրի տեքստը տե՛ս Joint Comprehensive Plan of Action Vienna, 14 July 2015, [http://www.eeas.europa.eu/statements-eeas/docs/iran\\_agreement/iran\\_joint-comprehensive-plan-of-action\\_en.pdf](http://www.eeas.europa.eu/statements-eeas/docs/iran_agreement/iran_joint-comprehensive-plan-of-action_en.pdf), توافق هسته اي: جزئیات مهم بر نامه جامع اقدام مشترک [http://www.bbc.com/persian/iran/2015/07/150715\\_u01-nuclear-keydeails](http://www.bbc.com/persian/iran/2015/07/150715_u01-nuclear-keydeails), برنامه جامع اقدام مشترک <http://www.mfa.gov.ir/uploads/150726-ICPOA-PERSIAN> Final-2\_56003.pdf

Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումը,

- Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգության և կայունության ապահովումը, մասնավորապես Հյուսիսային Կովկասում իսլամական ծայրահեղական խմբավորումների ակտիվացումը թույլ չտալու նպատակով;
- Թեիրանի հետ համագործակցությունը կարևոր պայման է Մերձավոր Արևելքում ռուսական ազդեցությունը պահպանելու տեսանկյունից: Իրանը Ռուսաստանի համար Մերձավոր և Միջին Արևելքում գրեթե միակ կայուն գործընկերն է,
- Իրանի ԱՄ-ի շրջանակներում Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հետ որոշ առումով դրական երկխոսությունը պահպանելու հնարավորությունը,
- իրանական հարցում Արևմուտքի և Իսրայելի կողմից ուժային բաղադրիչի բացառումը, քանի որ Իրանի հետ յուրաքանչյուր բախում կարող է հանգեցնել իրավիճակի ապակայունացման ռուսական «կենսական շահերի» ազդեցության գոտիներում,
- էներգակիրների, մասնավորապես գազի արտահանման եվրոպական ուղղության նկատմամբ ռուսական վերահսկողության սահմանումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո ռուս-իրանական հարաբերությունների դինամիկան ռուսական փորձագիտական հանրության կողմից քննորոշվում է որպես «զգուշավոր գործընկերություն», որի ձևաչափը ենթադրում էր ՌԳ-ԻԻՀ դրական երկխոսության ապահովում, որը կհամապատասխաներ Մոսկվայի շահերին և կապահովեր հարաբերությունների բավարար մակարդակ՝ չվնասելով այլ երկրների հետ հարաբերություններին: Մոսկվայի նման մոտեցումը նախ և առաջ պայմանավորված էր Իրանի միջուկային ծրագրի շուրջ դիրքորոշմամբ և նույն ԱՄ-ի համատեքստում Արևմուտքի հետ հարաբերությունները չսրելու հրամայականով<sup>9</sup>:

Իրանի միջուկային ծրագիրը մշտապես եղել է ռուս-իրանական փոխգործակցության կարևորագույն և զգայուն ոլորտներից մեկը: Ռուսական դիվանագիտությունն Իրանի և նրա ընդդիմախոսների միջև (ոչ միայն ԱՄՆ-ի և Իսրայելի, այլև

<sup>9</sup> Տե՛ս В.В. Евсеев, В.И., Сажин, Иран, Уран и ракеты, М., 2009, с. 120-128.



Պարսից ծոցի պետությունների) փորձել է իրականացնել հավասարակշռելու մարտավարություն՝ հստակ գիտակցելով, որ Իրանի հետ յուրաքանչյուր դաշինք կամ սերտ համագործակցություն անխուսափելիորեն կվատացնի հարաբերությունները համաշխարհային առաջատարների հետ<sup>10</sup>: Պաշտոնական Մոսկվայի տեսանկյունից իրանական միջուկային խնդիրը կարող է հանգեցնել «միջուկային դոմինոյի», երբ Իրանի օրինակով միջուկային զենքի ստեղծման հավակնություններ կհայտնեն Թուրքիան, Սաուդյան Արաբիան, ՄԱԷ-ն, Եգիպտոսը և տարածաշրջանային այլ պետություններ: Մոսկվան դեմ է ԻԻՀ-ի կողմից լիարժեք միջուկային վառելիքային ցիկլի ստեղծմանը և անհրաժեշտ է համարում իրանական միջուկային օբյեկտների նկատմամբ ԱԵՄ-ի տեսչական վերահսկողությունը: Միաժամանակ Ռուսաստանը պաշտոնապես դեմ է արտահայտվում Իրանի նկատմամբ պատժամիջոցների ուժեղացմանը, այդ թվում՝ ՄԱԿ-ի ԱՄ-ի շրջանակից դուրս ուժային ճանապարհով խնդրի լուծմանը և գտնում է, որ Իրանի միջուկային ծրագրի սահմանափակումները պետք է ժամանակավոր լինեն, և որ Իրանն իր տնտեսական ներուժով իրավասու է զարգացնելու խաղաղ միջուկային ծրագիր<sup>11</sup>: Ռուսաստանը շահագրգռված է Իրանի միջուկային խնդրի խաղաղ կարգավորման հարցով, ինչը հնարավորություն կտա նրան՝ որպես միջուկային տեխնոլոգիաներ արտահանող տերության և Իրանի հետ միջուկային բնագավառում երկարամյա համագործակցության փորձ ունեցող կողմի, զբաղեցնելու սեփական մասնաբաժին իրանական խաղաղ միջուկային տեխնոլոգիաների շուկայում:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա Մոսկվայի նկատմամբ Թեհրանի դիրքորոշումը միջուկային խնդրի կարգավորման տեսանկյունից ուղեկցվել է կասկածներով առ այն, որ պատասխանատու պահին Ռուսաստանն Արևմուտքի խոստումների դիմաց կարող է շահարկումների առարկա դարձնել Իրանը: Իրանի մոտեցումը պայմանավորված է ոչ միայն Ռուսաստանի շուրջ ստեղծված բարդ աշխարհաքաղաքական և տնտես-

ական իրավիճակով, այլև խորը պատմական ենթաշերտ ունի, որը կարծրացած է ինչպես իրանական հասարակության, այնպես էլ քաղաքական էլիտայի մակարդակներում: Եթե հետևում թողնենք XIX և XX դարերի ռուս-իրանական և խորհրդայինական բարդ հարաբերությունները և կենտրոնանանք ԽՍՀՄ-ի փլուզումից մինչև վերջերս այդ երկրների միջև ձևավորված համագործակցության վրա, ապա քաղաքական անախորժ գրվածքները, որոնք Թեհրանի կողմից Մոսկվային չվստահելու առիթ են տալիս և շահարկվում են ներիրանական քաղաքական դաշտում, բավականին շատ են՝ ռազմավարական մակարդակի հարաբերություններ ձևավորելու համար: Դրանց թվում են և՛ Գոր-Չերնոմիրոյին գործարքը<sup>12</sup>, և՛ Կասպից

<sup>12</sup> 1995 թ. մայիսին Մոսկվայում ԱՄՆ-ի նախագահ Բ. Բիլնթոնի հետ հանդիպման ՌԴ-ի նախագահ Բ. Ելցինը համաձայնվեց մինչև 1999 թ. ավարտել Ռուսաստանի կողմից Իրանին զինատեսակների և ռազմական տեխնիկայի ու ռազմական նշանակության ծառայությունների մատակարարման բոլոր գործարքները և չկնքել նորերը: Ռուսաստանի պարտավորությունները պաշտոնապես հաստատվեցին երկկողմ գաղտնի հուշագրում (արձանագրություն)՝ ՌԴ-ի վարչապետ Վ. Չերնոմիրոյին և ԱՄՆ-ի փոխնախագահ Ա. Գորի ստորագրություններով: Իրանի նկատմամբ ՌԴ-ի պարտավորությունների հիմքում ընկած էին 1989, 1990, 1991 թթ. կնքված չորս միջկառավարական համաձայնագրերը, որոնց հիմնական մասը Ռուսաստանն անավարտ թողեց: Ելցին-Բիլնթոն հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի կողմից սուր ըննադատության ենթարկվեցին նաև ատոմային ոլորտում համագործակցության մասին ռուս-իրանական 1995 թ. հունվարի 5-ին կնքված արձանագրության դրույթները ստորագրված Բուլոնիի ԱԷԿ-ի կառուցման մասին ռուս-իրանական պայմանագրի հետ համատեղ: Ամերիկյան կողմին հայտնի էր դարձել, որ արձանագրությունը ներառում էր նաև ռազմական բաղադրիչ, որը միջուկային զենքի արտադրության հնարավորություն կտար Իրանին: Խոսքը վերաբերում է Ռուսաստանի կողմից Իրանին միջուկային վառելիքի, ուրանի հարստացման ցենտրիֆուգների և պլուտոնի արտադրության համար ռեակտորների մատակարարմանը, կադրային պատրաստմանն ու տեխնոլոգիական խորհրդատվությանը: Թեև Մոսկվան չիրաժարվեց Բուլոնիի ԱԷԿ-ի կառուցման նախագծից, սակայն Ելցինը համաձայնություն տվեց դադարեցնելու վերոնշյալ բնագավառներում ռուսական օժանդակությունն ու խորհրդատվությունն Իրանին, ինչն էլ ամրագրվեց Վ. Չերնոմիրոյինի՝ Ա. Գորին հասցեագրված գաղտնի նամակում: Մանրամասն տե՛ս John P. Barker, Joseph M. DeThomas, The Gore-Chernomyrdin Affair: The testimony before the Senate Foreign Relations Committee, Washington, DC, October 25, 2000, Winter 2001, Vol. 7, No. 1, p. 14-18, Մ. Բարաբանով, Россия на

<sup>10</sup> St'ya H. Mamedova, Взаимные интересы России и Ирана: Историческая эволюция и нынешний этап // Россия и исламский мир: Историческая ретроспектива и современные тенденции, М., 2010, с. 36.

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս С. Сарухания, Ядерный фактор в российско-иранских отношениях, М., 2007, В. В., Евсеев, Перспективы иранской ядерной программы при президенте Хасане Роухани, М., 2013:



ծովի «անարդար բաժանումը»<sup>13</sup>, և՛ Բուշեի ԱԷԿ-ի ձգձգված կառուցումը<sup>14</sup>, և՛ ռազմական ոլորտում, մասնավորապես U-300

рынке вооружений Ирана, Журнал «Экспорт вооружений», [http://www.cast.ru/journal/2005/5\\_2005\\_2/](http://www.cast.ru/journal/2005/5_2005_2/).

<sup>13</sup> Մինչև 1990-ականների առաջին կեսը Ռուսաստանն ու Իրանը Կասպից ծովի իրավական կարգավիճակի և հարակից պետությունների (Ռուսաստան, Իրան, Թուրքմենստան, Ղազախստան, Ադրբեջան) միջև ծովի ընդերքի պաշարների բաժանման հարցում հանդես էին գալիս որպես բնական դաշնակիցներ և, վկայակոչելով 1921 և 1940 թթ. խորհրդա-իրանական պայմանագրերը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ պետությունների և Ռուսաստանի միջև կնքված 1991 թ. Ալմա Աթայի հռչակագիրը, պաշտպանում էին ծովի՝ համատիրության սկզբունքով օգտագործելու գաղափարը: 90-ականների վերջին Ռուսաստանը փոխեց իր դիրքորոշումը և հանդես եկավ Կասպից ծովի ընդերքը «միջին գծով» տնտեսական հատվածների բաժանման հայեցակարգով, որով յուրաքանչյուր պետություն իր հատվածի ընդերքի պաշարները շահագործում է իր հայրենիքում, սակայն պահպանվում են ծովի մակերեսի ընդհանուր օգտագործման սկզբունքը և վիճելի հանքավայրերի 50:50 բաժանման պայմանը: Կասպից ծովի կարգավիճակի շուրջ Ռուսաստանի, Ադրբեջանի և Ղազախստանի մոտեցումները համընկնում են և ամրագրված են այս պետությունների միջև երկկողմ (Ռուսաստան-Ղազախստան 1998 թ., Ռուսաստան-Ադրբեջան 2001 թ., Ադրբեջան-Ղազախստան 2001 թ.) և եռակողմ (2003 թ.) պայմանագրերով: Ծովի պաշարների բաժանման նշված սկզբունքի համաձայն՝ Ռուսաստանին բաժին է ընկնում ծովի 19 %-ը, Ադրբեջանին՝ 18 %-ը, Ղազախստանին՝ 27 %-ը, իսկ հարավային հատվածի 36 %-ը պետք է բաժանվի Իրանի և Թուրքմենստանի միջև, որից Իրանի մասնաբաժինը կազմում է մոտավորապես 14 %: Սակայն պաշտոնական Թեհրանը գտնում է, որ Կասպից ծովի պաշարները պետք է բաժանվեն հիմք հավասար մասերի (20% մասնաբաժնով): Թեհրանը չի ճանաչում Ռուսաստանի և Ղազախստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի, Ադրբեջանի և Ղազախստանի միջև կնքված երկկողմ պայմանագրերի օրինականությունը: Ինչ վերաբերում է Թուրքմենստանին, ապա վերջինս հակված է պաշտպանելու Թեհրանին՝ ելնելով մի շարք վիճելի հանքավայրերի շուրջը իր և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող սուր տարամայնություններից: Մանրամասն տե՛ս Yusin Lee, Toward a New International Regime for the Caspian Sea, Problems of Post-Communism, May/June 2005, Vol. 52 Issue 3, May/June 2005, p. 37-47M. Գ. Лейхова, А. Е. Пьянов, Проблема правового статуса Каспийского моря в отношениях прикаспийских государств в 1990 – 2000 гг., <http://oaji.net/articles/2014/561-1394504630.pdf>.

<sup>14</sup> 1995 թ. պայմանագրով Ռուսաստանը Բուշեի ԱԷԿ-ի կառուցումը պետք է ավարտեր 1999 թ., սակայն առաջին բլոկի կառուցումն ավարտվեց միայն 2010 թ.:

գործարքի հետ կապված խնդիրները<sup>15</sup>, որոնք այսպես թե այնպես միահյուսվել են Իրանի ՄԾ-ի հետ: Ռուսաստանի նկատմամբ անվստահության աճի պատճառներից են նաև Թուրքիայի, Ադրբեջանի ու հատկապես Իսրայելի հետ գործընկերային հարաբերությունները խորացնելու ուղղությամբ ռուսական իշխանությունների քայլերը:

Այսուհանդերձ, աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված, և՛ Ռուսաստանը, և՛ Իրանը մինչ օրս խնամքով փորձում են պահպանել չխափանվող հարաբերությունների այն ձևաչափը, որը կարող է համապատասխան իրավիճակում ճշգրտվել՝ թույլ տալով կողմերին հակակշռելու ոչ միայն Արևմուտքի, այլև Թուրքիայի քաղաքական և տնտեսական ներկայությունն ինչպես մերձավորարևելյան, այնպես էլ Կովկաս-Կասպիական տարածաշրջաններում: Այսպիսով, ՄԾ-ի խնդրով պայմանավորված Իրանի միջազգային մեկուսացվածության հանգամանքը և աշխարհաքաղաքական ազդեցությունը վերականգնելու Ռուսաստանի ձգտումը գրեթե քառող դարի ընթացքում ստիպել է այս երկրներին միմյանց հետ հաշվի նստել միջազգային քաղաքականության խնդիրների բավական լայն շրջանակում՝ փոխադարձ զիջումների և զսպումների ճանապարհով ընդհանրական մոտեցումներ մշակելով.

- ✓ Իրաքի և Աֆղանստանի ճգնաժամերի նկատմամբ,
- ✓ տարածաշրջանում իսլամական արմատականության ակտիվացումը և թմրանյութերի տարածումը կասեցնելու հարցում,
- ✓ Կասպից ծովում ՆԱՏՕ-ի ռազմական ներկայությունը թույլ չտալու համար,

<sup>15</sup> Խոսքը 2007 թ. ռուս-իրանական համաձայնագրի հիման վրա Ռուսաստանի կողմից Իրանին U-300 իրթիոային համակարգերի մատակարարման պայմանավորվածության մասին է, որը 2010 թ. Ռ-ի նախագահ Դ. Մեդվեդևի իրամասնագրով ստեղծվեց: Այս ժամանակաշրջանը համընկավ Բ. Օբամայի վարչակարգի կողմից ռուս-ամերիկյան հարաբերությունների վերաիցքավորման քաղաքականության հետ, ինչը նպաստեց 2010 թ. ՄԱԿ-ի Ան-ի Իրանի նկատմամբ տնտեսական ամենախիստ պատժամիջոցների՝ 1292-րդ բանաձևի օգտին Ռուսաստանի կողմ քվեարկելու: Современные российско-иранские отношения: вызовы и возможности, РСМД, Рабочая тетрадь, N XIV, М., 2014, <http://russiancouncil.ru/common/upload/WP14Russia-Iran.pdf>, с. 7.

- ✓ Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում ոչ տարածաշրջանային երկրների ներկայությունը սահմանափակելու համար,
- ✓ տրանսկասպիական խողովակաշարերի կառուցման և էներգակիրների արտահանման հարցերում:

**Արարահրավերներ և ռազմավարական գործընկերության հաստատման նոր միջոցներ**

Ուկրաինական ճգնաժամն ու մերձավորարևելյան զարգացումները զգալիորեն փոխեցին միջազգային հարաբերությունների դինամիկան՝ կանխորոշելով նաև ռուս-իրանական հարաբերությունների ընթացքը: Արևմուտքի հետ հակասությունները հարթելու փորձերում անհաջողության մատնված ՌԴ նախագահ Վ. Պուտինն իր պաշտոնավարման երրորդ ժամանակաշրջանից ի վեր շրջադարձ կատարեց Եվրասիայի երկրների հետ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ՝ առանցքային կարևորություն տալով Իրանին և Չինաստանին:

Չնայած և՛ ռուսական, և՛ իրանական իշխանությունների կողմից երկկողմ հարաբերություններն ամրապնդելու և Միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների ավարտից հետո երկխոսության համար ամուր հենք ձևավորելու միտված գործընթացի ականատես ենք, այնուհանդերձ գոյություն ունեն մի շարք զգալի գործոններ, որոնք որոշակի անորոշություն են մտցնում այդ պետությունների հարաբերություններում:

1. Իրանի միջուկային խնդրի կարգավորումը և արևմուտյան պետությունների հետ տնտեսական հարաբերությունների ընդլայնումը կարող է հանգեցնել նավթի և գազի գների ավելի նվազմանը,
2. Իրանական վառելիքը հասանելի կդառնա Եվրոպական շուկայի համար՝ այլընտրանք ապահովելով ռուսականին,
3. պատժամիջոցների տակ գտնվող Իրանի քաղաքականությունը, մասնավորապես Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում շատ ավելի կանխատեսելի և վերահսկելի էր Ռուսաստանի համար, որը ՄՕ-ի խաղաղ կարգավորման պարագայում կարող է այլ ուրվագիծ ստանալ,
4. Շանհայի համագործակցության կազմակերպությունում Իրանի լիիրավ անդամակցությունը կարող է բերել ուժային հնարավոր վերադասավորության՝ նվազեցնելով

Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը կազմակերպությունում,

5. Իրանի մոտեցումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի և բաժանման խնդիրների նկատմամբ կարող էին խստանալ,
6. ՄՕ-ի պատժամիջոցների թուլացման արդյունքում արևմտյան բիզնեսի ներդրումային աճն Իրանում լրագուզի դժվարություններ կստեղծի մրգակալին առումով ավելի թույլ ռուսական ընկերությունների համար,
7. կթուլանա Արևմուտքին հակակշռող Ռուսաստանի աշխարհաքաղաքական գործառույթը՝ նվազեցնելով Ռուսաստանի հետ համագործակցելու Իրանի շահագրգռվածությունը:

Թեև Թեիրանն ու Մոսկվան տևական ժամանակ միասնական են հանդես եկել Տրանսկասպիական գազատարի կառուցման նախագծերի դեմ՝ յեշտադրելով Կասպից ծովի իրավական կարգավիճակի անորոշությունը և այդ նախագծի նկատմամբ մերձկասպյան բոլոր պետությունների համաձայնության անհրաժեշտությունը, սակայն այդ որոշումն ավելի շատ պայմանավորված էր շուկայից այլ մատակարարներին դուրս մղելու ձգտումով և Մերձկասպյան տարածաշրջանում ու Կենտրոնական Ասիայում արևմտյան նախագծերին դիմակայելու սկզբունքով: Աշխարհաքաղաքական նոր վերափոխումների արդյունքում, եթե պատժամիջոցների չեղարկումից հետո Իրանը Եվրոպայի համար վերածվի Ռուսաստանից և Բաքվից էներգետիկ կախվածությունը թուլացնող այլընտրանքի, մեծանում է հավանականությունը, որ Արևմուտքի կողմից տարածաշրջանային էներգետիկ նախագծերը կկենսագործվեն Իրանի մասնակցությամբ:

Այսպիսով, չնայած Մոսկվայի և Թեիրանի միջև Կասպից ծովի ոչ առափնյա պետությունների ռազմական ուժերի ներկայությունը ցրային ավազանում թույլ չտալու հարգում շահերի մեկտեղմանը<sup>16</sup>, ամենևին չի նշանակում, որ ԻԻՀ-ն իրաժարվում է հեռանկարում ԵՄ էներգակիրներ արտահանելու գաղափարից: Իրանի էներգակիրների արդյունահանման և փոխադրման ենթակառուցվածքների զարգացման, նոր շուկաների յուրացման, առաջատար տեխնոլոգիաների ներգրավման

<sup>16</sup> Прикаспийский прорыв: саммит в Астрахани открыл путь к разделу моря <http://ria.ru/politics/20140929/1026131228.html>



նպատակով առանգքային դերակատարում կարող են ունենալ հենց ԵՄ-ը և Չինաստանը: Այդ երկրների տնտեսություններն ի վիճակի են կլանելու թե՛ Իրանի կողմից առաջարկվող գազի որոշ ծավալը, թե՛ անհրաժեշտ տեխնոլոգիական և ֆինանսական միջոցներ տրամադրել ԻԻՀ-ը:

Իրանի ՄԾ-ի քանակզային գործընթացի վերջին փուլում սովզե նաև Շանհայի համագործակցության կազմակերպությանը (ՇՀԿ) Իրանի լիիրավ անդամ դառնալու հարգը<sup>17</sup>: Թեհրանը գտնում է, որ ՇՀԿ-ի կանոնադրությունը հնազեղ է ու չի համապատասխանում նոր միջազգային հարաբերությունների իրողություններին, և Ուֆայում հուլիսի 8-9-ը կայացած գազաթափուկին Հնդկաստանի և Պակիստանի անդամակցության խնդրի լուծումը դիտարկում էր որպես Ռուսաստանի կողմից Իրանին զսպելու և կազմակերպությունում վերջինիս քաղաքական և տնտեսական գերակայությունը թույլ չտալու քայլ<sup>18</sup>: Այս համատեքստում Իրանի ՇՀԿ-ին անդամակցության շուրջ Ռուսաստանի դիրքորոշումը մեծազնում է ՇՀԿ-ից դուրս Իրան-Չինաստան երկկողմ սերտ համագործակցության ակտիվացման հավանականությունը<sup>19</sup>:

Արևմուտքի հետ դիմակայությունն ամրապնդեց Մոսկվայի այն համոզումը, որ Թեհրանի հետ երկխոսության ձևաչափի չընդլայնման դեպքում տարածաշրջանային գործընթացների

<sup>17</sup> Ներկայումս Իրանը կազմակերպության դիտորդի կարգավիճակ ունի, իսկ կազմակերպության անդամակցելու հայտը ներկայացրել է 2008 թ.: Ըստ կազմակերպության կանոնադրության՝ լիիրավ անդամի կարգավիճակը նախատեսում է կազմակերպության նորմատիվային ակտերի համապատասխանելիություն, այդ թվում նաև հավակնորդ պետության՝ ԱՄԿ-ի ԱԽ-ի պատժամիջոցների տակ չլինելու պայմանը, որն ընդունվել է 2009 թ. հետք Իրանի համար ռուս-ամերիկյան վերաբեռնավորման քաղաքականության շրջանում:

Iran disappointed with the results of the Moscow meeting of the SCO, [http://eng.iran.ru/news/analytcs/239/iran\\_disappointed\\_with\\_the\\_results\\_of\\_the\\_Moscow\\_meeting\\_of\\_the\\_SCO](http://eng.iran.ru/news/analytcs/239/iran_disappointed_with_the_results_of_the_Moscow_meeting_of_the_SCO)

<sup>18</sup> Pros and cons of participation Hassan Rouhani at the SCO summit in Ufa, [http://eng.iran.ru/news/analytcs/242/Pros\\_and\\_cons\\_of\\_participation\\_Hassan\\_Rouhani\\_at\\_the\\_SCO\\_summit\\_in\\_Ufa](http://eng.iran.ru/news/analytcs/242/Pros_and_cons_of_participation_Hassan_Rouhani_at_the_SCO_summit_in_Ufa), Мезенцев: процесс присоединения Индии и Пакистана к ШОС может быть запущен в Уфе, Санкт-Петербург, 17 июня, <http://tass.ru/politika/2048872>

<sup>19</sup> Wu Bingbin, China's Contribution to the Comprehensive Solution of Iranian Nuclear Issue, Iran in the Regional and Global Perspective, Report by an international expert group, Editor: Andrey Bakitskiy, M., 2015, p. 22-24.

վրա Ռուսաստանի ներգործության հնարավորությունները կարող են թուլանալ: 2010 թ. ռազմական ոլորտում ռուս-իրանական գրեթե ամբողջությամբ ստեղծված համագործակցությունը վերականգնվելու միտում ունի: Չնայած ռուս-իրանական առևտրատնտեսական համագործակցության ցածր ծավալներին<sup>20</sup> Ռուսաստանը փորձում է հաստատուն դիրքեր գրաղեցնել իրանական սպառազինությունների շուկայում: 2015 թ. հունվարին ՌԴ-ի ՊՆ Ս. Շոյգոյի՝ Իրան կատարած այցի շրջանակներում կնքվեց ռուս-իրանական ռազմական համագործակցության մասին պայմանագիրը<sup>21</sup>: Ապրիլի 13-ին՝ Իրանի և «վեցնյակի» հետ Լոզանի հանդիպումներից անմիջապես հետո, Վ. Պուտինի կողմից հանվեց 2010 թ. Իրանին իրթիռային համակարգեր վաճառելու վրա դրված արգելաբեկը<sup>22</sup>: Այսպիսով, Ռուսաստանը փորձում է նաև Արևմուտքին ցույց տալ, որ Իրանի հարցում այն զիջումները, որոնց ժամանակին գնացել է, ներկայիս դիմակայության պայմաններում այլևս անիրատեսական են: Ռազմական ոլորտում փոխգործակցության հեռանկարը ԻԻՀ-ՌԴ երկկողմ հարաբերությունների կարևորագույն բաղկագումարն է, որով էլ բազատրվում են ՄԾ-ի քանակզային վերջին փուլում ռազմական ոլորտում Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկման Մոսկվայի գործադրած ջանքերը<sup>23</sup>: ՌԴ-ն մտադիր է հանդես գալ որպես մերձավորարևելյան ամենաազդեցիկ երկրներից մեկի զենքի մատակա-

<sup>20</sup> Իրանի խոշոր առևտրական գործընկերների շարքում Ռուսաստանը գրաղեցնում է իններորդ տեղը, ընդ որում՝ Ռուսաստանն ութերորդն է ներմուծման ոլորտում, իսկ արտահանման ոլորտում չի մտնում տասնյակի մեջ: Իրանը նույնպես Ռուսաստանի առևտրական գործընկերների տասնյակում չէ: European Union, Trade in goods with Iran, [http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc\\_113392.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113392.pdf), European Union, Trade in goods with Russia, [http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc\\_113440.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113440.pdf)

<sup>21</sup>Россия и Иран: вместе против "внерегиональных сил", 20.01.2015, [http://www.bbc.com/russian/international/2015/01/150120\\_russia\\_iran\\_cooperation](http://www.bbc.com/russian/international/2015/01/150120_russia_iran_cooperation), Шойгу в Тереране, 20.01.2015, <http://ria.ru/analytcs/20150120/104352036.html>

<sup>22</sup>Внесено изменение в Указ о мерах по выполнению резолюции Совета Безопасности ООН №1929, <http://www.kremlin.ru/events/president/news/49248>

<sup>23</sup> Лавров: снятие оружейного эмбарго с Ирана должно произойти как можно скорее, 9 июля, <http://tass.ru/politika/2105505>



րար, հատկապես, որ շիական Իրանի և Ծոցի սունիական պետությունների միջև դիմակայությունն աստիճանաբար ուժեղանում է, իսկ արաբական երկրները սպառազինությունը գնում են հիմնականում Արևմուտքից: Նման պայմաններում Իրանը կարող է դառնալ ռուսական ռազմական արդյունաբերության ամենաձեռնտու գնորդներից մեկը, ինչը ձեռնտու է նաև իրանական ռազմավարներին, որոնք խուսափում են ռազմական ոլորտում արևմտյան տեխնոլոգիաների կախվածությունից:

Իրանի խաղաղ միջուկային ծրագրի զարգացման գործում ևս Ռուսաստանը փորձում է առաջնային դերակատարում ստանձնել: 2014 թ. նոյեմբերին Իրանի և Ռուսաստանի միջև կնքվեց ատոմային էներգիայի ոլորտում համագործակցությունը զարգացնելու մասին նոր համաձայնագրերի փաթեթը, որով նախատեսվում է շարունակել Բուշեհրի ԱԷԿ-ի ևս երկու էներգաբլոկների շինարարությունը, որոնց թիվը Ռուսաստանի հետ համագործակցության միջոցով, նախատեսվում է հասցնել ութի<sup>24</sup>: 2015 թ. հուլիսի 14-ին՝ Վիեննայի համաձայնագրի կնքումից անմիջապես հետո, Ռ-ի արագորձնախարարը պատարարեց, որ Ռուսաստանն ակտիվորեն կմասնակցի միջուկային համաձայնագրով ձեռք բերված պայմանավորվածությունների կենսագործման գործընթացին՝ ինչպես Իրանից խրատացված ուրանի՝ Ռ-ի տարածք արտահանելու և դրա դիմաց բնական ուրան մատակարարելու, այնպես էլ հարստացման Ֆորդո օբյեկտը բժշկական և արդյունաբերական արտադրության ձեռնարկության վերագործարկելու աշխատանքներին<sup>25</sup>:

Վիեննայի պայմանագրի համաձայն՝ ԱԷԿ-ի կողմից երկրի միջուկային ակտիվության ուսումնասիրության և ռազմական օբյեկտներում ստուգումներ անցկացնելու մասին պահանջները լուրջ սահմանափակումներ են ենթադրում Իրանի միջուկային ենթակառուցվածքների զարգացման համար և կարող են խոչընդոտել պատժամիջոցների արագ վերադարձ: Հատկանշական է, որ համատեղ համապարփակ գործողությունների ծրագիրը նախատեսում է նաև պատժամիջոցների

«հետադարձման մեխանիզմ», որը թույլ կտա առանց ԱՄԿ-ի ԱԷԿ-ի վետոյի իրավունքի վերականգնել նախկին պատժամիջոցների փաթեթը<sup>26</sup>: Իրանի ԱՄ-ի շուրջ ամերիկյան Կոնգրեսի և Ապիտակ տան միջև ընթացող երկխոսությունը<sup>27</sup>, ինչպես նաև իրանական վարչակարգի նկատմամբ ճնշումներ գործադրելու վերաբերյալ ԱՄՆ-ի քաղաքական հոետորաքանությունը հուշում են, որ Արևմուտքը ձգտում է Իրանի հետ ավելի «ուժեղ» համաձայնագրի հասնել, ինչը դժվար թե նպաստի Իրան-ԱՄՆ հարաբերությունների շեշտակի ջերմացմանը: Ներիրանական քաղաքական դաշտում ևս հակված չեն խոշոր զիջումների գնալ Արևմուտքին, և՛ օրենսդիր և՛ գործադիր, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականության մակարդակով փորձ է արվում ամրապնդելու ռազմական և միջուկային ոլորտ-

<sup>26</sup> تحلیلگر امریکایی: واشینگتن و تهران بعد از توافق هسته ای محتاط خواهند بود <http://www.iribnews.ir/NewsText.aspx?ID=683741>, Iran After the Deal: What to Do When the JCPOA Expires, [https://www.foreignaffairs.com/articles/iran/2015-09-07/iran-after-deal?cid=nlc-twofa-20150910&sp\\_mid=49519877&sp\\_rid=6mF66bmF2MjR221haWwU29tS0](https://www.foreignaffairs.com/articles/iran/2015-09-07/iran-after-deal?cid=nlc-twofa-20150910&sp_mid=49519877&sp_rid=6mF66bmF2MjR221haWwU29tS0),

<sup>27</sup> Այս թվականի մայիսի 14-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատն ընդունեց մի օրինագիծ, որը պարտավորեցնում էր Ապիտակ տանը Կոնգրեսի քննարկմանը ներկայացնել Իրանի միջուկային ծրագրի մասին վերջնական համաձայնագիրը: Օրինագծի օգտին քվեարկել են Ներկայացուցիչների պալատի 400 անդամ, դեմ են քվեարկել 25-ը: Ավելի շուտ այդ փաստաթուղթը հավանության է արժանացել նաև Սենատի կողմից: Ընդհանուր առմամբ Կոնգրեսը դեմ է համաձայնագրի կնքմանը և կարծում է, որ Թեհրանին չի կարելի վստահել, ուստի օրինագիծը հնարավորություն կտա գնահատելու Իրանի ԱՄ-ի շուրջ կնքված համաձայնագրի արդյունավետությունը և թույլ չի տա կառավարությանը Կոնգրեսին մեկուսացնել իրանական ԱՄ-ի կարգավորման գործընթացից: Մայիսի 22-ին Բարաք Օբաման ստորագրեց Իրանի ԱՄ-ի համաձայնագրի վերջնական ընթացը Կոնգրեսի քննարկմանը ներկայացնելու մասին օրենքը: Քննարկումներից հետո նախագահը 12 օրվա ընթացքում կարող է վետո դնել Կոնգրեսի որոշման վրա, իսկ վերջինս 10 օրվա ընթացքում կարող է վիճարկել այդ որոշումը: Այս ժամանակահատվածում ԱՄՆ-ը չի կարող չեղարկել Իրանի նկատմամբ իր կողմից սահմանված պատժամիջոցները: U.S. lawmakers lay down 'red lines' on Iran nuclear deal, Reuters, Jun 25, 2015, <http://www.reuters.com/article/2015/06/25/us-iran-nuclear-congress-idUSKBN0P51FY20150625>

Տե՛ս նաև [Republcan dispute may prevent U.S. Congress vote on Iran deal](http://thedailyherald.com/index.php?option=com_content&view=article&id=58366:-republican-dispute-may-prevent-us-congress-vote-on-iran-deal&catid=3:news&Itemid=7), 10 sept. 2015, [http://thedailyherald.com/index.php?option=com\\_content&view=article&id=58366:-republican-dispute-may-prevent-us-congress-vote-on-iran-deal&catid=3:news&Itemid=7](http://thedailyherald.com/index.php?option=com_content&view=article&id=58366:-republican-dispute-may-prevent-us-congress-vote-on-iran-deal&catid=3:news&Itemid=7)

<sup>24</sup> Տե՛ս Иран и Россия подписали пакет соглашений о строительстве восьми энергоблоков АЭС, 11 ноября 2014, <http://tass.ru/politika/1564819>

<sup>25</sup> Лавров: РФ будет принимать участие во всех этапах реализации соглашения Ирана и "шестерки", 14 июля, <http://tass.ru/politika/2118123>



ներում ձեռքբերումները<sup>28</sup>: Ընդամին, Իրանի կողմից համապատասխան զիջումների չգնալու և պատժամիջոցների տնտեսական և ռազմական բաղադրիչների արագ ու ամբողջական չեղարկման պայմաններում, բնական է, որ Իրանը կշարունակի ռուսական կողմի հետ ակտիվ երկխոսության ներկայիս ձևաչափը: Բազի ալո, ԻԻՀ-ի և ՌԴ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունները՝ գործող սիրիական կառավարությանն աջակցելու ու տարածաշրջանային արմատական իսլամական կազմակերպությունների դեմ պայքարելու խնդիրներում մեծապես համընկնում են, ինչն էլ արտահայտվում է Սիրիայում Թեհրանի ու Մոսկվայի միջև ռազմաքաղաքական փոխգործակցության ակտիվացմամբ:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուկրաինական ու մերձավորարևելյան ճգնաժամերի շուրջ Արևմուտքի հետ դիմակայության աճի պայմաններում Իրանի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների սերտագման ուղղությամբ ցանքեր գործադրելով՝ Ռուսաստանը փորձում է չկողոցնել տարածաշրջանում գրեթե միակ կայուն գործընկերոջը, խուսափել միջազգային մեկուսագումից և նվազեցնել արևմտյան պատժամիջոցների արդյունքում ստեղծված ֆինանսական և տնտեսական կորուստները: Իր հերթին Ռուսաստանի հետ հարաբերությունների ակտիվացման միջոցով Թեհրանը փորձում է հավասարակշռել սեփական դիրքերը, հաղթահարել ռազմական և էներգետիկ ոլորտի դժվարությունները, հատկապես, եթե պատժամիջոցների տնտեսական և ռազմական բաղադրիչներն արագ չվերացվեն, և միջուկային գործարքը չհանգեցնի գանկայի արդյունքների: Թեև ակնկալվում է, որ պատժամիջոցների չեղարկումը կուժեղացնի Իրանի դիրքերը համաշխարհային էներգետիկ շուկայում՝ ալյորնտրանք ապահովելով ռուսական վառելիքին, իսկ արևմտյան պետությունների ու Չինաստանի հետ տնտեսական հարաբերությունների ընդլայնումը կապահովի իրանական տնտեսությունում ներդրումային աճ՝ համաշխարհային առաջանգիլ տեխնոլոգիաների ներգրավմամբ լրագուզիս դժվարություններ ստեղծելով ռուսական ոչ մրցունակ բիզնեսի համար, այսուհանդերձ ռուս-իրանական

հարաբերությունների օրակարգն ավելի լայն է: Երկու երկրներն էլ բավականաչափ ներգրավված են Սիրիայի, Իրաքի, Աֆղանստանի, Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի աշխարհաքաղաքական գործընթացներ, որտեղ ըստ ամենայնի կշարունակեն հանդես գալ միասնական ճակատով՝ Արևմուտքին և նրա տարածաշրջանային դաշնակիցներին հակադրելու նպատակով:

<sup>28</sup> رژیم صهیونیستی سال دیگر در منطقه وجود نخبند داش/شورای نگهبان با نظارت استصوابی باید صلاحیتها را احرار کند  
<http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=13583>

## ԳՐԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱԼ

### ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991-2013 ԹԹ.)

Հայերն ու իրանցիները երկու հզոր մշակույթ, պատմություն ունեցող ժողովուրդներ են, որոնց շահերը հաճախ են խաչվել պատմության քառուղիներում: Իսկ այսօր հայ-իրանական մշակութային հարաբերություններն ի վիճակի են հարըստացնելու ու հզորացնելու երկու ժողովուրդներին և ստեղծելու նոր արժեքներ: Հայ-իրանական մշակութային հարաբերությունները, միմյանց մշակութային արժեքների պահպանման ցանկությունը թերևս կարող են օրինակ հանդիսանալ տարածաշրջանի բոլոր երկրների համար:

Հայաստանի Հանրապետությունը՝ իբրև անկախ երկիր, Իրանի Իսլամական Հանրապետության հետ սկսեց ձևավորել հարաբերություններ ոչ միայն քաղաքական, տնտեսական բնագավառում, այլ նաև լուրջ քայլեր իրականացրեց մշակութային ոլորտում: Հայ-իրանական մշակութային հարաբերություններն առաջին անգամ իրավապայմանագրային դաշտում հայտնվեցին 1992թ. մայիսի 7-ին կողմերի միջև ստորագրված համաձայնագրով, որի շնորհիվ Հայաստանի և Իրանի միջև մշակութային հարաբերությունների բնագավառներում հաստատվեցին արդյունավետ կապեր:

Եթե կարող ենք փաստել, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայերը և իրանցիները բավական տեղեկացված էին միմյանց մասին և ծանոթ էին մշակութային ծալքերին, ապա Հայաստանի խորհրդայնացումից հետո այդ կապը խզվեց: Իրականում երկու երկրների ճանաչման գործընթացը բավական թույլացավ, և միայն Հայաստանի անկախացումից հետո մշակութային հարաբերությունների արդյունավետ զարգացման շնորհիվ հարաբերությունների մյուս ոլորտները շատ ավելի ոլորին դարձան, քանզի մեծացավ ճանաչողության աստիճանը: Եվ եթե անգամ Հայաստանում կային արվեստագետ-

ներ, ովքեր ժամանակին ճանաչել էին իրանական արվեստն ու մշակույթը և ունեցել էին որոշակի համագործակցության եզրեր, ապա շատ քչերն էին, որ իրապես ընկալում էին արդեն փոփոխված երկրի՝ իսլամական արժեհամակարգով համեմված մշակույթը:

Հայ-իրանական մշակութային հարաբերությունների ձևավորման գործում անշուշտ մեծ ավանդ է ունեցել իրանահայ գաղութը, որը կապող կամրջի դեր է կատարել հայ-իրանական թերևս բոլոր տեսակի հարաբերություններում: 1992 թ. փետրվարի 9-ին Հայաստանի և Իրանի միջև ստորագրված հոչակագրում կարևոր տեղ էր հատկացված հայ-իրանական մշակութային կապերին. հոչակագրի 20, 24, 25-րդ հոդվածները հենց վերաբերում էին այդ հարաբերությունների հաստատմանը և խորացմանը: Մասնավորապես կողմերը պարտավորվում էին մշակութային կապերը զարգացնելու նպատակով փոխանակել մշակույթի, արվեստի, կինոյի բնագավառներին վերաբերող խմբեր, կազմակերպել լուսանկարների ու գրքերի ցուցահանդեսներ, ֆիլմերի մեկշարայա փառատոներ և այլն: Սերտ համագործակցության հիմքեր էին նախատեսվում դնել ռադիոյի, հեռուստատեսության, լրատվական կազմակերպությունների, ինչպես նաև լրատվության փոխանակման բնագավառներում: Հաշվի առնելով երկու երկրների մշակութային կապերի դարավոր անցյալը՝ պայմանավորվածություն էր ձեռք բերվել սերտորեն համագործակցել հնագիտության, պատմական հուշարձանների, ձեռագիր մատյանների պահպանման ու վերականգնման բնագավառներում:

Հայ-իրանական հարաբերությունների ձևավորման հենց սկզբից հայ և իրանցի համապատասխան պաշտոնյաների ուշադրության կենտրոնում էին գտնվում մշակութային հարաբերությունների խորացման հարցերը: Այս առումով ուշագրավ է 1992 թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 47-րդ նստաշրջանում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը. «Հայաստանը փորձել է պատմության բեռն առիթի վերածել վերագտնելու հազարամյա արմատներն այս տարածաշրջանում վերահաստատելու տարածաշրջանի ժողովուրդների հետ մշակույթների ընդհանրությունը և էթնիկական ու կրոնական տարբերությունները վերածելու հարստության աղբյուրի՝ այնպես, որ այդ տարբերությունները նպաստեն մեր

1 ՀՀ ԱԳԼ ղիվանագիտական բանբեր, Կենտրոն, 1993 թ.:



ընդհանուր տան խնդիրների լուծմանը»<sup>2</sup>:

ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեպպի Կ.Բայրուրյանի հետ ունեցած հարցազրույցից պարզ դարձավ, որ «1992թ., երբ կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր մշակութային և գիտական համագործակցության վերաբերյալ, դրա հիման վրա կազմակերպվեցին բազմաթիվ ցուցահանդեսներ, կինոփառատոներ, արվեստի գործիչների փոխայցելություններ, մշակույթի օրեր և այլն: Երևանում վերանորոգվեց իրանական աչքի ընկնող պատմամշակութային հուշարձան՝ «Կապույտ մզկիթը», որն իրենով նշանավորեց հայ-իրանական բարեկամության մի նոր էջ»<sup>3</sup>:

Հատկանշական է, որ այս ողջ 20 տարիների ընթացքում իրանական-իսլամական արժեհամակարգի արվեստը մեծապես ցուցադրվում և քարոզվում է Հայաստանում հատկապես իսլամական հեղափոխությանը նվիրված «Այգաբացի տասնօրյակ» տոնակատարության ժամանակ: Հայկական արվեստի գործերը հիմնականում առանց խնդիրների ներկայացվում են հայկական համայնքում: Պետք է փաստել, որ «իրանական մշակույթը շատ ավելի լավ է ներկայացված Հայաստանում, քան մերը՝ Իրանում»<sup>4</sup>:

1994 թ. կնքվեց «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, տուրիզմի և զանգվածային լրատվական միջոցների բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որն ուժի մեջ մտավ միայն 2006 թ. օգոստոսի 1-ից<sup>5</sup>:

Անկախության առաջին տարիներին ՀՀ-ն իբրև հայ-իրանական մշակութային հարաբերությունների ամրապնդման

գրավական որոշում կայացրեց երևանի սրտում գտնվող «Կապույտ մզկիթը» Իրանին՝ որպես մշակութային կենտրոն հանձնելու վերաբերյալ: Հայկական կողմը նման քայլով հավանաբար ակնկալում էր նաև նման մի շինություն ստանալ Թեհրանում, որը կլիներ Հայաստանի մշակութային օջախը:

1995 թ. փետրվարի 23-ին ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը ընդունեց ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Համիդ Ռեզա Նիքբար Էսֆահանիին: Հանդիպման ընթացքում նախատեսվեցին ներկայացնել երկու երկրներում արվեստի փառատոների անցկացման հայկական մասի ծրագիրը<sup>6</sup>: Սակայն իրականում բավական դժվար է իսլամական արժեհամակարգ ունեցող երկրում ներկայացնել քրիստոնեական արժեհամակարգ ունեցող երկրի մշակույթը: Այն միայն իրանական կողմի մանրագլխի ռաումնասիրությունից հետո հնարավոր է կյանքի կոչել, այն էլ անհասկանալի է, թե հանրությանը որքանով կհետաքրքրի:

2000 թ. հուլիսի 18-ին ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ռուլանդ Շառոյանը պաշտոնական այցով մեկնեց ԻԻՀ: Իրանի մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարը հանդիպման ժամանակ նշել է, որ իր երկիրը հատուկ ուշադրություն է դարձնում Իրանում հայկական եկեղեցիների վերանորոգման և պահպանության հարցերին: Այս ծրագրում առանձնահատուկ տեղ ունեն Իրանի հյուսիսում գտնվող Սք. Ստեփանոս և Սք. Թադեի վանքերը: Շառոյանը քննարկել էր Իրանում հայկական մշակութային շաբաթ անցկացնելու հարցը, որը ողջունել էր ԻԻՀ մշակույթի նախարարը՝ այն որակելով քաղաքակրթությունների միջև երկխոսության լավ գաղափար, ինչը միջազգային հանրության համար մահմեդականների և քրիստոնյաների համերաշխ համակցության լավ օրինակ է<sup>7</sup>:

Սակայն Իրանում հայկական մշակութային օրեր անցկացնելու գաղափարը կյանքի չէր կոչվում՝ Իրանում առկա որոշակի խոչընդոտների պատճառով, ինչն արձանագրվել է հայ-իրանական տնտեսական համագործակցության համառոտ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին տեղեկանքում. «Թեև հայկական կողմը քանիցս ներկայացրել է մշակութային օրեր անցկացնելու ծրագրեր, սակայն տարբեր պատճառներով դրանք չեն կոչվում»:

<sup>2</sup> **Վահան Բայրուրյան**, Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ. Հայացք երկու տասնամյակ հեռուդրությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Երևան, 2012 թ., էջ 16-17:

<sup>3</sup> Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98 թթ.) Վահան Բայրուրյանի հետ, ապրիլի 13, 2012, Երևան:

<sup>4</sup> Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1993-1996 թթ.) Վահան Փափազյանի հետ, դեկտեմբերի 7, 2013, Երևան:

<sup>5</sup> Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, տուրիզմի և զանգվածային լրատվական միջոցների բնագավառում համագործակցության մասին, <http://www.parliament.am/library/erkoxm/2006/10.pdf>

<sup>6</sup> Հակոբ Մովսեսի օրագիր, 23 փետրվարի 1995 թ., ՀՀ ԱԳՆ, Պատմա-դիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 242:

<sup>7</sup> ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 67, էջ 41-42:



ռաբանություններով (իրանական նոր տարի, սգո ամիս, նախագահական ընտրություններ և այլն) դրա անցկացումը հետաձգվել է (ամենայն հավանականությամբ այն տեղի կունենա նոյեմբերին)՝ ՀՀ նախագահի Իրան կատարելիք այցի ժամանակ): Այնուամենայնիվ, արարողակարգային բնույթի ինչ-որ ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ Իրանում միշտ էլ կազմակերպվել են:

Արդարության առաջ ջնդհանջելու համար պետք է փաստենք, որ Իրանի ողջ տարածքում այսօր էլ գործում են հայկական մարզամշակութային ակումբներ, միություններ, որոնցից են «Րաֆֆի», «Սանահին» և առավել հայտնի մարզամշակութային «Արարատ» կազմակերպությունը՝ նույնանուն մարզավանդակ հանդերձ: 2000 թ. ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամին 120 հազար դոլարի նվիրատվություն կատարեց Թեհրանի «Արարատ» մարզամշակութային միության «Արարատ» ֆուտբոլի թիմին՝ և խոստացավ, որ միությունն իրանական կառավարության մշտական հոգածության տակ է գտնվելու: Իրանում գործում են ավելի քան 30 հայկական մարզամշակութային միություններ:

Այսօր էլ Իրանում պետական մակարդակով հոգածություն է ցուցաբերվում հայկական մարզամշակութային, ինչպես նաև հոգվող արժեքների նկատմամբ: Թեհրանում լույս է տեսնում «Ալիք» օրաթերթը, որն ունի նաև էլեկտրոնային տարբերակ, ինչով էլ ավելի է մեծացրել իր ընթերցողների թիվը: «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանը մեծ հպարտությամբ է ներկայացնում «Ալիքի» իրականացրած գործունեությունը՝ որակելով այն իբրև Իրանի հայ համայնքի պահպանման մի գործոն. «2011 թ. մեր օրաթերթի 80-ամյակն էր, և իրանահայ համայնքի երեք թեմերում էլ այն մեծ շուքով նշվեց, որին ամենայն հարգանքով ու համագործակցությամբ մասնակցեցին մշակութային, մարզական, միութենական, ազգային ոլորտներում աշխատող բոլոր կառույցների, անկախ միավորների, նույնիսկ հակադիր հոսանքների ներկայացուցիչներ»<sup>9</sup>: Իրանում նմանապես գործում է «Արաքս» այսու-

գիրը: Միայն Թեհրանում կա հայկական 8 եկեղեցի:

Սակայն Հայաստանի Հանրապետության համար առավել կարևոր է, որ Իրանում ներկայացվեն Հայաստանի մշակույթը և արվեստը, որպեսզի իրանցիները կարողանան ճանաչել մեզ նաև մեր արվեստով, երաժշտությամբ, կերպարվեստով, բնականաբար, հասկանալի է, որ պետք է ընտրվեն այնպիսի գործեր, որոնք չեն հակադրվում իսլամական արժեքներին:

2000 թ.-ից հայ-իրանական մշակութային քննարկումների ժամանակ առանցքային դերակատարում էր ստացել Իրանի հյուսիսային շրջանների հայկական եկեղեցիների պահպանման հարցը: Իրանահայ համայնքի նյութական օժանդակությամբ աշխատանքներ էին տարվում Իրանի Սք. Թաղեի հայկական վանքի, Գրիս, Մահլազան և Դարաշամբ գյուղերի հայկական եկեղեցիների ու Ա.Ատեփանոս նախավկայի վանքի զանգակատան նորոգման և վերանորոգման նախագծի շուրջ: Նախատեսվում էր Ա.Թաղեի հայկական վանքի տարածքում կատարել հնագիտական և երկրաֆիզիկական հետազոտություններ<sup>11</sup>:

2001 թ. դեկտեմբերի 25-27-ին տեղի ունեցավ ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն, որն ուղեկցվեց մշակութային միջոցառումներով. տեղի ունեցավ զբայ համերգ, և ներկայացվեց հայկական մշակույթը: Կազմակերպվեցին հայ մշակույթը ներկայացնող մի շարք ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ: Պաշտոնական պատվիրակությանն ուղեկցում էին մշակույթի գործիչներ, ովքեր իրենց արվեստը ներկայացրին Թեհրանի «Վահրաթ» մշակութային հանրահայտ համալիրում: Համերգային ծրագրում ելույթ ունեցավ Կոմիտասի անվան պետական լարային քառյակը<sup>12</sup>:

2008 թ. հոկտիս 2-10-ը Կանադայի Քվեբեկ քաղաքում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 32-րդ նստաշրջանի ընթացքում ԻԻՀ-ի ջանքերով Ա.

տը տե՛ս հավելվածում):

<sup>9</sup> Տեղեկանք հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, 14 հունիսի, 2001 թ., ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 101:

<sup>10</sup> Նույն, 15. 08. 2000 թ., էջ 3:

<sup>11</sup> Հարցազրույց «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանի հետ, նոյեմբերի 1, 2012 թ. Թեհրան, ԻԻՀ (հարցազրույցի ամբողջ տեքստը տե՛ս հավելվածում):

<sup>11</sup> Ծրագիր ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության և ԻԻՀ «Իրանի մշակութային ժառանգության» կազմակերպության՝ 2002 թ. համագործակցության, ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 177:

<sup>12</sup> Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:



Թաղեռն<sup>13</sup> առաքյալի պատմական վանքը՝ որպես Իրանի 9-րդ պատմամշակութային կորոզ, պաշտոնապես գրանցվեց միջազգային այդ կազմակերպության պատվավոր ցուցակում: Պաշտոնական հաղորդումների համաձայն՝ իրանական կողմը Սուրբ Թաղեի վանքի հետ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քննարկմանն էր հանձնել նաև Ծործորի Ս. Մարիան և Ս. Ստեփանոս նախավկայի վանքերի փաթեթները: Իրանի հայկական հուշարձանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակ ներգրավելու գործընթացի բոլոր փուլերում իր աջակցությունն է ցույց տվել Հայաստանի Հանրապետությունը՝ այն համարելով միջմշակութային համագործակցության ու փոխըմբռնման վառ դրսևորում<sup>14</sup>:

Սա հայ-իրանական մշակութային հարաբերություններում գրանցված լավագույն օրինակներից մեկն էր, որից հետո միջազգային կազմակերպություններում կողմերը որոշեցին շարունակել միմյանց մշակութային արժեքների ներկայացումը և պաշտպանության գործընթացը:

2009 թ. ապրիլի 13-14-ը ԻԻՀ-ում պաշտոնական այցով գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ նաև Իրանի հոգևոր առաջնորդի հետ և բարձր գնահատեց սեյյեդ Ալի համենեինի ավանդը հայ-իրանական հարաբերությունների ամրապնդման գործում: Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Իրանի հոգևոր առաջնորդին՝ մեր հարևան երկրում գտնվող հայկական պատմամշակութային արժեքների պահպանման հարցում ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար<sup>15</sup>:

Հայկական հոգևոր մշակութային օջախների՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկ ընդգրկելու կապակցությամբ ՀՀ ԱԳՆ է.Նալբանդյանը ևս հայտնեց իր շնորհակալությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 36-րդ գլխավոր կոնֆերանսի ժամանակ. «Առկա է լավ համագործակցություն Իրանի հետ, որը պատշաճ հոգատարություն է դրսևորում

րում իր տարածքում տեղակայված հայկական հուշարձանների նկատմամբ: Վերոնշյալի վկայությունն է Իրանի ներկայացմամբ՝ Սբ. Թաղեոս և Սբ. Ստեփանոս վանքերի եւ Զործոր մատուռի Համաշխարհային ժառանգության ցանկ ընդգրկումը: Հայ և իրանցի մասնագետների համատեղ ջանքերով երևանում վերականգնվել է և գործուն է XVIII դարի մզկիթ»<sup>16</sup>:

2014 թ. մայիսին իրանական Մեծ գործակալության տարածած տեղեկատվության համաձայն՝ Իրանի Ապահանի Սուրբ Ամենափրկիչ վանքը 2015 թ. ևս կգրանցվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում<sup>17</sup>:

2011 թ. հայ-իրանական մշակութային հարաբերությունները կարելի է ասել թևակոխեցին նոր փուլ: Իրականացվեց մի միջոցառում, որը մշակութային համագործակցության բնագավառում նոր, բարձր մակարդակի ձևաչափ է. այն կոչվում է հայ-իրանական բարեկամության օրեր: «Իրանցի մեր գործընկերների հետ անցկացրինք բարեկամության օրեր, նշում է ՀՀ մշակույթի փոխնախարար Ա.Պողոսյանը, որոնք 2011 թ. կայացան Սյունիքի մարզում՝ Մեղրիում, իրանցի մեր գործընկերները մշակութային, այսպես ասած, մեծ դեսանտով էին գտնվում Մեղրիում և ներկայացնում էին իրանական հնագույն մշակույթի ողջ ներկայանակը: Իհարկե, միջոցառմանը միացան նաև կատարողական արվեստի, կերպարվեստի մեր հայկական խմբերը, և Մեղրիում բացվեց նաև հայ-իրանական բարեկամության հուշարձան: Մենք պայմանավորվածություն ունենք իրանցի մեր գործընկերների հետ, որ հայ-իրանական բարեկամության օրերի ձևաչափը շարունակվելու է նաև Իրանում»<sup>18</sup>:

Այդ ժամանակ ծագեց Հայաստանի և Իրանի սահմանին խաղաղության և բարեկամության այգի հիմնելու գաղափարը: Աշխատանքների մեկնարկը տրված է: ՀՀ բնապահպանության նախարարության և Իրանի բնապահպանության վարչության միջև ստորագրվել է բնապահպանական համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի իրականացման 2012-2013 թթ. գործողությունների ծրագիր: Ձեռք է բերվել պայմանավորվածություն երկու պետությունների ընդհանուր սահմա-

<sup>13</sup> Ս. Թաղեռն կառուցվել է Ս. Թաղեոս առաքյալի շիրմի վրա: Այն հայկական հնամյա վանքերից մեկն է, որ կառուցվել է 6-րդ և վերանորոգվել 9-րդ դարերում: 1227 թ. մինչև 1833 թ. ծառայել է որպես Արտպատականի ՀԹ առաջնորդանիստ կենտրոն:

<sup>14</sup> Երեք հայկական վանական համալիր ՅՈՒՆԵՍԿՕ-ում, հուլիսի 22, 2008 թ., [http://araxmag.blogspot.com/2008/07/blog-post\\_9806.html](http://araxmag.blogspot.com/2008/07/blog-post_9806.html)

<sup>15</sup> Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն, 13.04.2009 - 14.04.2009 <http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/04/13/news-56/>

<sup>16</sup> ՀՀ ԱԳ նախարար Էվվարդ Նալբանդյանի ելույթը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 36-րդ գլխավոր կոնֆերանսին, 29.10.2011, [http://www.mfa.am/hy/speeches/item/2011/10/29/unesco\\_2910\\_sp/](http://www.mfa.am/hy/speeches/item/2011/10/29/unesco_2910_sp/)

<sup>17</sup> شو می جهان وایک مسافرتی <http://www.mehrnews.com/mobile/detail/2296396>

<sup>18</sup> Նույն տեղում:



նում «Բարեկամության և խաղաղության այգի» ստեղծելու մասին<sup>19</sup>:

Սակայն մեր ունեցած տվյալներով իրանական կողմի խնդրանքով հայ-իրանական բարեկամության օրերն Իրանում հետաձգվել են, որը սկզբում հետաձգվեց մինչև 2013 թ., իսկ 2015 թ. վերջերին անգամ հայտնի չէր, թե երբ այն տեղի կունենա:

2012 թ. մարտի 13-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ իրականացված «Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով» միջազգային գիտաժողովի ժամանակ ՀՀ մշակույթի փոխնախարար Ա.Պողոսյանի զեկուցմամբ «ՀՀ մշակույթի նախարարությունը ԻԻՀ-ի հետ, յուրաքանչյուր 2-3 տարին մեկ ստորագրում է որոշակի գործողությունների պայմանագիր և մշակույթի ոլորտում իրականացնում համագործակցություն՝ խոր գիտակցումով, որ այդ համագործակցությունն, իսկապես, մշակույթային առումով, մշակույթների յուրօրինակ երկխոսություն է և փոխհարստացնում է և՛ հայկական հնամենի մշակույթը, և՛ իրանական մշակույթը»<sup>20</sup>:

2012 թ. հոկտեմբերի 23-25-ին ՀՀ-ում անցկացվեց Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի հերթական 11-րդ նիստը, որի արդյունքում հոկտեմբերի 25-ին ստորագրվեց «Փոխըմբռնման հուշագիր»: Հայկական աշխատանքային խմբի առաջարկով փաստաթուղթ են ներառվել հետևյալ կետերը.

- Հայաստանում գտնվող իրանական և Իրանում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների կրճատման, պահպանություն, վերանորոգում, հանրահրահանում,
- 2012-2013թթ. ընթացքում իրանական մասնագետների մասնակցությամբ Երևանում գտնվող Կապույտ մզկիթի վերանորոգման աշխատանքներ,
- ապահովել երկու երկրների արվեստագետների մասնակցությունը կազմակերպվող փառատոներին, գեղար-

վեստի և կիրառական արվեստի ցուցահանդեսներին, գրական-թարգմանական ոլորտում իրականացվող համատեղ նախագծերին,

- շարունակել համագործակցությունը 2011 թ. աշնանը մեկնարկած «Հայաստան-Իրան. Բարեկամության օրեր» ծրագրի ձևաչափով և քննարկել նշված ծրագիրը 2012 թ. աշնանը Իրանում իրականացնելու հնարավորությունը<sup>21</sup>: 2012 թ. նոյեմբերի 13-ին ՀՀ մշակույթի նախարար Հ.Պողոսյանը հանդիպեց ԻԻՀ Ազգային արխիվի և գրադարանի տնօրեն, ԻԻՀ նախագահի խորհրդական Էսհադ Սալահիին: Զրույցի ընթացքում կողմերը պայմանավորվեցին համագործակցել երկու երկրների Ազգային գրադարանների ֆոնդերում պահվող հայկական և իրանական ձեռագրերի ցուցակագրման, թվայնացման, ուսումնասիրման և հետազոտում երկու երկրներում համատեղ ցուցադրությունների միջոցով դրանք հանրության ուշադրությանը ներկայացնելու վերաբերյալ: Համաձայնվեցին համագործակցություն իրականացնել հին ձեռագրերի վերականգնման բնագավառում՝ մասնագետների փոխայցելությունների և փորձի փոխանակման միջոցով: Հ.Պողոսյանը հանդիպում ունեցավ նաև ԻԻՀ մշակույթի և իսլամական առաջնորդման նախարար սեյեդ Մոհամմադ Հոսեյնի հետ, որի ընթացքում կողմերը համաձայնվեցին համագործակցել միջազգային կառույցների, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում: Ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու նպատակով կմշակվեն և կներկայացվեն համատեղ հայտեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում երևանի Կապույտ մզկիթի ներկայացման ուղղությամբ: Մեկ այլ հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ ԻԻՀ Իսլամական մշակութային կապերի կազմակերպության նախագահ Խորամշահիին հետ, կողմերը համաձայնվեցին Հայաստանում ընդլայնել պարսից լեզվի ուսումնասիրման ծրագիրը, իրականացնել համատեղ երաժշտական նախագիծ՝ Հայաստանի և Իրանի ազգագրական համույթների համատեղ ծրագրերի ձևաչափով: Նախատեսվում է հայկական կողմից ծրագիր ընդգրկել «Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի ժողովրդական գործիքների նվագախումբը»<sup>22</sup>:

<sup>19</sup> Հայ-իրանական սահմանին «Բարեկամության և խաղաղության այգի» կկառուցվի, 14.02.14, <http://www.tert.am/news/2014/02/14/armenia-iran/>

<sup>20</sup> Արթուր Պողոսյան, ՀՀ մշակույթի փոխնախարար, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Եր., 2012թ., էջ 12-14:

<sup>21</sup> Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:

<sup>22</sup> Տեղեկանք Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերա-



Այս ամենով հանդերձ պետք է փաստել, որ մի շարք մշակութային ծրագրեր այնուամենայնիվ կյանքի են կոչվել: Իրանցիները գրեթե ամեն տարի Հայաստանում նշում են «Այգաբացի տասնօրյակը», որի ժամանակ ներկայացվում է իսլամական արվեստը, Հայաստան են ժամանում իրանցի կինոգետները, որոնք մասնակցում են «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին: Ամեն տարի Հայաստանում իրականացվում են Իմամ Խոմեյնու մահվան տարելիցին նվիրված միջոցառումներ: Նովրուզի տոնակատարության օրերին, բացի նրանից, որ Հայաստան են ժամանում իրանցի վտարանդի երգիչները, 2013 թ. մարտի 23-ին ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի կողմից իրականացվեց իրանական հայտնի «Մագհար» փոփ խմբի համերգը: Նմանապես Հայաստանից ամեն տարի խմբեր են մեկնում ԻԻՀ՝ մասնակցելու գրքի միջազգային ցուցահանդեսներին: 2010 թ. «Փոփոխությունների թատրոնի» ներկայացուցիչները մասնակցեցին Թեհրանի համալսարանական թատրոնի 13-րդ միջազգային փառատոնին, ՀՀ նկարիչների միության անդամները մասնակցել են Իրանում տեղի ունեցող ձեռարվեստի միջազգային ցուցահանդեսներին: 2011թ. ապրիլի 24-28-ը Քիշի առաջին միջազգային կինոփառատոնում հայ ռեժիսոր Հարություն Խաչատրյանի «Պոետի վերադարձը» ֆիլմը լավագույն ֆիլմ անվանակարգում արժանացավ գլխավոր մրցանակի<sup>23</sup>:

Կարելի է վստահաբար ասել, որ Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո հայ-իրանական գրական առնչությունները նոր փուլ են մտել: Հայաստանի և Իրանի մտավորականները, գրողները, բանաստեղծները, մշակութային գործիչները, միմյանց ավելի լավ ճանաչելու նպատակով, 2004 և 2009 թվականներին Հայաստանում, 2007 և 2011 թվականներին Իրանում անցկացրել են գրական կամուջ գիտաժողովներ: Կազմակերպվել են հայ և պարսից գրականության դասական և ժամանակակից պոետների, գրողների, թատերագիրների լավագույն ստեղծագործությունների փոխադարձ թարգմանություններ, դրանց հրատարակություններ<sup>24</sup>: Ակնհայտորեն նկատվում են համագործակցության լուրջ ձեռքբերում-

բերյալ, ՀՀ մշակույթի նախարարություն:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Վ. Փարսադանյան, Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, Եր., 2012 թ., էջ 103:

ներ հատկապես թարգմանչական արվեստի բնագավառում, երբ երկու կողմերի գրականագետները փորձում են բնագրից թարգմանել գիտական և գեղարվեստական լավագույն գրականությունը: Ասված ապայուցն են պարսից լեզվով տպագրված՝ «Ժամանակակից հայ բանաստեղծները պարսկերենում», «Արդի հայ պոեզիայի ժողովածուն», որոնք ընդգրկում են ժամանակակից հայ անվանի գրողների ստեղծագործությունները: Նախատեսվում է առաջիկա տարիներին պարսկերեն թարգմանել և 11 հատորով տպագրել հայ բանաստեղծների աշխատանքները, և որպես առաջին օրինակ լույս տեսավ Հ.Գրիգորյանի բանաստեղծությունների ժողովածուն: Պարսկերենից հայերեն թարգմանվել են՝ «Կանաչ ծավալ», «Ղարուսեմ», «Փոքրիկ սիրտս ու՛մ նվիրեմ», «Սիրո յոթ քաղաքը», «Ձահակ» (իրանական ժամանակակից դրամատուրգի), «Ոսկե գմբեթ» (ժամանակակից իրանական պոեզիա), «Կապույտ բաց մայրամուտի կապույտ» (հետհեղափոխական իրանական պատմվածքների ժողովածու, «Մուլալի Մասնավիի պատումները», «Ղեյսար Ամինփուրի բանաստեղծությունների ընտրանի», իրանական մանկական պատմվածքներ, «Հիմա երբ հեռացել ես, հիմա երբ եկել ես», «Ուտնահետքեր ծովափին», «Իրանական և հայկական ընդհանուր ասացվածքներ», «Քրիստոսը Ղուրանում», «Սուրբ Ղուրան», «Ուտուցումն ու դաստիարակությունն Իսլամում», պարսկերենի դասագրքեր, «Իրանահայոց հանրագիտարան» և այլն<sup>25</sup>:

Ինչպես նշում է ԻԻՀ-ում ՀՀ նախկին դեսպան Գրիգոր Առաքելյանը. «Արդեն վեց տարի է, որ Հայաստանը Թեհրանում կազմակերպվող գրքի միջազգային ցուցահանդեսի մշտական և ակտիվ մասնակիցն է, կազմակերպվում են սեմինարներ, անցկացվում են մշակութային օրեր և այլն: Հայաստանից թատերախմբեր են հրավիրվում Իրան: Մենք աշխատում ենք բազմակողմանի ու ճիշտ ներկայացնել Իրանի քաղաքացիներին հայկական մշակույթը<sup>26</sup>:

Միևնույն ժամանակ խիստ կարևոր է հայ-իրանական մշակութային հարաբերությունների զարգացումը Իրանի հայ համայնքի համար, նրանք Հայաստանից եկող մշակութային յուրաքանչյուր խմբի սպասում են անհամբերությամբ: Երբեմն-

<sup>25</sup> Վերոհիշյալ գրքերի ամբողջական ցանկը տրամադրել է ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնը:

<sup>26</sup> Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանի հետ, նոյեմբերի 2, 2012 թ., Թեհրան:

երբեմն Հայաստանից Իրան գնում են մշակութային խմբեր, սակայն մեր ունեցած տվյալներով այն հիմնականում ունենում է բիզնես որակավորում: Այս տեսակետը կիսում է նաև ԻԻՀ Մեջլիսի հյուսիսային և կենտրոնական թեմից առաջադրված պատգամավոր Կարեն Խանլարյանը. «Հայաստանից շատ հազվադեպ են գալիս մշակութային խմբեր, այն էլ ազատ շուկայական սկզբունքների հիմունքով: Բայց փոխադարձը չկա, ես չեմ հիշում, որ Իրանից մեր հայ երիտասարդական մշակութային խմբերը մեկնեն Հայաստան և ներկայացվեն: Ես հասկանում եմ, որ որակը գիշում է, բայց դա կարող է խրախուսական քայլ դիտվել, բայց ցավոք չկա»<sup>27</sup>:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք եզրակացնել.

1. հայ-իրանական մշակութային հարաբերություններն ընթանում են բավական դանդաղ, սակայն ունեն գործուներության մեծ ներուժ,
2. ողջունելի է, որ ՀՀ մշակույթի նախարարությունը ԻԻՀ համապատասխան գերատեսչության հետ ունի համագործակցության պայմանավորվածություն միջազգային կառույցներում, որ մինչ այժմ հաջողությամբ է իրականացվել:
3. Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթը բավական բարձր մակարդակով ցուցադրվում է Հայաստանում, ինչը երբեք չի խոչընդոտում հայկական ոչ մի պետական կառույց,
4. ցանկալի կլիներ, որ ի վերջո կյանքի կոչվեր Հայաստանի մշակութային օրեր Իրանում ծրագիրը, որով մենք ըստ արժանվույն կներկայացնեինք մշակութային մեր արժեքներն իրանական կողմին՝ բնականաբար հաշվի առնելով իսլամական նորմերը: Այն կօգներ Իրանի մշակութասեր լայն հասարակությանը՝ էլ ավելի լավ ճանաչելու և հասկանալու հարևան երկրի ժողովրդին:

<sup>27</sup> Հարցազրույց ԻԻՀ-ի Մեջլիսում Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավոր Կարեն Խանլարյանի հետ, նոյեմբերի 3, 2012 թ., Թեհրան, ԻԻՀ:

## ՇԵՂԵՆԱԿՆԵՐ

### Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանային միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող: Հետազոտությունների ոլորտներն ընդգրկում են Իրանի Իսլամական Հանրապետության ներքաղաքական և արտաքին քաղաքականության հիմնախնդիրները:

### Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանային միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի ամերիկյան համալսարանի ավագ դասախոս: Զբաղվում է Թուրքիայի նորագույն պատմության և տարածաշրջանային անվտանգության խնդիրներով:

### Լևոն Հովսեփյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող: Ուսումնասիրությունների ոլորտներն ընդգրկում են Թուրքիայի պաշտպանության ու անվտանգության, ինչպես նաև արտաքին քաղաքական խնդիրները:

### Արծրուն Հովհաննիսյան, պ. գ. թ.

ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար, ռազմական վերլուծաբան: Զբաղվում է ռազմարվեստի պատմության և տեսության, սպառազինությունների զարգացման հարցերով, ինչպես նաև տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների ուսումնասիրությամբ:

### Նազելի Նավասարդյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող: Գիտական հետազոտությունների ոլորտներն են Իրանի նոր և նորագույն պատմության հիմնախնդիրները, ինչպես նաև Իրան-Ռուսաստան միջպետական հարաբերությունները:

### Աղավնի Հարությունյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների բաժնի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Մերձավոր Արևելքի և ասիական-խաղաղովկիստանյան տարածաշրջաններում Չինաստանի ժողովրդական Հանրապետության քաղաքականության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

### Անդրանիկ Իսրայելյան, պ. գ. թ.

Աշխատում է Հայաստանի դիվանագիտական դպրոցում: Հետաքրքրության հիմնական ոլորտն է Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ԱԶԿ-ի կառավարման շրջանում:



## AUTHORS

### **Gohar Iskandaryan, Assoc. Prof., PhD**

Senior Research Fellow of the Department for Investigation of Regional International Relations of the Middle East at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include the problems of domestic politics and foreign relations of the Islamic Republic of Iran.

### **Vahram Ter-Matevosyan, PhD**

Senior Research Fellow of the Department for Regional International Relations Studies of the Middle East at the Institute of Oriental Studies, NAS RA and a Senior Lecturer at the American University of Armenia. Main fields of his research include the modern history of Turkey and regional security issues.

### **Levon Hovsepian, PhD**

Senior Research Fellow of the Department of Turkey at the Institute of Oriental Studies, NAS RA. His research interests include the problems of defense and security sector, foreign policy of Turkey.

### **Artsrun Hovhannisyan, PhD**

Press Secretary of MoD of RA, defense analyst. The main fields of his research include the warfare and defense theories, armament technologies, regional military-political issues.

### **Aghavni Harutyunyan, PhD**

Senior Research Fellow at the Department of Eastern Asian Studies at the Institute of Oriental Studies, NAS RA. Main areas of her research include China's foreign policy in the Middle Eastern, Eurasian and Asia-Pacific regions.

### **Nazeli Navasardyan, PhD**

Research Fellow of the Department of Iran at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of her research include the modern history of Iran as well as the issues of Russian-Iranian relations.

### **Andranik Israyelyan, PhD**

He works at the Diplomatic School of Armenia. Main field of his interest is the issues of Turkish foreign policy under AKP.

## АВТОРЫ

### **Гоар Искандарян, к. и. н., доцент**

Старший научный сотрудник отдела Исследований региональных международных отношений Ближнего Востока Института востоковедения НАН РА. Сфера исследований – внутренние и внешнеполитические проблемы Исламской Республики Иран.

### **Ваграм Тер-Матевосян, к. и. н.**

Старший научный сотрудник отдела Исследований региональных международных отношений Ближнего Востока Института востоковедения НАН РА и преподаватель Американского университета Армении. Занимается изучением новейшей истории Турции и вопросами региональной безопасности.

### **Левон Овсепян, к. и. н.**

Старший научный сотрудник отдела Турции Института востоковедения НАН РА. Область исследований включает вопросы обороны и безопасности, а также внешнеполитические проблемы Турции.

### **Артсрун Оганесян, к. и. н.**

Пресс-секретарь МО РА, военный аналитик. Занимается вопросами военного искусства, военной теории и развития военной техники, изучает региональные военно-политические процессы.

### **Назели Навасардян, к.и.н.**

Научный сотрудник отдела Ирана Института востоковедения НАН РА. Занимается изучением новой и новейшей истории Ирана, а также вопросами российско-иранских отношений.

### **Агавни Арутюнян, к. и. н.**

Научный сотрудник отдела Стран Восточной Азии Института востоковедения НАН РА. Изучает вопросы политики КНР в ближневосточном и азиатско-тихоокеанском регионах, занимается изучением новой и современной истории КНР.

### **Андраник Израелян, к.и.н.**

Работает в Дипломатической школе Армении. Основная сфера научных интересов-внешнеполитические вопросы Турции в период правления Партии Справедливости и Развития.

G  
S  
I  
R  
N  
P  
  
V  
S  
R  
R  
o  
i  
  
L  
S  
C  
C  
  
J  
I  
r  
r  
  
:

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ**

**ԹՈՒՐՔԻԱ-ԻՐԱՆ  
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

**ՀԱՏՈՐ IV (1)**

**Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ**

Հրատ. պատվեր № 666  
Ստորագրված է տպագրության՝ 18.12.2015թ.:  
Չափսը՝ 60 x 100 <sup>1</sup>/<sub>16</sub>, տպագր. 7 մամուլ;  
Տպաքանակը՝ 200 օրինակ:

«ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղդամյան պող. 24: